РЕГИОН И МИР

научно-аналитический журнал

том X, № 1, 2019

Журнал включен в реестр научных периодических изданий Высшей аттестационной комиссии Республики Армения и в базу данных Российского индекса научного цитирования (РИНЦ)

ИПСИЧКР

Общественный институт политических
и социальных исследований
Черноморско-Каспийского региона

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ

գիտավերլուծական հանդես
հատոր X, № 1, 2019

REGION AND THE WORLD

scientific-analytical journal
volume X, № 1, 2019

Սեվծովյան-Կասպյան տարածաշրջանի քաղաքական
եվ սոցիալական հետազոտությունների հանրային ինստիտուտ
Public Institute of Political and Social Research
of Blacksea-Caspian Region

РЕГИОН И МИР

научно-аналитический журнал

Редакционный совет:

Андриасян Л.Г. (главный редактор), Погосян Г.Г. (зам. главного редактора), Царукян Ж.А. (ответственный секретарь), Андриасян Т.Л., Ваградян М.Г., Исагулян Г.С., Манукян С.Ф., Меликсетян А.Ф., Паносян Н.Ж., Саргсян С.Т., Шакарянц С.Э.

Редакционная коллегия:

Аветисян Г.Г. (д.и.н., профессор, Ереванский государственный университет, Армения), Айвазян А.М. (д.п.н., Центр стратегических исследований “Арарат”, Армения), Арцруни В.Б. (Концерн ISD, Россия), Григорян Э.Р. (д.ф.н., профессор, Армянский государственный педагогический университет, Армения), Демоян Г.А. (д.и.н., Армения), Дюбьен А. (Франко-российский аналитический центр “Обсерво”, Франция), Захаров В.А. (к.и.н., Институт политических и социальных исследований Черноморско-Каспийского региона, Россия), Золян С.Т. (д.ф.н., профессор, Армения), Кожокин Е.М. (д.и.н., профессор, Московский государственный институт международных отношений – университет, Россия), Корнилов А.А. (д.и.н., профессор, Нижегородский государственный университет им. Н.И. Лобачевского, Россия), Кочарян Ш.М. (Министерство иностранных дел, Армения), Мелконян А.А. (д.и.н., профессор, академик НАН РА, Институт истории НАН РА, Армения), Надеин-Раевский В.А. (к.ф.н., Институт политических и социальных отношений Черноморско-Каспийского региона, Россия), Нан С.А. (д.п.н., профессор, Университет им. Дж. Мейсона, США), Папян А.А (Центр социологических исследований “Modus Vivendi”, Армения), Петросян Г.М. (Нагорно-Карабахская Республика), Решетников Л.П. (к.и.н., председатель наблюдательного совета телекомпании “Царьград”, Россия), Сваранц А.А. (д.п.н., Россия), Шалян Ж. (Центр анализа и прогнозов Министерства иностранных дел, Франция)

Адрес редакции:РА, Ереван, 3 пр. Тиграна Меца, д. 9,

Тел. (+37493) 944440, (+37493) 868797,

Сайт: www.geopolitika.am; эл.почта: blacksea-caspian@mail.ru

ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ ԵՎ ԱՇԽԱՐՀ

գիտավերլուծական հանդես

Խմբագրական խորհուրդ՝

Անդրիասյան Լ.Հ. /գլխավոր խմբագիր/, Պողոսյան Գ.Հ. /գլխ. խմբագրի տեղակալ/, Ծառուկյան Ժ.Ա. /պատասխանատու քարտուղար/, Անդրիասյան Թ.Լ., Վահրադյան Մ.Գ., Իսագուլյան Գ.Ս., Մանուկյան Ս.Ֆ., Մելիքսեթյան Ա.Ֆ., Փանոսյան Ն.Ժ., Սարգսյան Ս.Թ., Շաքարյանց Ս.Է.

Խմբագրական կոլեգիա՝

Ավետիսյան Հ.Գ. /պ.գ.դ., պրոֆեսոր, Երևանի պետական համալսարան, Հայաստան/, Այվազյան Ա.Մ. /ք.գ.դ., «Արարատ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն, Հայաստան/, Արծրունի Վ.Բ. /ISD կոնցեռն, Ռուսաստան/, Գրիգորյան Է.Ռ. /փ.գ.դ., պրոֆեսոր, Հայաստանի պետական մանկավարժական համալսարան, Հայաստան/, Դեմոյան Հ.Ա. /պ.գ.դ., Հայաստան/, Դյուբյեն Ա. /«Օբսեռվո» ֆրանկո-ռուսական վերլուծական կենտրոն, Ֆրանսիա/, Զախարով Վ.Ա. /պ.գ.թ., Սևծով-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ, Ռուսաստան/, Զոլյան Ս.Տ. /բ.գ.դ., պրոֆեսոր, Հայաստան/, Կոժոկին Ե.Մ. /պ.գ.դ., պրոֆեսոր, Միջազգային հարաբերությունների Մոսկովյան պետական ինստիտուտ-համալսարան, Ռուսաստան/, Կորնիլով Ա.Ա. /Ն.Ի. Լոբաչևսկու անվ. Նիժնի Նովգորոդի պետական համալսարան, Ռուսաստան/, Քոչարյան Շ.Մ. /Արտաքին գործերի նախարարություն, Հայաստան/, Մելքոնյան Ա.Ա. /պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, Հայաստան/, Նադեին-Ռաևսկի Վ.Ա. /փ.գ.թ., Սևծով-Կասպյան տարածաշրջանի քաղաքական և սոցիալական հետազոտությունների ինստիտուտ, Ռուսաստան/, Նան Ս.Ա. /ք.գ.դ., պրոֆեսոր, Ջ. Մեյսոնի անվ. համալսարան, ԱՄՆ/, Պապյան Ա.Ա. /«Modus Vivendi» սոցիոլոգիական հետազոտությունների կենտրոն, Հայաստան, Պետրոսյան Գ.Մ. /Լեռնային ղարաբաղի Հանրապետություն/, Ռեշետնիկով Լ.Պ. /պ.գ.թ., «Ցարգրադ» հեռուստաընկերության դիտորդական խորհրդի նախագահ, Ռուսաստան/, Սվարանց Ա.Ա. /ք.գ.դ., Ռուսաստան/, Շալյան Ժ. /Արտաքին գործերի նախարարության Վերլուծության և կանխատեսման կենտրոն, Ֆրանսիա/

Խմբագրության հասցեն՝ ՀՀ, Երևան, Տիգրան Մեծի 3-րդ նրբ, տ. 9

Հեռ. (+37493) 944440, (+37493) 868797,

Կայք՝ www.geopolitika.am, էլ.փոստ՝ blacksea-caspian@mail.ru

REGION AND THE WORLD
scientific-analytical journal

Editorial council:
Andriasyan L.H. **(**Editor-in-chief), Poghosyan G.H. (Vice-editor), Tsarukyan J.A. (Responsible secretary), Andriasyan T.L., Vahradyan M.G., Isagulyan G.S., Manukyan S.F., Meliksetyan A.F., Panosyan N.J., Sargsyan S.T., Shakaryants S.E.
Editorial team:
Avetisyan H.G. (Doctor of Historical Sciences, professor, Yerevan State University, Armenia), Ayvazyan A.M. (Doctor of Political Sciences, Center of Strategic Research "Ararat", Armenia), Artsruni V.B. (Concern ISD, Russia), Grigoryan E.R. (Doctor of Philosophical Sciences, professor, Armenian State Pedagogic University, Armenia), Demoyan H.A. (Doctor of Historical Sciences, Armenia), Dubien A. (Observatoire franco-russe, France), Zakharov V.A. (Candidate of Historical Sciences, Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region, Russia), Zolyan S.T. (Doctor of Philology, Armenia), Kojokin E.M. (Doctor of Historical Sciences, professor, MGIMO-University, Russia), Kornilov A.A. (Doctor of Historical Sciences, professor, Lobachevsky University of Nijny Novgorod, Russia), Kocharyan Sh.M. (Ministry of Foreign Affairs, Armenia), Melkonyan A.A. (Doctor of Historical Sciences, professor, Academician of NAA RA, Institute of History, Armenia), Nadein-Raevsky V.A. (candidate of Philosophical Sciences, Institute of Political and Social Research of Blacksea-Caspian Region, Russia), Nan S.A. (Doctor of Political Sciences, professor, George Mayson University, USA), Papyan A.A. (Modus Vivendi Center, Armenia), Petrosyan G.M. (Nagorno-Karabakh Rebublic), Reshetnikov L.P. (Candidate of Historical Sciences, Chairman of the Supervisory Board of "Tsargrad" TV Station, Russia), Svarants A.A. (Doctor of Political Sciences, Russia), Chaliand G. (Center for Analysis and Forecasts of the Ministry of Foreign Affairs, France)

Adress: RA, Yerevan, 3rd line of Tigran Mets, 9
Phone: (+37493) 944440, (+37493) 868797,
Website: geopolitika.am; e-mail: blacksea-caspian@mail.ru

Для перепечатки или перевода опубликованных в журнале материалов необходимо разрешение редакции.
Публикуемые материалы могут не отражать точку зрения редакции.

ПОЛИТИКА

Նեոազատականության զարգացման միտումները ռուսական քաղաքական դիսկուրսում 1990-2000-ական թթ-ին

Ռուխկյան Լ. Մ.
Հայ-Ռուսական համալսարան (Հայաստան, Երևան),
levonrukhkyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ նեոլիբերալիզմ, Ռուսաստան, հայեցակարգ, ֆինանսական ճգնաժամ, մոդեռնիզացիա

Тенденции развития неолиберализма в российском политическом дискурсе 1990-2000-ых годов

Рухкян Л. М.
Российско-Армянский университет (Армения, Ереван)
levonrukhkyan@gmail.com

Резюме: Таким образом, можно сказать, что неолиберализм проявился не только в западных странах, но и частично в России в контексте историко-политического процесса. Ориентация на «чистый либерализм» или на радикальный либерализм, не принимая во внимание все изменения, сделанные в либерализме в 1990-х годах, в России принес совершенно иные противоречивые последствия.
Ключевые слова: неолиберализм, Россия, концепция, финансовый кризис, модернизация

Trends of the Neoliberalism Development in the Russian Political Discourse of 1990-2000th Years

Rukhkyan L. M.
Russian-Armenian University (Yerevan, Armenia)
levonrukhkyan@gmail.com

Abstract: Thus, it can be said that neoliberalism manifested itself not only in Western countries, but also partially in Russia in the context of the historical and political process. The orientation towards “pure liberalism” or radical liberalism, without taking into account all the changes made in liberalism in the 1990s, in Russia had completely different contradictory consequences.
Keywords: Neoliberalizm, Russia, concept, financial crisis, modernization

Հասարակական-քաղաքական մտքի սինթեզի առավել ճյուղավորված համադրությունը հաստատվեց 20-րդ դարի վերջում և մինչ օրս աշխարհի մի շարք երկրներում շարունակում է արդիական մնալ: Մեր կարծիքով, Ռուսաստանի նորագույն պատմության մեջ ևս, սկսած հետխորհրդային ժամանակաշրջանից, կատարվող փոփոխությունների, քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգերի էվոլուցիայի մասին հարցը շարունակվում է մնալ արդիական և հետաքրքրություն է առաջացնում հետազոտողների, հասարակական գործիչների մոտ: Գաղտնիք չէ, որ իրենց լիբերալ համարող ռուս ռեֆորմատորները իրենց գործունեության մեջ կողմնորոշված էին դեպի Արևմուտքի երկրները: Հետևաբար, Ռուսաստանում կատարվող բարեփոխումները այս կամ այն քաղաքական ավանդույթին վերագրելու համար անհրաժեշտ է Արևմուտքի երկրների համար տալ նեոլիբերալ ուղղության բնութագիրը: Արևմուտքի երկրների համար ընդհանուր համարվող նեոլիբերալիզմի պատմաքաղաքական բնութագրիչները հետևյալ դրույթներն են. Առաջին հերթին, նեոլիբերալիզմը մի փոքր այլ կերպ է մեկնաբանում մասնավոր սեփականությունը: Սեփականության նեոլիբերալ (նաև անվանում են լիբերալ-սոցիալական) տեսությունը մատնանշում է երկու կողմերի՝ մասնավոր և հասարակական, կողմերի առկայություն՝ «ոչ մի մասնավոր սեփականություն չի կարող համարվել «մաքուր» և «բացարձակ», քանի որ հասարակությունը և նրա շերտերը տարբեր միջոցներով մասնակցում են դրա ստեղծ-

մանը, բազմապատկմանը, պաշտպանությանը»[1]:

Սոցիալիզմի և լիբերալիզմի փոխազդեցությունը հանգեցրեց տնտեսական և սոցիալական ոլորտներում պետության միջամտության արդյունավետության ընդունմանը, սոցիալիստների կողմից արմատական բարեփոխումներից հրաժարմանը: Ինչպես նշում է Շ. Մայոնդելսոլը. «Ճգնաժամից ճգնաժամ լիբերալիզմը իր նախաձեռնությամբ իրականացնում է ազգայնացում, քանի որ յուրաքանչյուր տնտեսական և սոցիալական ճգնաժամ, յուրաքանչյուր արտասովոր քայլ պահանջում է պետության էլ ավելի եռանդուն միջամտություն: Լիբերալիզմը կանոնակարգում է աշխատավարձերը, իսկ որոշ դեպքերում նույնիսկ գները՝ սահմանափակելով առաջարկ-պահանջարկ կանոնի գործառնությունը»[2] :

Մեր կարծիքով, հենց այս բնորոշումն է արտահայտում լիբերալիզմի և նեոլիբերալիզմի միջև սկզբունքային տարբերությունը: Նեոլիբերալիզմում, ի հակակշիռ լիբերալիզմի, հիմնական շեշտը դրվում է պետության ակտիվ դերի վրա և համարվում է,որ հասարակական կյանքում պետական ներկայությունը ոչ մի կերպ չի նվազեցնում լիբերալ ազատությունները: Այսպիսով, կարելի է եզրակացություն անել, որ նեոլիբերալ ուղղության համար բնորոշ է հասարակական կյանքի շատ բնագավառներում պետության ներկայությունը, այլ ոչ թե նրա դերի հնարավորինս նվազեցումը: Իր քաղաքացիների հնարավորությունների հավասարեցման գործում պետության մասնակցությունը կարող է հիմք հանդիսանալ միջին դասի ձևավորման համար, որի առկայությունը ապացուցում է հասարակության կայուն զարգացումը: Մեր կարծիքով, առավել արդիական է համարվում ժամանակակից Ռուսաստանում վերափոխումների, դրանց բնույթի և էության, ինչպես նաև հասարակական կարգի վերափոխման արևմտյան տարբերակների հետ հարաբերակցության հարցը: Նշված խնդրի նկատմամբ հետաքրքրությունը պայմանավորված է նաև նրանով, որ նորագույն Ռուսաստանի պատմաքաղաքական զարգացման ուղեգիծը դեռևս չի ստացել հիմնարար գնահատական ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան հետազոտողների շրջանում: 1990-ական թթ. սկզբում տեղի ունեցած իրադարձությունները և դրանց հետագա զարգացումը հակասական մեկնաբանություն են ստանում տարբեր տեսությունների և հետազոտողների կողմից, հարց է առաջանում՝ որ առանցքում է տեղի ունենում երկրի ժամանակակից զարգացումը: Որպեսզի որոշվի Ռուսաստանի նորագույն պատմության մեջ բարեփոխումների զարգացման ուղեգիծը և այն համադրվի այս կամ այն քաղաքական ավանդույթի հետ, անհրաժեշտ է համարվում դիտարկել դրանց զարգացումը 1990-ական թթ. սկզբից, առանձնացնել վերափոխումների հիմնական ոլորտները: Հետազոտողներն առանձնացնում են 1990-ական թթ. սկզբում ռուսական կառավարության կողմից տնտեսական բարեփոխումների անցկացման երկու հիմնական հայեցակարգեր՝ գերլիբերալ (Գայդար-Չուբայս) և սոցիալական գործընկերության (Շատալին, Յավլինսկի)[3]: Արդյունքում ընտրվեց առաջին հայեցակարգը: Բարեփոխումների հետագա իրադարձությունների ընթացքը կապված էր հետևալ իրադարձությունների հետ. Գայդարի կառավարությունը մենաշնորհներին ազատեց պետական ներկայությունից, որի հետևանքով երկրում տեղի ունեցավ հիպերինֆլյացիա, երբ մեկ տարվա ընթացքում ժողովրդական սպառման հիմնական մթերքների գներն էականորեն բարձրացան՝ ձուն՝ 1900 տոկոսով, օճառը՝ 3100 տոկոսով, ծխախոտը՝ 3600 տոկոսով, հացը՝ 4300 տոկոսով, կաթը՝ 4800 տոկոսով[4] :

Այս ամենի մեջ կարելի է տեսնել հակասություն շուկայական հարաբերությունների կառուցման ցանկության և վարած քաղաքականության միջև՝ արտաքուստ ժողովրդական սպառման ապրանքների գնագոյացման հարցում մենաշնորհների բացահայտ դերը, բայց մենաշնորհների բացահայտ առկայությունը չի համարվում սև շուկայական տնտեսություն: Հետագայում բարեփոխումների ընթացքը սոցիալ-տնտեսական ոլորտում էական փոփո-

[1] Шмелев Д.В. Неолиберализм Валери Жискар д'Эстена: теория и внутриполитическая практика (1974-1981): дис. … к-та ист. наук / Д.В. Шмелев. - Казань, 2001,էջ 20

[2] Мийон-Дельсоль Ш. Политические идеи XX века / Ш. Мийон-Дельсоль. М., 1995.էջ 195.

[3] Ушанов П.В. Взаимовлияние либеральной периодической печати и идеологии в России в конце XX - начале XXI вв.: дис. … к-та полит. наук / П.В. Ушанов. – Владивосток, 2004. էջ 78

[4] Российский статистический ежегодник. М. 1997, էջ 554

խությունների չենթարկվեց: Ընդհանուր առմամբ, այս ծրագրի դրույթների բովանդակությունը հանգեցնում է հետևյալ բնորոշումներին՝ խանութների ցուցափեղկերը լիուլի էին, բայց դրանց գները թույլ չէին տալիս շարքային քաղաքացուն ձեռքբերել դրանք: Քաղաքական ազատության դիմաց քաղաքացիներն իրենց վրա վերցրեցին նոր տնտեսական պարտավորություններ, այնպիսիք, ինչպիսիք են, օրինակ կոմունալ ծախսերի հսկայական բարձրացումը (բոլոր եվրոպական երկրներում և ԱՄՆ-ում կոմունալ ծառայությունները բնավ էժան չեն համարվում): Սրանից ելնելով՝ նախկինում չնչին համարվող վճարումները սկսեցին կազմել ռուս քաղաքացիների ծախսերի զգալի մասը, բայց դրա դիմաց պետությունը տրամադրեց նրանց մի շարք քաղաքական ազատություններ՝ խոսքի և խղճի, դավանանքի, ժողովների, տարբեր միավորումների մեջ համախմբվելու և այլ ազատություններ: Այստեղ իմաստ կա ներկայացնել այն սկզբունքները, որոնց վրա հիմնված էր մինչև 1997թ. Ռուսաստանի լիբերալ բարեփոխումների քաղաքականությունը: Կհամաձայնենք Պ.Վ. Ուշանովի կարծիքի հետ[5], այդ սկզբունքներն էին՝ տնտեսության մեջ մաքուր լիբերալիզմի կամ այլ կերպ ասած, «վայրի կապիտալիզմի» նկատմամբ հակվածություն, քաղաքականության մեջ՝ անսկզբունքայնություն, գլխավոր նպատակը՝ պահպանել իշխանությունը, սոցիալական քաղաքականության բնագավառում իշխանությունը ձգտում էր ազատվել սոցիալական պատասխանատվությունից:

20-րդ դարի վերջում Ռուսաստանում տեղի ունեցած վերափոխումների էության իմաստավորման վերաբերյալ հայտնի տնտեսագետներ Ի.Վ. Ստարոդուբովսկին և Վ.Ա. Մաուն առաջարկեցին դրանք դիտարկել սոցիալ-քաղաքական հեղափոխությունների տեսությունների դիտանկյունից: Իրենց աշխատության մեջ հեղինակներն ապացուցում են, որ 20-րդ դարի վերջում «Ռուսաստանում տեղի ունեցավ լայնամասշտաբ բուրժուական լիբերալ-ժողովրդավարական հեղափոխություն, որն ուղղված էր երկրի զարգացումն արգելակող ավտորիտար-բյուրոկրատական վարչակարգի դեմ»[6]: Նրանց կարծիքով, այս հեղափոխությանը բնորոշ էին այն նույն գործընթացները, որոնք բնութագրական էին այլ խոշոր հեղափոխություններին՝ 1) որպես հեղափոխության ելակետային կետ՝ պետականության և իշխանության ճգնաժամ, 2) հասարակական-քաղաքական կարգի արմատական փոփոխություն 3) սեփականության վերաբաժանում և ամբողջ այդ ինստիտուտի արմատական փոփոխություններ, 4) «հեղափոխական տնտեսական շրջապտույտ», այսինքն, ֆինանսական ճգնաժամ, դրամական համակարգի ճգնաժամ և այլն, 5) ամբողջ հեղափոխական իրադարձությունների ընթացքում իշխանության թուլություն, իրադրությունը վերահսկելու և հասարակությունը համախմբելու անկարողություն 6) տարերային սոցիալական գործընթացների կտրուկ սրացում, զանգվածների արմատականացում, հասարակության բևեռացում և շերտավորում: Հեղինակները նշում են, որ 20-րդ դ. Ռուսական հեղափոխությունը, իր հիմնական բնորոշիչներով նման լինելով անցյալի հեղափոխություններին, այնուամենայնիվ, ուներ իր առանձնահատկությունները: Չնայած 1991թ. Օգոստոսին և 1993թ. Հոկտեմբերին տեղի ունեցած ուժային հակամարտություններին, բռնի գործողությունների դերը և ծավալներն էականորեն փոքր էին: «Ռուսական հեղափոխությունը չէր ուղեկցվում բնակչության նկատմամբ տարերային հարձակումների տեսքով զանգվածային բռնությամբ»[7]:

1990-ական – 2000-ական թթ. հրապարակումներում հետազոտողները հաճախ առանձնացնում էին հետխորհրդային Ռուսաստանի սոցիալական զարգացման հիմնական մի քանի առանձնահատկություններ.

1. Սոցիալական փոփոխություններն ընթանում էին այնպիսի խոշոր գործընթացների փոխազդեցության ներքո, ինչպիսիք են, տնտեսության կառուցվածքային վերափոխումը, մասնավոր հատվածի զարգացումը և տնտեսական ճգնաժամը: Համարվում է, որ սա

---

[5] Ушанов П.В. Взаимовлияние либеральной периодической печати и идеологии в России в конце XX - начале XXI вв.: дис. … к-та полит. наук / П.В. Ушанов. – Владивосток, 2004. էջ 85

[6] Стародубовская И.В., Мау В.А. Великие революции. От Кромвеля до Путина / И.В. Стародубовская, В.А. Мау. - М., 2001, էջ 171

[7] Стародубовская И.В., Мау В.А. Великие революции. От Кромвеля до Путина / И.В. Стародубовская, В.А. Мау. - М., 2001, էջ 173

այս շրջանի հիմնական առանձնահատկությունն է:

2. Սոցիալական գործընթացներն ընթանում էին տարբերայնորեն և առանձնանում էին իրենց անկայունությամբ: Ռուսաստանում առավել, քան այլ երկրներում, այս գիծն իր արտացոլումը գտավ, որը, ըստ երևույթին, կապված էր մոդեռնիզացիայի հետ:

3. Տեղի էր ունենում ավանդական դասային-խմբային ընդհանրությունների տարրալուծում և նոր հասարակական խմբերի ձևավորում, որոնց բնորոշ էին անկայունությունը, սոցիալական դիրքի երերությունը, առաջացան միջանկյալ, մարգինալ, դժվարությամբ նույնականացվող խմբեր: Այս ամենի հետևանքով ժամանակակից Ռուսաստանում քաղաքական կուսակցությունները ներկայացնում էին անկայուն ծրագրեր:

4. Նկատվում էր հասարակության ապաինտեգրացման խիստ արտահայտված հակում, տեղի էր ունենում շահերի սոցիալական ընդհանրության և համընդհանուր սոցիալական վերահսկողության թուլացում: 1990-ական թթ. դա արտահայտվում էր ապօրինի գործողությունների և կազմակերպված հանցավոր խմբերի որակական և քանակական աճով:

5. Սոցիալական զարգացման հիմնական տենդենցներն էին սոցիալական բևեռացման զգալի աճը, երկբևեռ տարանջատումը՝ «հարուստների» և «աղքատների», աղքատության սահմանների ընդլայնումը, լյումպենիզացիան և «սոցիալական հատակի» մեծացումը: Հասարակության այսպիսի արտահայտված տարանջատումը, մեր կարծիքով, չէր կարող հիմք հանդիսանալ բարեփոխումներից զոհ նոր սոցիալական խավի շրջանակներում նրա կոնսոլիդացիայի համար:

6. Սոցիալական շերտավորման չափորոշիչների շարքում որոշիչ նշանակություն ձեռք բերեցին հարստության, սեփականության և եկամտի չափորոշիչները, իսկ մասնագիտական որակավորումը և մշակութային բնութագրիչները փաստացիորեն չէին ազդում ռուսաստանցիների հիմնական մասի կարգավիճակի և եկամուտների վրա: Սա էլ, իր հերթին, հանգեցրեց հասարակության մեջ դաստիարակության և մշակույթի ճգնաժամի, արժեքների փոփոխության:

Այսպիսով, անցկացված հետազոտությունների մեծամասնությունն ընդունում է 20-րդ դ. Վերջում տեղի ունեցած իրադարձությունների որոշակի «հեղափոխականությունը» և ածանցյալ լինելու փաստը, այսինքն,առկա էր հասարակության սոցիալական տարանջատվածություն, որը կարող էր վկայել միջին դասի՝ որպես պետական վարչակարգի զարգացման համար հուսալի հենքի, բացակայության մասին:

Աշխատանքի այս հատվածի շրջանակներում անհրաժեշտ է համարվում դիտարկել մի քանի փաստաթղթեր, որոնք կօգնեն որոշել կատարված վերափոխումների բնույթը: 1999 թ., պայմանավորված Պետական Դումայի պատգամավորների կողմից նախագահ Բ.Ն. Ելցինի՝ ծանր հանցագործություններ կատարած լինելու պատճառով պաշտոնավարման դադարեցման պահանջի առաջքաշմամբ, ստեղծվեց Ռուսաստանի Դաշնության Համադաշնային ժողովի Պետական Դումայի Հատուկ հանձնաժողով, որը պետք է գնահատական տար, թե որքանով է հիմնավորված ՌԴ նախագահի դեմ հարուցված մեղադրանքները և որքանով են պահպանվում գործընթացային կանոնները: Բացի քաղաքական հանցագործություններից՝ պետական դավաճանություն, պետական հեղաշրջում և Չեչնիայում ռազմական գործողությունների իրականացում, նախագահին նաև վերագրում էին բարեփոխումների ուղղվածության վերաբերյալ տնտեսական բնույթի մեղադրանքներ: «Ընդհանուր առմամբ, դրանք [բարեփոխումները] Ռուսաստանին հասցրին սոցիալ-տնտեսական ճգնաժամի, որը պայմանավորված էր համազգային տնտեսության հիմնական ճյուղերի փլուզմամբ, հասարակության ուժգնացող շերտավորմամբ, երկրի անվտանգության կորստով, բնակչության կենսամակարդակի կտրուկ իջեցմամբ և թվաքանակի կորստով»[8] :

Փաստաթղթում ներկայացվում է նաև սոցիալ-տնտեսական բնութագրիչ, որը վկա-

[8] Обоснование постановки вопроса об отрешении Президента Российской Федерации Б.Н. Ельцина от должности в связи с совершением им тяжких преступлений // Сборник документов и материалов Специальной комиссии Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по оценке соблюдения процедурных правил и фактической обоснованности обвинения, выдвинутого против Президента Российской Федерации, и их рассмотрения Государственной Думой 13-15 мая 1999 года. – М.: Издание Государственной Думы, 1999 էջ 43-47

յում է ռուս բնակչության հիմնական մասի նյութական դիրքի կտրուկ վատթարացման մասին: Այսպես, 1998 թ., պաշտոնական տվյալներով, 32,1 մլն մարդ ուներ ապրուստի համար անհրաժեշտ նվազագույնից ցածր միջոցներ, աղքատության մակարդակը Ռուսաստանում 1990թ. հետ համեմատած ավելացել էր 14-16 անգամ: Հաշվի առնելով սննդամթերքի, կոմունալ ծառայությունների, կապի, փոխադրամիջոցների գների աճը՝ Ռուսաստանի Դաշնությունում 70-80 մլն քաղաքացի հայտնվել էին աղքատության շեմին: Պետական վիճակագրության տվյալների համաձայն, գործազուրկների թիվը հասնում էր 6 մլն-ի ,որը կազմում էր երկրի տնտեսապես ակտիվ բնակչության շուրջ 10 տոկոսը: Այս պայմաններում ահռելի թվերի է հասնում նաև մահացության մակարդակը, 1992-1997 թթ. կորուստը կազմել է գրեթե 4,2 մլն. մարդ: Ռուսաստանի ընդհանուր ժողովրդագրական կորուստները, հաշվի առնելով կյանքի անբարենպաստ պայմաններում ծնվածների և մահացածների հարաբերակցությունը, կազմել է ավելի քան 8 մլն. մարդ: Վատթարացել էին նաև բնակարանային պայմանները: Խորանարդ մետրերով հաշված վարձակալության տրված բնակելի տարածքների քանակը 1990 - 1997 թթ. միջև ընկած ժամանակաշրջանում նվազել է 4,2 անգամ, իսկ իրենց բնակարանային պայմաններ բարելաված ընտանիքների թիվը նվազել է 2,7 անգամ: Վերոնշյալ փաստերը Հանձնաժողովին հիմք տվեցին համարել, որ «Նախագահ Բ.Ն. Ելցինի կողմից կատարվել են Ռ.Դ. Քրեական օրենսգրքի 357 հոդվածով նախատեսված հանցագործություններ, որը պատասխանատվության է հանգեցնում «այն գործողությունների համար,որոնք ուղղված են ազգային որևէ խմբի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը՝ տվյալ խմբի ֆիզիկական ոչնչացմանը հանգեցնող կենսապայմանների ստեղծման միջոցով» (ցեղասպանություն)»:

Բացի այդ, Ռուսաստանի Դաշնության Համադաշնային ժողովի Պետական դումայի Հատուկ հանձնաժողովի կողմից ընդունվեց այն փաստը,որ Ռ.Դ. Նախագահ Բ.Ն. Ելցինի գործողություններում առկա են բավարար տվյալներ, որ ապացուցում են ծանր հանցագործությունների առկայությունը: Մասնավորապես դրանք կապված են Բելովեժյան համաձայնագրի մշակման և իրագործման, Մոսկվայում 1993թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին կատարված իրադարձությունների, Չեչնիայի հանրապետության տարածքում իրականացրած ռազմական գործողությունների, այնպիսի արարքների իրագործման հետ, որոնք բերեցին Ռ.Դ. անվտանգության և պաշտպանության թուլացման, ինչպես նաև այնպիսի գործողությունների կատարման հետ,որոնք հանգեցրին ռուս ազգի գենոցիդի[9]: Վերը թվարկածից ելնելով, 1990-կան թթ. կատարված վերափոխումները ամբողջությամբ նեոլիբերալ չի կարելի անվանել: Ծայրահեղ դեպքում, նեոլիբերալ տեսանկյունից, կարելի է դիտարկել միայն քաղաքական ոլորտում տարաբնույթ ազատությունների հռչակումը, սակայն երկրի սոցիալ-քաղաքական գործունեության և իրավիճակի ամբողջության մեջ դրանց հռչակումը ոչ մի իրական օգուտ չտվեց նյութական բարեկեցության տեսանկյունից, իսկ հոգևոր բնագավառում կան շատ վիճելի պահեր: Ռ.Դ. նոր նախագահ Վ.Վ. Պուտինի իշխանության գալուց հետո ռուսական հասարակայնությունը նրա կողմից ակնկալում էր հստակ և միանշանակ ինքնորոշում՝ արդյոք կդառնա տնտեսության ապապետականացման և ապաբյուրոկրատացման կուրսի երաշխավորը և կստեղծի պայմաններ ինքնուրույն գործունեության ազատության աջակցման համար, թե կվերականգնի պետու-

[9] Заключение об оценке фактической обоснованности обвинения, выдвинутого против президента Российской Федерации в связи с подготовкой, заключением и реализацией им Беловежских соглашений; Заключение об оценке фактической обоснованности обвинения, выдвинутого против президента Российской Федерации в связи с событиями сентября - октября 1993 года в Москве; Заключение об оценке фактической обоснованности обвинения, выдвинутого против президента Российской Федерации в связи с военными действиями на территории Чеченской Республики; Заключение об оценке фактической обоснованности обвинения, выдвинутого против президента Российской Федерации в связи с совершением им действий, приведших к ослаблению обороноспособности и безопасности Российской Федерации; Заключение об оценке фактической обоснованности обвинения, выдвинутого против президента Российской Федерации в связи с совершением им действий, приведших к геноциду российского народа // Сборник документов и материалов Специальной комиссии Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по оценке соблюдения процедурных правил и фактической обоснованности обвинения, выдвинутого против Президента Российской Федерации, и их рассмотрения Государственной Думой 13-15 мая 1999 года. – М.: ИзданиеГосударственнойДумы, 1999.–էջ 633-635,639-641,645-649,650-654,656-663

թյան նախկին դերն ու նշանակությունը քաղաքացիների կյանքում:

Ռ.Դ. Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալի կարծիքով, հենց «ազգի խնայումը»[10] կարող է դառնալ համալրման միջոց և նպատակ, քաղաքական համակարգի, սոցիալ-տնտեսական հարաբերությունների մարդակենտրոնացման ծրագիր, յուրաքանչյուր անձի արժանապատվության, առողջության, ունեցվածքի նկատմամբ խնամքով մոտեցման հմտություն: Մեր կարծիքով, նպատակն ընդհանուր առմամբ նեոլիբերալ է: Ա.Ա. Կարա-Մուրզան առանձնացնում է երեք խնդիրներ, որոնք արդիական են անցյալ և ներկա ժամանակների լիբերալների համար՝ «Առաջինը դա ռուսական լիբերալիզմի պատմության մեջ լուսավորչականության դերն է, այսինքն հասարակական գիտակցության վրա լիբերալների ազդեցության մասին հարցը: Երկրորդը դա Ռուսաստանում լիբերալ բարեփոխումների խնդիրն է, իսկ երրորդը՝ նեոլիբերալ քաղաքականության, կուսակցական կառուցման խնդիրն է»[11]:

Համաձայնվելով Ա.Ա. Կարա-Մուրզայի կարծիքի հետ՝ կարելի է նշել, որ լիբերալ լուսավորչականության դերն իր մեջ ներառում է ահռելի ներուժ, որ ներկայումս անհրաժեշտ մակարդակով չի օգտագործվում Ռուսաստանում: Օրինակ, Եվրոպայում յուրաքանչյուր քաղաքացի վաղ տարիքից գիտի իր սահմանադրական իրավունքներն ու պարտականությունները, որոնք, թեկուզ հումորային տեսքով (օրացույցների և բացիկների վրա) հասցվում է քաղաքացիներին: Լիբերալ բարեփոխումների խնդիրը, որը բերում էր այն եզրահանգման, որ Ռուսաստանի պատմության մեջ բարեփոխումների ժամանակաշրջանին հաջորդում է հակաբարեփոխումը, մեր կարծիքով, շատ կարևոր է և պետք է լուծում տրվի ռուսական հասարակության առջև ծառացած խնդիրների գիտակցության և համախմբած քաղաքական մեծամասնության միջոցով: Այս ամենը մատնանշեց նաև Վ.Վ. Պուտինն իր ուղերձում՝ «պետք է հաստատապես ասել, որ այս շրջափուլն ավարտված է, չի լինի ոչ հեղափոխություն, ոչ հակահեղափոխություն»[12]:

Նեոլիբերալ քաղաքականության և կուսակցական շինարարության խնդիրը, մեր կարծիքով, իր լուծումը կարող է գտնել նեոլիբերալ ուղղությամբ երկարաժամկետ քաղաքական կուրսի մշակմամբ և քաղաքացիների մեծամասնության կողմից աջակցություն վայելող կայուն քաղաքական և սոցիալ-տնտեսական համակարգի ստեղծմամբ: Սրա հետ մեկտեղ իշխանության ուժեղ կենտրոնի առկայությունը և Պառլամենտում քաղաքական մեծամասնության առկայությունը չպետք է խոչընդոտների հանդիպի ժողովրդի աջակցությունը վայելող քաղաքական կուրսի իրականացման ընթացքում: Վ.Վ. Պուտինի վարած քաղաքականության գնահատման վերաբերյալ կան տարբեր հետաքրքիր կարծիքներ: Այսպես, Գորբաչովի ֆոնդի փորձագետ Վալերիյ Սոլովեյը, վերլուծելով Ռուսաստանի ներկա և ապագա լիբերալիզմի և լիբերալ կուսակցությունների խնդիրները, պնդում է, որ «իրականում ներկայիս ռուսական իշխանությունը, ի դեմս նախագահ Պուտինի, ռուսական լիբերալիզմի առավել ամբողջական մարմնավորումն է: Պետության գլուխն իրականացնում է բացարձակ լիբերալ տնտեսական քաղաքականություն, առավել լիբերալ, քան Բորիս Ելցինի քաղաքականությունն էր: Այսպիսի քաղաքականության հաջողությունը կապված է սոցիալական վերահսկողության առկայության հետ: Վլադիմիր Պուտինը փորձում է կառուցել խորհրդայինից առավել խիստ և արդյունավետ սոցիալական մեխանիզմներ: Այլ լիբերալիզմ Ռուսաստանում հնարավոր չի լինի: Դրա գոյությունը հնարավոր է կամ ինտելեկտուալ նախագծերի տեսքով, որոնք կդառնան ոչ մեծ մշակութային խմբերի ձեռքբերում, կամ էլ որպես որոշակի ֆինանսական, նյութական շահերի պաշտպանություն»[13] :

Այսպիսով, մենք գալիս ենք այն եզրակացության, որ «Միացյալ Ռուսաստան» կուսակցության քաղաքական ծրագիրն ընդհանուր

---

[10] Сурков В. Национализация будущего / В. Сурков // Эксперт. 2007. - № 2, էջ 133

[11] Российский либерализм: судьбы и перспективы («Круглый стол») // Общественные науки и современность. 2005. №6, էջ 81

[12] Послание Президента РФ В.В. Путина Федеральному Собранию Российской Федерации // Российская газета (Федеральный выпуск). 2001 г. 3 апреля.

[13] Цит. по:Шабельник В.В. Неолиберализм и неоконсерватизм в российском и зарубежном политическом дискурсе: дис. к-та полит. наук / В.В. Шабельник. – М., 2006. էջ 84

առմամբ համահունչ է այն դրույթներին, որ առաջ է քաշվել Ռ.Դ. Դաշնային Ժողովում ներկայացված Վ.Վ. Պուտինի ուղերձների մեջ:

Մեր կարծիքով, այս պլանը, ընդհանուր առմամբ, համապատասխանում է նեոլիբերալ վերափոխումների կուրսի էությանը, քանի որ հաշվի է առնում պետության դերը հասարակության կյանքի շատ բնագավառներում , տարբերվում է իր սոցիալական հստակ ուղղվածությամբ, ծայրահեղությունների չի զնում: Այստեղ, մեր կարծիքով, նկատվում է 1990-ական քաղաքական կուրսի հետ որոշակի «հաջորդականություն», բայց ոչ թե որպես նրա ուղղակի շարունակություն, այլ որպես արմատական լիբերալների «սխալների ուղղում», որը տեղի է ունենում էվոլյուցիոն ճանապարհով (էվոլյուցիան վերաբերում է նեոլիբերալ ավանդույթներին, անկախ հեղափոխության փաստից):

Գրականության և աղբյուրների ցանկ

1. Гаджиев К.С. Либерализм: история и современность / К.С. Гаджиев // Новая и новейшая история. 1995. - № 6, стр. 21
2. Мийон-Дельсоль Ш. Политические идеи XX века / Ш. Мийон-Дельсоль. М., 1995.стр. 195.
3. Послание Президента РФ В.В. Путина Федеральному Собранию Российской Федерации // Российская газета (Федеральный выпуск). 2001 г. 3 апреля
4. Послание президента РФ В.В. Путина Федеральному Собранию Российской Федерации // Российская газета (Федеральный выпуск). 2002 г. 18 апреля
5. Послание Президента РФ В.В. Путина Федеральному Собранию Российской Федерации // Российская газета (Федеральный выпуск). 2006 г. 11 мая
6. Послание Президента РФ В.В. Путина Федеральному Собранию Российской Федерации // Российская газета (Федеральный выпуск). 2001 г. 3 апреля.
7. Российский либерализм: судьбы и перспективы («Круглый стол») // Общественные науки и современность. 2005. №6, стр. 81
8. Российский статистический ежегодник. М. 1997, стр. 554
9. Сборник документов и материалов Специальной комиссии Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по оценке соблюдения процедурных правил и фактической обоснованности обвинения, выдвинутого против Президента Российской Федерации, и их рассмотрения Государственной Думой 13-15 мая 1999 года. – М.: ИзданиеГосударственнойДумы, 1999.–стр. 633-635,639-641,645-649,650-654,656-663
10. Сборник документов и материалов Специальной комиссии Государственной Думы Федерального Собрания Российской Федерации по оценке соблюдения процедурных правил и фактической обоснованности обвинения, выдвинутого против Президента Российской Федерации, и их рассмотрения Государственной Думой 13-15 мая 1999 года. – М.: Издание Государственной Думы, 1999 стр. 43-47
11. Стародубовская И.В., Мау В.А. Великие революции. От Кромвеля до Путина / И.В. Стародубовская, В.А. Мау. - М., 2001, էջ 171
12. Сурков В. Национализация будущего / В. Сурков // Эксперт. 2007, № 2, стр. 133.
13. Ушанов П.В. Взаимовлияние либеральной периодической печати и идеологии в России в конце XX - начале XXI вв.: дис. … к-та полит. наук / П.В. Ушанов. – Владивосток, 2004. Стр. 78
14. Шабельник В.В. Неолиберализм и неоконсерватизм в российском и зарубежном политическом дискурсе: дис. к-та полит. наук / В.В. Шабельник. – М., 2006. Стр. 84
15. Шмелев Д.В. Неолиберализм Валери Жискар д'Эстена: теория и внутриполитическая практика (1974-1981): дис. … к-та ист. наук / Д.В. Шмелев. - Казань, 2001, стр. 20

Փափուկ ուժի ռուսական ընկալումը և կիրառման մեխանիզմները Հարավային Կովկասում

Սարգսյան Հ. Դ.
ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբիոն (Հայաստան, Երևան)
hayk_sargsyan@outlook.com

Վճռորոշ բառեր՝ փափուկ ուժ, Ջոզեֆ Նայ, գրավչություն, արտաքին քաղաքականության հայեցակարգ, փափուկ ուժի մեխանիզմներ, բնակչություն, կրթություն, ԶԼՄ-ներ

Российское понимание мягкой силы и механизмы ее имплементации на Южном Кавказе

Саргсян А.Д.
Кафедра политических институтов и процессов факультета международных отношений ЕГУ (Армения, Ереван)
hayk_sargsyan@outlook.com

Резюме: Несмотря на то обстоятельство, что концепция "мягкой силы" получила теоретическое оформление в рамках западной политической мысли, в течение времени она стала важной составляющей во внешнеполитическом арсенале самых разных акторов геополитики. В этом смысле исключение не составляет и Россия, в социально-политических кругах которой, в частности, с начала 2000-х развернулось бурное обсуждение касательно содержания концепта и его применения. Целью настоящей статьи является изучение российского восприятия мягкой силы и анализ механизмов ее применения на примере стран Южного Кавказа.
Ключевые слова: мягкая сила, Джозеф Най, привлекательность, концепция внешней политики, механизмы мягкой силы, население, образование, СМИ

Russian perception of soft power and mechanisms of its implementation in the South Caucasus

Sargsyan H.D.
Department of Political Institutions and Processes,
Faculty of International Relations, YSU (Armenia, Yerevan)
hayk_sargsyan@outlook.com

Abstract: Despite the fact that the concept of soft power has theoretically been framed in the West, it has thereafter been incorporated into the arsenal of various geopolitical actors' foreign policy tools, with Russia being among them. The debate about the essence and applicability of the concept emerged in Russian political discourse during mid-2000s. The aim of this article is to examine the «Russian perception» of soft power and to analyze mechanisms of its implementation in South Caucasian countries.
Keywords: soft power, Joseph Nye, attraction, foreign policy doctrine, mechanisms of soft power, population, education, mass-media

«Փափուկ ուժ» տերմինը գիտական շրջանառության մեջ է մտցվել ամերիկացի քաղաքագետ Ջոզեֆ Նայի կողմից՝ 1990թ. լույս տեսած «Հարկադրված առաջնորդություն. ամերիկյան ուժի փոփոխվող բնույթը» աշխատության մեջ: Ջ. Նայը փափուկ ուժը սահմանեց որպես «ցանկալիին հասնելու ունակություն գրավչության միջոցով՝ ի հակադրություն հարկադրական միջոցների»[1]: Նրա մոտեցման հիմքում ընկած է այն գաղափարը, որ ժամանակակից աշխարհում տնտեսական, սոցիոմշակութային, ինստիտուցիոնալ, իրավական գործիքները շատ ավելի արդյունավետ են, քան ռազմական ուժը կամ ուղղակի քաղաքական/տնտեսական ճնշումը: Տերմինի հեղինակի կարծիքով, փափուկ ուժը պետությունների արտաքին քաղաքական զինանոցի 3 հիմնական բաղադրիչներից մեկն է՝ ռազմական (կոշտ) և տնտեսական ուժերի հետ մեկտեղ[2]:

[1] Տե՛ս Nye, Joseph S. Jr., "Bound to Lead: The Changing Nature of American Power".NY: Basic Books, 1990, p.7

[2] Տե՛ս Nye Joseph S. Jr., "Soft Power. The Means to Success in World Politics". First ed. New York: Public Affairs, 2004, p. 2

Տերմինի ներմուծումը, որոշակի իմաստով, խորհրդանշեց հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում միջազգային հարաբերություններում նոր՝ իրենց բնույթով ու կիրառության տիրույթով տարբերվող գործիքների և տարրերի ի հայտ գալու հանգամանքը:

Թեև փափուկ ուժի տերմինի շուրջ դիսկուրսն ի սկզբանե ծավալվել է արևմտյան քաղաքագիտական մտքի շրջանակներում, այն աստիճանաբար մուտք է գործել նաև աշխարհաքաղաքական այլ դերակատարների հասարակական-քաղաքական դիսկուրս, իսկ այնուհետև արտաքին քաղաքական զինանոց: Այդ դերակատարների շարքում է նաև Ռուսաստանը: Ժառանգելով ԽՍՀՄ ժամանակաշրջանի հսկայական տնտեսական և քաղաքական ենթակառուցվածքների զգալի մասը և միջուկային գերտերության կարգավիճակը՝ Ռուսաստանը չէր կարող անմասն մնալ արտաքին քաղաքական գործիքակազմի փոխակերպման, դրանում նմանատիպ նոր տարրերի ներմուծման գործընթացից:

Ռուսական հասարակական-քաղաքական դիսկուրսում փափուկ ուժը տերմինը հայտնըվեց 2000-ական թվականների վերջերին: Դեռևս 2008թ. ՌԴ արտգործնախարար Սերգեյ Լավրովը, հարցազրույց տալով Русская Газета օրաթերթին, նշել էր, որ «...ժամանակակից աշխարհում մեծ դերակատարություն ունի այսպես կոչված փափուկ ուժը, որը քաղաքակրթական, հումանիտար, մշակութային, արտաքին քաղաքական և գրավչության այլ մեթոդներով միջավայրի վրա ազդելու կարողությունն է: Ես կարծում եմ, որ մեր հայրենակիցների հետ կապը պետք է պահպանել հենց այս գործոնները հաշվի առնելով»[3]: Այդ ժամանակաշրջանը համընկավ ռուսական փափուկ ուժի մեխանիզմների ձևավորման գործընթացի հետ:

Պաշտոնապես փափուկ ուժ տերմինը ռուսական արտաքին քաղաքական գործիքակազմ մուտք գործեց 2013թ. ընդունված ՌԴ Արտաքին քաղաքականության հայեցակարգի ընդունմամբ: Այդ փաստաթղթում փափուկ ուժը դիտարկվում է որպես «արտաքին քաղաքական խնդիրների լուծման համալիր գործիքակազմ, որը հենվում է քաղաքացիական հասարակության, տեղեկատվական-հաղորդակցային, հումանիտար և դասական դիվանագիտությանը այլընտրանք հանդիսացող այլ մեթոդների ու տեխնոլոգիաների վրա: Միաժամանակ, համաշխարհային մրցակցության ուժեղացումը և ճգնաժամային պոտենցիալի կուտակումը առաջացնում են փափուկ ուժի ապակառուցողական և հակաիրավական օգտագործման ռիսկեր՝(...) ինքնիշխան պետությունների վրա քաղաքական ճնշում գործադրման, նրանց ներքին գործերին միջամտության, իրավիճակի ապակայունացման, հասարակական կարծիքի և գիտակցության մանիպուլյացիայի, այսպես կոչված մարդասիրական և մարդու իրավունքների պաշտպանության ծրագրերի ֆինանսավորման միջոցով»[4]: Տերմինի ամրագրումը հայեցակարգում լայն քննարկումների տեղիք տվեց ռուս քաղաքագետների և միջազգայնագետների շրջանում:

2016թ. ընդունված Արտաքին քաղաքականության նոր հայեցակարգում հասկացությանը տրված է ավելի նեղ բնորոշում, մասնավորապես՝ «ժամանակակից միջազգային հարաբերությունների անբաժան մասն է դառնում արտաքին քաղաքական խնդիրների լուծման գործում փափուկ ուժի գործիքների կիրառումը՝ առաջին հերթին քաղաքացիական հասարակության հնարավորությունները, տեղեկատվական-հաղորդակցային, հումանիտար և այլ մեթոդներն ու տեխնոլոգիաները, ի լրումն ավանդական դիվանագիտական մեթոդների»[5]:

Հիմնախնդրի հետազոտողներ Ա. Սերգունինի և Լ. Կարաբեշկինի կարծիքով, ռուսական մոտեցման մեջ գերակայում է փափուկ ուժի «ինստրումենտալ» ընկալումը, որի շրջանակներում այն դիտարկվում է որպես որոշակի քաղաքական գործիքների և մեխանիզմների ամբողջություն, որոնք կոչված են կոնկրետ շահերի սպասարկմանը[6]: Այդ ընկալման

---

[3] Տե՛ս Эксклюзивное интервью главы МИДа РФ Сергея Лаврова "Российской газете", 30.10.2008., https://rg.ru/2008/10/30/lavrov.html

[4] Տե՛ս Концепция внешней политики Российской Федерации(утверждена Президентом Российской Федерации В.В. Путиным 12 февраля 2013 г.) (утратила силу), http://www.mid.ru/foreign_policy/official_documents/-/asset_publisher/CptICkB6BZ29/content/id/122186

[5] Տե՛ս Концепция внешней политики Российской Федерации (утверждена Президентом Российской Федерации В.В. Путиным 30 ноября 2016 г.), http://www.mid.ru/foreign_policy/news/-/asset_publisher/cKNonkJE02Bw/content/id/2542248

[6] Տե՛ս Sergunin A., Karabeshkin L., “Understanding Russia's Soft Power Strategy”, Sage Journals, 12.10.2015.,p. 352 https://journals.sagepub.com/doi/abs/10.1111/1467-9256.12109?journalCode=pola

տրամաբանությամբ, փափուկ ուժը կարող է օգտագործվել ինչպես դրական/կառուցողական, այնպես էլ բացասական/ապակառուցողական նպատակներով: Ընդհանուր առմամբ համաձայնելով այս մեկնաբանության հետ՝ կարելի է նշել, որ ըստ էության, փափուկ ուժի ռուսական ընկալումը տարբերվում է տերմինի հեղինակ Ջոզեֆ Նայի ընկալումից, ով այն դիտարկում էր որպես գրավչության միջոցով համակրանքի այնպիսի մթնոլորտի ստեղծում, որը նպաստում է երկարաժամկետ շահերի բավարարմանը[7]: Նայի ընկալման մեջ շեշտադրվում է փափուկ ուժի դրական/գրավիչ ասպեկտը, այդ ուժի արդյունքում օբյեկտի՝ կամավոր հիմքով սեփական նախընտրությունների և վարքի փոփոխությունը: Փոխարենը ռուսական ընկալման մեջ փափուկ ուժին ավելի լայն մեկնաբանություն է տրվում՝ դիտարկելով որպես միջազգային հարաբերություններում պետությունների կողմից սեփական նպատակներին հասնելու գործիքներից մեկը: Այդ մոտեցումը, կարծում ենք, տրամաբանական է՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տերմինն ի սկզբանե դիտարկվել է որպես արտասահմանում ապրող ռուս բնակչության ռեսուրսը ռեալիզացնելու միջոց:

Ռուսաստանի փափուկ ուժը հենվում է այնպիսի ռեսուրսների վրա, ինչպիսիք են այդ երկրի մշակույթը, պատմությունը, համեմատաբար կայացած կրթական համակարգը, արտասահմանում ապրող մեծաքանակ ռուսալեզու բնակչությունը, Ռուսական ուղղափառ եկեղեցին, այդ երկրի աշխարհաքաղաքական կշիռը և այլն:

Փորձելով այդ ռեսուրսները վերածել չափելի վերջնարդյունքի՝ վերջին տասնամյակի ընթացքում Ռուսաստանը հասցրել է ստեղծել փափուկ ուժի կիրառման մեխանիզմների սեփական ճյուղավորված համակարգը՝ որոշակի առումով նմանակելով այս ասպարեզում Արևմտյան երկրների փորձին: Առաջին նշանակալի իրադարձությունն այս բնագավառում ՌԴ նախագահ Վ. Պուտինի հրամանագրով 2007թ. «Русский Мир» հիմնադրամի ստեղծումն էր, որն ունի հասարակական կազմակերպության կարգավիճակ: Հիմնադրամի նպատակը ռուսական մշակույթի, լեզվի, կրթական համակարգի տարածմանն ուղղված քայլերի ձեռնարկումն է[8]: Հիմնադրամի անվանումը պատահական չէ. աշխարհում ռուսական լեզվի և մշակույթի կրողները դիտարկվում են որպես փափուկ ուժի յուրատեսակ կապիտալ, որն ունի ռեալիզացման կարիք:

Ռուսական փափուկ ուժի մյուս «առաջամարտիկը» 2008թ. ստեղծված «Россотрудничество» դաշնային գործակալությունն է, որն ունի ՌԴ ԱԳՆ-ին կից մարմնի կարգավիճակ: Այդ ժամանակ ՌԴ նախագահ Դ. Մեդվեդևը խոսել է այդ գործակալությունը Ռուսաստանի փափուկ ուժի հիմնասյունը դարձնելու մտադրության մասին[9]: Գործակալության հիմնանպատակներն են ռուսական մշակույթի և լեզվի տարածումը, հանրային դիվանագիտությունը, արտասահմանում բնակվող ռուսական համայնքին աջակցությունը, պատմական ժառանգության պահպանումը, ՌԴ դաշնային սուբյեկտների միջազգային կապերի ընդլայնումը և այլն[10]: Գործակալությունն այսօր ներկայացուցչություններ ունի 80-ից ավել երկրներում, այդ թվում՝ եվրոպական երկրների մեծամասնությունում, ԱՄՆ-ում, Կանադայում, ինչպես նաև մի շարք լատինամերիկյան, ասիական և աֆրիկյան երկրներում:

Բացի այս երկու խոշոր կառույցներից, հասարակական հիմունքներով, ինչպես նաև ՌԴ ԱԳՆ հովանու տակ գործում են մի շարք ավելի փոքր կառույցներ, որոնցից են Հանրային դիվանագիտության աջակցության Գորչակովի հիմնադրամը և այլն:

Հիմնավոր կլինի պնդել նաև, որ նմանատիպ մեխանիզմների ներդնումը արտաքին քաղաքական գործիքակազմում խորհրդանշեց ՌԴ-ի կողմից համաշխարհային մակարդակում գրավչության ընդլայնման անհրաժեշտության գիտակցումը: Եթե սկզբնական շրջանում Ռուսաստանն այս բնագավառում իր ջանքերը կենտրոնացնում էր հատկապես իրեն սահմանակցող տարածաշրջաններում և իր անմիջական շահերի գոտիներում, ապա ներկայումս Ռուսաստանի փափուկ ուժի քաղաքականության աշխարհագրությունն աս-

[7] Տե՛ս Nye, Joseph S. Jr. 1991. “Bound to Lead...”, p.8-9

[8] Տե՛ս «Русский Мир» հիմնադրամի պաշտոնական կայքէջ, https://russkiymir.ru/fund/

[9] Տե՛ս Медведев: Россотрудничество должно стать проводником "мягкой силы", 03.09.2012., https://www.vedomosti.ru/politics/news/2012/09/03/medvedev_rossotrudnichestvo_dolzhno_stat

[10] Տե՛ս «Россотрудничество» գործակալության պաշտոնական կայքէջ, http://rs.gov.ru/ru

տիճանաբար ընդլայնվում է: Վալերի Տիշկովի կարծիքով, որպես այդ ընդլայնման շարժիչ ուժ է հանդես գալիս 20-րդ դարի ընթացքում աշխարհակարգի մի քանի հիմնական տեղաշարժերի արդյունքում ամբողջ աշխարհով մեկ սփռված ռուսալեզու բնակչությունը[11]: Որոշ տվյալներով, ամբողջ աշխարհում առնվազն ռուսերեն հասկացող մարդկանց թիվը հասնում է մոտ 280 մլն-ի, ինչը, բնականաբար, աշխատանքի հսկայական դաշտ է բացում Ռուսաստանի համար[12]:

Խոսելով Հարավային Կովկասում Ռուսաստանի փափուկ ուժի ազդեցության մեխանիզմների մասին՝ պետք է նշել, որ սառը պատերազմի ավարտից հետո այս տարածաշրջանը Ռուսաստանի կողմից դիտարկվեց այսպես կոչված «Մերձավոր արտասահմանի» (Ближнее зарубежье) տիրույթում: Ռուսական հասարական-քաղաքական շրջանակներում այդ տերմինով բնութագրվում էր Ռուսաստանի անմիջական շահերի գոտին և հիմնավորվում էր այդտեղ սեփական ազդեցության պահպանման ու ընդլայնման համար առավելագույն ջանքերի ներդնումը:

Բնականաբար, հետխորհրդային տարածաշրջանի հանդեպ առանձնահատուկ մոտեցում որդեգրելու հիմքում առկա էին որոշակի օբյեկտիվ պատճառներ, այդ թվում՝ մոտ 70 տարվա «համատեղ կյանքի» փորձը, ռուսական համայնքների առկայությունը հատկապես հետխորհրդային մի քանի երկրներում (Ղազախստան, Ուկրաինա, Բելառուս, Մերձբալթյան երկրներ), ինչպես նաև այդ երկրների տեղի բնակչության շրջանում ռուսերենի, ռուսական մշակույթի տարածվածությունը, որն ինքնին որոշակի բարենպաստ հող էր ստեղծում Ռուսաստանի ազդեցության պահպանման համար:

Հարավային Կովկասի երկրներից յուրաքանչյուրում ևս առկա են ռուսական համայնքներ, չնայած թվաքանակով դրանք միմյանցից էականորեն տարբերվում են: Ընդ որում, եթե Հայաստանում և Ադրբեջանում Ռուսաստանն օգտագործում է փափուկ ուժի «դասական մեխանիզմները», ապա Վրաստանում վերջիններիս ազդեցությունը խիստ սահմանափակ է՝ պայմանավորված երկու երկրների միջև հարաբերությունների բացակայությամբ:

Այսպես, Հայաստանում առկա է թեև փոքրաթիվ (մոտ 12.000[13]), սակայն կոմպակտ բնակվող և ինտեգրված ռուսական համայնք, գործում են «Россотрудничество» գործակալության և «Русский Мир» հիմնադրամի ներկայացուցչությունները՝ համապատասխանաբար Երևանում և Գյումրիում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնները և ԵՊՀ Ռուսական կենտրոնը, որոնք նպաստում են երկկողմ մշակութային, կրթական կապերի զարգացմանը[14]: Որոշակի գործունեություն է ծավալում նաև Հանրային դիվանագիտության Գորչակովի հիմնադրամը, որն ավելի շատ միտված է քաղաքացիական հասարակության և մեդիադաշտի հետ աշխատանքին: Հայաստանում գործող ռուսական կրթական հաստատությունների շարքում հարկ է նշել Հայ-Ռուսական սլավոնական համալսարանը, Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղը, Գ.Վ. Պլեխանովի անվան Ռուսական տնտեսական համալսարանը: Գործում են մի շարք ռուսական դպրոցներ (թեև դրանց քանակը վերջին տարիներին նվազման միտում է արձանագրել) և եկեղեցիներ ինչպես Երևանում, այնպես էլ մարզերում: Բնակչության մեծամասնությունն ունի առնվազն տարրական գիտելիքներ ռուսերենից:

Մեդիադաշտում բավականին ակտիվ գործում են ռուսական մի շարք լրատվամիջոցներ, որոնցից խոշորագույնը ռուսական Sputnik-ն է: Ռուսական հեռուստաալիքները ազատորեն հեռարձակվում են հայկական հեռուստատեսությամբ:

Երկու երկրները մի շարք տարածաշրջանային կազմակերպությունների անդամ են, որոնց շարքում՝ ՀԱՊԿ, ԵԱՏՄ, ԱՊՀ և այլն:

---

[11] Տե՛ս Tishkov, V., “The Russian World – Changing Meanings and Strategies.” Carnegie Papers 95, August 2008. Washington, DC: Carnegie Endowment for International Peace., p.13, https://www.ciaonet.org/attachments/6481/uploads

[12] Տե՛ս Crystal D., The Cambridge Encyclopedia of Language (Cambridge: Cambridge University Press, 1987), R. G. Gordon Jr., (ed.), Ethnologue: Languages of the World (15th edition). 2005, https://www.ethnologue.com/language/rus

[13] Տե՛ս «Հայաստանը թվերով. ժողովրդագրություն», ՀՀ Վիճակագրական կոմիտե, 16.11.2018., https://armenpress.am/arm/news/757921, https://www.armstat.am/file/article/armenia_2018_3.pdf

[14] Տե՛ս Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի պաշտոնական կայքէջ, http://arm.rs.gov.ru/ru/activities/419

Ռուսաստանը զգալի ներգրավվածություն ունի հայկական տնտեսական ենթակառուցվածքներում՝ հանդիսանալով մի շարք խոշոր կորպորացիաների ու տնտեսական օբյեկտների սեփականատեր:

Այդուհանդերձ, հայ հասարակության աչքերում Ռուսաստանի գրավչության բարձրացումը հաճախ բախվում է մի շարք խոչընդոտների: Այսպես, մի կողմից Հայաստանի ռազմավարական դաշնակցի, Հայաստանի անվտանգության կարևոր բաղադրիչի՝ այդ թվում նաև դաշինքային ձևաչափով, մյուս կողմից Ադրբեջանին սպառազինություններ մատակարարող Ռուսաստանի իմիջները հայ հասարակության աչքերում մշտական հակազդեցության մեջ են, ինչն էականորեն դժվարացնում է այդ երկրի հանդեպ իրապես խորքային դրական վերաբերմունքի արմատավորումը: Բացի այդ, ռուսական իմիջի հանդեպ դրական վերաբերմունքի ամրապնդման ևս մեկ խոչընդոտ է ռեսուրսների ոչ նպատակային ծախսումը: Ընդհանուր առմամբ, կարելի է համաձայնել հետազոտող Ռ. Էլամիրյանի կարծիքի հետ, ըստ որի փափուկ ուժի ռուսական մոդելի առանձնահատկությունն այն է, որ վերջինս ավելի շատ հիմնվում է գործընկեր երկրների քաղաքական էլիտաների հետ անմիջական համագործակցության, վերջիններիս շահավետ պայմաններով անվտանգության, գազի և այլ նմանատիպ գործարքներ առաջարկելու, քան բուն հասարակության հետ աշխատանքի վրա[15]:

Թեև Ադրբեջանի ռուսական համայնքը թվաքանակով մի քանի անգամ գերազանցում է տարածաշրջանի մյուս երկրների ռուսական համայնքներին (մոտ 120.000[16]), փափուկ ուժի մեխանիզմների մասով Ռուսաստանը մոտավորապես նույն կերպ ներկայացված է Ադրբեջանում: Այսպես, գործում է «Россотрудничество»-ի ներկայացուցչությունը՝ Բաքվում գիտության ու մշակույթի ռուսական կենտրոնը և Բաքվի պետական համալսարանում «Русский Мир» հիմնադրամի գրասենյակը, որոնք իրենց օրակարգերով շատ նման են Հայաստանում գործող այդ կազմակերպությունների գործունեությանը: Գործում է Մ. Լոմոնոսովի անվան Մոսկվայի պետական համալսարանի մասնաճյուղը, Բաքվի սլավոնական համալսարանը, 16 ռուսական դպրոցներ, իսկ մնացյալ դպրոցներում առկա է ռուսերենի դասավանդումը[17]: Կան 5 ռուսական եկեղեցիներ:

Ադրբեջանում գործում են մոտ 20 ռուսամետ մեդիաընկերություններ, որոնցից խոշորագույնը Sputnik-ն է[18]:

Հետաքրքրական է, որ զոնե ձևաչափերի առումով Ռուսաստանը մոտավորապես նույն կերպ է ներկայացված Հայաստանում և Ադրբեջանում՝ թեև այդ երկու երկրներում ռուսական համայնքների թվերն անհամեմատելի են:

Ռուսաստանի փափուկ ուժի քաղաքականությունը թերևս արդյունավետության առումով նվազագույն հաջողություններ է գրանցել Վրաստանում, բնականաբար, մի շարք օբյեկտիվ պատճառներով: Նախևառաջ, դրանցից առաջինը Աբխազիայի և Հրվ. Օսիայի հիմնախնդիրների շուրջ երկու երկրների հակադիր դիրքորոշումներն են, որի կուլմինացիան 2008թ. ռուս-վրացական պատերազմն էր և դրանից հետո Ռուսաստանի կողմից Աբխազիայի և Հրվ. Օսիայի անկախության ճանաչումը: Ընդ որում, այս հարցում լարվածությունն ակնհայտ դարձավ արդեն ԽՍՀՄ փլուզման տարիներին՝ հետագայում խորանալով և ստանալով խրոնիկ բնույթ: Արդյունքում Վրաստանը 2005թ. հայտարարեց երկրից ռուսական ռազմաբազան դուրս բերելու իր որոշման մասին և հայտարարեց Արևմտյան ինտեգրացիոն կառույցներին անդամակցելու իր մտադրության մասին:

Мангыстауская	1134	1307	1873	1308	987	1825
Павлодарская	295	512	634	666	594	975
Северно-Казахстанская	433	449	940	1394	1270	1875
Туркестанская	1366	1388	1553	682	647	980
Всего	12814	13722	18469	14758	13776	22970

Таблица распределения армянского населения по областям и в городах республиканского подчинения за последние 50 лет [**5**, **9-12**].

Организации. **СМИ**.

В Казахстане действует множество региональных общественных организаций объединенных в Ассоциацию Армянских Культурных Центров Казахстана «Наири» (Алматы, 30.10.2004), при которой действует «Армянская Молодежь Казахстана» (АМК) (2006). Таковыми являются: Армянские культурные центры «Луйс» г. Алматы и «Бари» г. Кокшетау, Армянский национально-культурный центр «Эребуни» г. Караганды (1994), Западно-Казахстанское Армянское этнокультурное объединение «Мирзоян» г. Уральск (1995) (с 22.02.2016 переименовано в Армянское этнокультурное общественное объединение «Масис»), Армянские национальные культурные центры «Айреник» г. Павлодар и «Кентрон» г. Петропавловск (1997), Армянская Община Костанайской

области «Эребуни» (1992)1. Кроме того имеются следующие общественные объединения: городское объединение «Ван» г. Астана (2000), этнокультурные объединения: «Арарат» г. Усть-Каменогорск (2000), «Ехпайрутюн» Мангистауской области и «Таврос» Атырауской области.

Издается армянская национальная ежемесячная газета «Наири» (с 2007 г., тираж - 5000 экз.).

Функционирует один веб-портал[2].

Церковь. Образование.

В Казахстане действует церковь Св. Карапета и одна часовня. В 1995 г. власти города Костанай предоставили территорию для строительства культового центра.

Единственная воскресная школа действует в Алматы при церкви Св. Карапета.

Таблица-перечень памятников архитектуры и топонимики Казахстане[3]

№	Объект	Наименование	Местонахождение (адрес, контакты)	Даты	Вид или координаты
Астана[4] — город республиканского значения					
1.	*улица*	Левона Мирзояна[5]	Қаныш Сәтбаев көшесі, 020000 **Астана**		Ранее ул. Левон Мирзоян Переименована 10.04.2015 Протяженность: 1157,7 м
2.	*улица*	Хачатуряна	Хачатурян көшесі, 020000 **Астана**		Протяженность: 160 м
3.	*улица*	Ленинаканская	Игілік көшесі, 010000 **Астана**		Ранее ул. Ленинаканская Протяженность: 700 м
Алматы[6] — город республиканского значения					
4.	церковь	Св. Карапет	ул. Акан Серэ, 15, уг. ул. Чернышевского **Алматы** тел.:/факс: + (7727) 235-13-31, + (7777) 338-86-98	Осн. 1995 Осв. 7.10.2006	
5.	памятник	хачкар	Установлен рядом с входом в церковь Св. Карапет, **Там же**	7.10.2006	

[1] Адрес: Казахстан, г. Костанай, ул Чехова 105 а. Телефон: 568538. Факс: 263322.
[2] Медиа группа ARMYANE.KZ (создан - 13.01.2006), http://www.armyane.kz, e-mail: arm@armyane.kz,
[3] **Казахстан** (казах. Қазақстан, англ. Kazakhstan), официальное название **Республика Казахстан** (казах. Қазақстан Республикасы, англ. Republic of Kazakhstan). В состав Казахстана входят 14 областей, 86 городов, в том числе 3 города республиканского подчинения (г. Астана, г. Алматы и Байконур), 168 районов (8 районов в городах), 174 посёлка. Столица – г. Астана.
[4] **Астана** (казах. Астана, англ. Astana) (ранее: Акмолинск 1830-1961, Целиноград 1961-92, Акмола 1992-98) – город республиканского значения, столица Казахстана, второй в республике по численности после Алматы.
[5] **Мирзоян Левон Исаевич** (10.1896, с. Ашан близ г. Шуша Елизаветпольской губернии - 26.02.1939, Лефортовская тюрьма, Москва), советский, государственный и партийный деятель. В 1917 вступил в РСДРП(б). С 1919 на партийной работе. Первый секретарь ЦК ВКП(б) Азербайджана (1926-29). Секретарь Пермского окружкома (1929-33), затем 2-й секретарь Уральского обкома ВКП(б). 1-й секретарь Казахстанского крайкома партии (с 1933). 1-й секретарь ЦК КП(б) Казахстана (с 1937). Член ЦИК СССР. Расстрелян в Лефортовской тюрьме по заочному приговору ВКВС. Реабилитирован в 1958 г.
[6] **Алма-Ата** (казах. Алматы, англ. Almaty) (до 1921 Верный) – город республиканского значения, крупнейший город-мегаполис страны. Ранее столица Казахстана.

6.	здание	Культурный центр армянской общины «Луйс»	Находится справа от церкви Св. Карапет, **Там же**	7.10.2006	
7.	*улица*	Айвазовского	Айвазовский атындағы көше, **Алматы**		Протяженность: 2700 м
8.	*улица*	Армавирская	Бөлтірікова Балжан атындағы көше, **Алматы**		Ранее ул. Армавирская. Переименована указом №221 от 21.01.2000 Протяженность: 600 м
9.	*улица*	Армянская	Армянская көшесі, **Алматы**		
10.	*улица*	Вахтангова	Вахтангов көшесі, **Алматы**		Протяженность: 400 м
11.	*переулок*	Вахтангова	Вахтангов көшесі, **Алматы**		Протяженность: 350 м
12.	*улица*	Микояна	Мұстафа Шоқай атындағы көше, **Алматы**		Ранее ул. Микояна. Переименована указом №278 от 28.05.1997 Протяженность: 2900 м
13.	*улица*	Мирзояна	Мирзоян атындағы көше, **Алматы**	14.04.1966	№134 от 14.04.1966 Протяженность: 870 м
14.	*улица*	Севанская	Бөкеев Оралхан атындағы көше, **Алматы**		Ранее ул. Севанская. Переименована указом №655 от 03.11.1997 Протяженность:1250 м

Павлодар облысы [7]

15.	хачкар	На лицевой части внизу 3-строчная надпись на русском языке[8]. На тыльной стороне изображен кафедрал Св. Эчмиадзина и 13 строк на армянском, английском и русском языках[9].	Установлен в подворье Благовещенского собора русской православной церкви, Торайғыров көшесі, 1/1 **140005 Павлодар**[10]	12.09.2004	

[7] **Павлодарская область** (казах. Павлодар облысы, англ. Pavlodar Region) – расположена на берегу Иртыша, самой крупной реки Казахстана. Образована в январе 1938 года. Административный центр – город Павлодар.

[8] *Хачкар - духовный символ Армении. Освящён 2004 г., 12 сентября.*

[9] Մայր Տաճար Սբ. Էջմիածին / Main Cathedral Echmiadzin / 301 թ / *Кафедральный монастырь / Святой Эчмиадзин / Хачкар / Водружён в честь 1700-летия / хрестианства в Армении.*

[10] **Павлодар** (казах. Павлодар, англ. Pavlodar) – город, административный центр Павлодарской области.

Ақмола облысы[11]

16.	*улица*	Мирзояна	Мирзоян көшесі, **Көкшетау**[12]		Протяженность – 800 м.
17.	*улица*	Микояна	Микоян көшесі, **Көкшетау**		
18.	мемориал	в память 79 репрессированным женщинам-армянкам [13] с надписью на трех языках по три строки на казахском[14], армянском[15] и русском[16]	В музейно-мемориальном комплексе «АЛЖИР»[17], **Ақмол**[18]	2016	
19.	хачкар	в память о репрессированных женщин-армянок[19]	Установлен на территории музейно-мемориального комплекса «АЛЖИР», **Ақмол**	17.05.2017	
20.	лапидарная надпись	Памятная на трех языках по три строки на русском[20], армянском[21] и казахском[22]	Находится на лицевой стороне постамента, **Там же**	17.05.2017	

[11] **Акмолинская область** (казах. Ақмола облысы, англ. Aqmola Region) – область, расположенная на севере Казахстане. В центре области находится столица Казахстана Астана, административно не входящая в область. Административный центр с 1999 года – город Кокшетау.

[12] **Кокшетау** (казах. Көкшетау, англ. Kokshetau) (ранее Кокчетав) – город, административный центр Акмолинской области.

[13] Установлена посольством Армении в Республике Казахстан в память 79 женщинам-армянкам, пять из которых умерло в заключении.

[14] «АЛЖИР» ЛАГЕРИНДЕ ЖАЗАЙЫН ОТЕГЕН АРМЯН / АЙЕЛДЕРИНИН РУХЫНА АРНАЛАДЫ / ...

[15] Ի ՀԻՇԱՏԱԿ «ԱԼԺԻՐ» ՃԱՄԲԱՐԻ / ՀԱՅ ԿԻՆ ԲԱՆՏԱՐԿՅԱԼՆԵՐԻ / ...

[16] ПАМЯТИ АРМЯНСКИХ ЖЕНЩИН-УЗНИЦ ЛАГЕРЯ / «АЛЖИР» / ...

[17] «АЛЖИР» (Акмолинский лагерь жен изменников Родины) – женский исправительно-трудовой лагерь специального Карагандинского отделения в Акмолинской области. Функционировал с 1938 по 1953 гг. Один из наиболее крупных советских женских лагерей.

[18] **Акмол** (казах. Ақмол, англ. Akmol) – аул, административный центр Целиноградского района. До 2007 г. именовался Малиновка, ранее – трудпоселение «26 точка».

[19] Освящение и открытие приурочено к 80-й годовщине сталинских репрессий и 10-летию со дня открытия музея «АЛЖИР». Хачкар изготовлен и установлен на средства петербургского мецената и благотворителя Грачья Погосяна.

[20] ХАЧКАР ПОСВЯЩЕН ПАМЯТИ АРМЯНСКИХ / ЖЕНЩИН ПОСТРАДАВШИМ ОТ / РЕПРЕСИИ В 1930-1950 ГОДЫ

[21] ԽԱՉՔԱՐԸ ՆՎԻՐՎԱԾ Է / 1930-1950-ԱԿԱՆ ԹԹ. ԲՌՆԱՃՆՇՈՒՄՆԵՐԻ / ԶՈՀ ԴԱՐՁԱԾ ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՀԻՇԱՏԱԿԻՆ

[22] 1930-1950 ЖЫЛДАРЫ КУГЫН-СУРГН / ЗАРДАП ШЕККЕН АРМЯН АЙЕЛДЕРИНИН / РУХЫМА АРНАНФАН ЕСКЕРТКИШ

Ақтөбе облысы [23]

21.	*улица*	Левона Мирзояна	Мирзоян көшесі, **Ақтөбе**[24]		Протяженность – 750 м.
22.	хачкар		Установлен во дворе Никольского кафедрального собора, **Ақтөбе**	29.10.2016	
23.	*администр-ативный топоним*	Мирзояновский район	**Степной район**[25]		Ранее с 28.10.1933 г. по 29.07.1936 г. назывался - Мирзояновский район.

Батыс Қазақстан облысы[26]

24.	*улица*	Левона Мирзояна	Мирзоян көшесі, **Орал**[27]		Ранее ул. Транспортная. Протяженность – 650 м.
25.	*здание*	Западно-Казахстанское областное Армянское Этнокультурное Объединение «Мирзоян»	БҚО «Мирзоян» армян этномәдени қоғамдық бірлестігі **Орал**	Созд. в 1995 г.	
26.	*гостиница*	Ереван	гостиница «Ереван», 4 микрорайон, Әбілқайыр хан даңғылы (ранее ул. Кутякова), д. 40, **Орал** Тел.: 22-65-15		

---

[23] **Актюбинская область** (казах. Ақтөбе облысы, англ. Aktobe Region) – область в западной части Казахстана. Вторая в стране область по площади территории, после Карагандинской. Административный центр – Актобе.

[24] **Актобе** (казах. Ақтөбе, англ. Aktobe) (ранее Актюбинск) – город, административный центр Актюбинской области.

[25] **Степной район** – некогда район в Актюбинской области. Образован 5.07.1933 г., переименован в Мирзояновский район (28.10.1933), вновь переименован в Степной (29.07.1936); упразднен - 02.01.1963 г.

[26] **Западно-Казахстанская область** (казах. Батыс Қазақстан облысы, англ. West Kazakhstan Region) – регион Республики Казахстан, расположенный на северо-западе страны. Образован 10.03.1932 года, как Западно-Казахстанская область КазССР. Исторически ей предшествовала Уральская область Российской империи. С 3.05.1962 г. по 07.1992 г. именовалась Уральской областью. Административный центр – город Уральск.

[27] **Уральск** (казах. Орал, англ. Oral) – город, административный центр Западно-Казахстанской области, Находится в европейской части западного Казахстана, на реке Урал. До 1775 года – Яицкий городок.

Атырау облысы[28]

27.	хачкар	В знак дружбы	Установлен во дворе Собора Успения Божьей Матери, **Атырау**[29]	14.05.2016	
28.	мемориальная доска	Дарственная четырехстрочная надпись на русском языке[30]	Установлена на металлическом кресте слева от хачкара, **Там же**	14.05.2016	

Жамбыл облысы[31]

29.	*администра-тивный топоним*	Мирзояновский район	**Жамбылский район**[32]		Ранее с 1936 по 1938 гг. назывался - Мирзояновский район.
30.	*город*	Мирзоян	**Тараз**[33]		Ранее с 1936 по 1938 гг. назывался г. Мирзоян.
31.	*улица*	Левона Мирзояна	Левон Мирзоян көшесі, **Тараз**		Протяженность – 1610 м.

---

[28] **Атырауская область** (казах. Атырау облысы, англ. Atyrau Region) – область на юге Казахстана, ранее называлась Гурьевская область(англ. Guryev Region). Административный центр – город Атырау.

[29] **Атырау** (казах. Атырау, англ. Atyrau) – город, административный центр Атырауской области. До 1991 года – Гурьев.

[30] Собору Успения Божией Матери / г. Атырау / от армянской обшины «ТАВРОС» / 14 мая 2016 г.

[31] **Жамбылская область** (казах. Жамбыл облысы, англ. Jambyl Region) (до 4.05.1993 Джамбульская область) – область, расположенная на юге Республики Казахстан, образована 14.10.1939 г. из части Южно-Казахстанской области. Административный центр – город Тараз.

[32] **Жамбылский район** (казах. Жамбыл ауданы) – район в Жамбылской области. Образован в 1928 году как Аулие-Атинский район. В 1936 году переименован в **Мирзояновский район**, а в 1938 – в Джамбульский. В 1963 году Джамбульский район был упразднён, но уже 31 января 1966 года восстановлен. Административный центр – село Асса.

[33] **Тараз** (казах. Тараз, англ. Taraz) (ранее: Аулие-Ата до 1936, **Мирзоян** 1936-38, Джамбул 1938-93, Жамбыл 1993-97), город, административный центр Жамбылской области (казах. Жамбыл облысы).

Маңғыстау облысы[34]

32.	*улица*	Рубена Григоряна	Григоряна көшесі, **130000 Ақтау**[35]		Протяженность – 950 м.
33.	памятник	Первого строителя и почётного гражданина города Григоряна Рубена Арамаисовича	Установлен напротив парка Акбота перед д. 73 по ул. Строительная во 2-ом микрорайоне, **Ақтау**		
34.	хачкар	В память жертв Геноцида армян	Установлен на территории Благовещенского храма, по левую сторону от центрального входа, **Ақтау**	18.03.2015	
35.	лапидарная надпись	Памятная шестистрочная на армянском языке[36]	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	18.03.2015	
36.	школа	армянская национальная	В армянском поселке Слободской, близ церкви Свв. Петра и Павла, **Форт-Шевченко**[37]	1878	рарушена
37.	часовня[38]	Армянская церковь Свв. Петра и Павла	На выезде из поселка, справа от дороги ведущей в поселок Баутино, **Там же**	1880-е	

[34] **Мангистауская область** (казах. Маңғыстау облысы, англ. Mangystau Region) – область на юго-западе Казахстана, ранее называлась Мангышлакской (англ. Mangyshlak). Образована 20.03.1973 г. из южной части Гурьевской области. В 1988 г. область упразднена, восстановлена в 1990 г. под именем Мангистауской. Административный центр – город Актау.

[35] **Актау** (казах. Ақтау, англ. Aktau) – город, административный центр Мангистауской области. Ранее город Шевченко.

[36] ԿԱՆԳՆԵՑԻ ԽԱՉՔԱՐՍ / ԱՅՍ Ի ԲԱՐՕՐՈՒԹՅԻՆ / ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ / ՀԱՄԱՅՆ ՀԱՅՈՒԹԵԱՆ / ԱՇԽԱՐՀԱՍՓՅԻՒՌ / 2015

[37] **Форт-Шевченко** (казах. Форт-Шевченко қаласы, англ. Fort Shevchenko) (до 1857 Новопетровское укрепление, до 1939 Форт-Александровский) – город-порт (Баутино) на Каспийском море в Мангистауской области, на п-ове Мангышлак (мыс Тюбкараган). Во времена Новопетровского укрепления, радом возник армянский поселок – Слободской.

[38] В 1880-х гг. астраханские армянские купцы на свои деньги в поселке Слободском возвели православную церковь Свв. Петра и Павла.

Шығыс Қазақстан облысы[39]

38.	*улица*	Микояна	Микоян көшесі, **Өскемен**[40]		Протяженность – 470 м.
39.	хачкар	В память невинных жертв	установлен на территории Свято-Троицкого мужского монастыря рядом с Собором Андрея Первозванного, Лихарев көшесі, 16 070004 **Өскемен**	29.10.2008	
40.	лапидарная надпись	одна строка на русском и 2 строки на армянскком языках[41]	Находится на лицевой стороне постамента хачкара, **Там же**	29.10.2008	

Библиография:

1. **Հայ Սփյուռք** հանրագիտարան: *Ղազախստան*, էջեր 384-385: – Եր.: Հայկ. հանրագիտարան. հրատ. 2003: – 732 էջ:
2. **Մալխասյան Մ.**, Հայերն աշխարհում: – Եր.: Հեղինակային հրատարակություն: 2007: – 144 էջ:
3. **Иванов В.А., Трофимов Я.Ф.**, Религии в Казахстане. – Алматы. 2003.
4. **Муканова-Хуршудян Д., Хуршудян Э. Ш.**, Армяне в Казахстане: история и современность. // Общественно-политический журнал «Центральная Азия и Кавказ», № 3 (15), 2001. Luleå, Sweden. https://www.ca-c.org/journal/2001/journal_rus/cac-03/21.khurru.shtml
5. **Назарьян Р.**, Закаспийский край оказался в десять лет времени в значительной мере «армянским углом». (Армяне и армянская апостольская церковь в Центральной Азии). // Духовный и литературно-исторический журнал московского патриархата ташкентской и среднеазиатской епархии “Восток Свыше”, Вып. XXI. – Ташкент, 2011.
6. Переименованные улицы г. Уральска (1995-2010 гг.) (Информация предоставлена: акиматом г. Уральска, государственным архивом ЗКО и отделом культуры и развития языков г. Уральска) // http://www.infoportal.kz/info/ulitsy-uralska
7. Алматы көшелері. Анықтамалық энциклопедия. – Адматы: “ИП Волошин” баспасы, 2009.
8. Астана көшелері. Құрастырушы: Тілешев Е., Сүлейменов О., – Алматы. 2008.
9. Қазақ энциклопедиясы, 6 том, *Мирзоян Левон Исаевич*.
10. Қазақстан Республикасы халқының ұлттық құрамы. 1-том. Қазақстан Республикасындағы 1999 жылғы халық санағының қорытындылары. Статистикалық жинақ. (Редакциясын басқарған Ә. Смаилов). – Алматы, 2000 – 199 бет. Национальный состав населения Республики Казахсатан. Итоги переписи населения 1999 года в Республике Казахсатан. Статистический сборник. (Под ред. А. Смаилова). – Алматы, 2000 – 199 стр.
11. 2010 жыл басына Қазақстан Республикасы халқының облыстар, қалалар және аудандар бойынша, жынысы мен жекелеген жас құрамы, жекелеген этностары бойынша саны. Қазақстан Республикасы Статистика Агенттігі. Серия 15. Демография. 2010 жыл.
12. 2018 жыл басына Қазақстан Республикасы халқының жекелеген этностары бойынша саны. Республикасы Статистика Агенттігі. Серия 21. Демографиялық статистика. 2018 жыл.
13. Ethnic composition: 2009 estimation http://pop-stat.mashke.org/kazakhstan-ethnic2009-census.htm

[39] **Восточно-Казахстанская область** (казах. Шығыс Қазақстан облысы, angl. East Kazakhstan Region) **–** область в восточной части Казахстана. Административный центр – город Усть-Каменогорск.

[40] **Усть-Каменогорск** (казах. Өскемен, англ. Ust-Kamenogorsk or Oskemen) **–** город, административный центр Восточно-Казахстанской области.

[41] ХАЧ КАР / ԱՆՄԵՂ ԶՈՀԵՐԻ / ՀԻՇԱՏԱԿԻՆ

ЭКОНОМИКА

Երկրաջերմային ռեսուրսների յուրացման տնտեսական ասպեկտները Հայաստանում

Մանուկյան Ս.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Հայաստան, Երևան),
sarkis.ar@gmail.com
Բաղդասարյան Ս.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Հայաստան, Կապան),
sona.baghdasaryan.86@mail.ru
Վեզիրյան Վ.
Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան (Հայաստան, Կապան),
kachkarspy@mail.ru

Վճռորոշ բառեր՝ երկրաջերմային (գեոթերմալ) ռեսուրսներ (պաշարներ), երկրաջերմային էներգիա, երկրաջերմային էներգակայաններ

Экономические аспекты использования геотермальных ресурсов в Армении

Манукян С.
Национальный политехнический университет Армении (Армения, Ереван),
sarkis.ar@gmail.com
Багдасарян С.
Национальный политехнический университет Армении (Армения, Капан),
sona.baghdasaryan.86@mail.ru
Везирян В.
Национальный политехнический университет Армении (Армения, Капан),
kachkarspy@mail.ru

Резюме: Для использования геотермальных ресурсов в Армении необходима полная и надежная геолого-разведочная информация об этих ресурсах. Без достоверный информации трудно говорить об экономической целесообразности использования геотермальной энергии. В статье представлена информация об основных экономических тенденциях мировых геотермальных электростанций, инвестиционных затратах, эксплуатационных расходах и тарифах. На этом этапе Армения следует выделить больше ресурсов для геотермальной разведки, эффективной тарифной политики и налоговой политики для поддержки осуществлении проектов геотермальных электростанций, и в результате она будет привлекательной для инвестиций.

Ключевые слова: геотермальные ресурсы, геотермальная энергия, геотермальные электростанции

Economic Aspects of Geothermal Resources Usage in Armenia

Manukyan S.
National Polytechnic University of Armenia (Armenia, Yerevan),
sarkis.ar@gmail.com
Baghdasaryan S.
National Polytechnic University of Armenia (Armenia, Kapan),
sona.baghdasaryan.86@mail.ru
Veziryan V.
National Polytechnic University of Armenia (Armenia, Kapan),
kachkarspy@mail.ru

Abstract: For the geothermal resource use in Armenia, there is a need for full and reliable geological prospecting information on these resources. Without it, it is difficult to talk about economic feasibility of geothermal energy utilization. The paper presents information on global economic trends of geothermal power plants, investment costs, operating costs and tariffs. At this stage, Armenia should allocate more resources for geothermal exploration, effective tariff policy and tax policy to support the feasibility of geothermal power plant projects, and as a result, it will be attractive for investments.

Keywords: geothermal resources, geothermal energy, geothermal power plants

Հայաստանում երկրաջերմային ռեսուրսների յուրացման համար, անհրաժեշտ է այս ռեսուրսների վերաբերյալ լիարժեք և հավաստի երկրաբանահետախուզական տեղեկատվություն: Առանց դրանց առկայության դըժվար է խոսել երկրաջերմային էներգիայի յուրացման տնտեսական նպատակահարմարության մասին: Հայաստանը այս փուլում պետք է ավելի մեծ ծավալի միջոցներ հատկացնի երկրաջերմային ռեսուրսների հետազոտման համար, առաջարկի սակագնային արդյունավետ քաղաքականություն և աջակցության գրագետ մեխանիզմներ և այդ հենքի վրա ներկայացնի երկրաջերմային կայանների նախագծերի արդյունավետության հիմնավորումը, որի արդյունքում այն գրավիչ կլինի ներդրումների համար:

Էներգիա արտադրող ռեսուրսների շարքում երկրաջերմային ռեսուրսները ապագայում կարող են դառնալ ամենակիրառվող և կարևոր ռեսուրսներից մեկը: Այդ ռեսուրսներից ջերմային էներգիայի ուղղակի օգտագործումը, օրինակ Եվրոպայում, ներկայումս գնային առումով մրցակցում է նավթի և գազի հետ՝ վերջիններիս բարձր գների պատճառով, սակայն, էլեկտրաէներգիայի արտադրության պարագայում, այն կանգնած է որոշակի խանգարող հանգամանքների առջև[1]: Նախ և առաջ դա պայմանավորված է մեծ ջերմապարունակության (էնտալպիա) հիդրոթերմալ ռեսուրսների սահմանափակ տարածվածության հանգամանքով, որոնք օգտագործվում են էլեկտրաէներգիա ստանալու համար: Մոտ ապագայում առավել մեծ կիրառություն են ձեռք բերելու նաև ցածր ջերմապարունակության (էնտալպիա) հիդրոթերմալ ռեսուրսները: Դրանք ավելի տարածված են, սակայն էլեկտրաէներգիայի արտադրության համար դեռևս չեն օգտագործվում: Միաժամանակ՝ տեխնոլոգիաների զարգացումը ապագայում բերելու է նաև դրանցից ոչ միայն ջերմային էներգիա, այլ նաև էլեկտրաէներգիա ստանալու հնարավորություններին:

Երկրաջերմային ռեսուրսների նկատմամբ հետաքրքրությունը լայն թափ է հավաքելու աշխարհում՝ հատկապես այս ոլորտում առաջադիմական և ինովացիոն տեխնոլոգիաների կիրառման շնորհիվ: Էներգիայի մյուս աղբյուրների համեմատ այն ունի մի շարք առավելություններ և միաժամանակ նաև թերություններ, որոնցից կարևոր են՝ մեծ ներդրումային ծախսերը և ռեսուրսների առկայության հանգամանքով պայմանավորված ռիսկերը: Բազմաթիվ երկրներում, այդ թվում՝ նույնիսկ այդ ռեսուրսների փոքր ներուժ և համեմատաբար ոչ բարենպաստ պայմաններ ունեցող երկրներում, բազմաթիվ փոքր, միջին և մեծ հզորության երկրաջերմային կայաններ են տեղադրվում: Հայաստանը նույնպես փորձում է ետ չմնալ այդ միտումներից. նախատեսվում են ուսումնասիրություններ հեռանկարային մի քանի տեղամասերի հայտնաբերման, հետախուզման և գնահատման նպատակով: Իսկ կոնկրետ 2 տեղամասերի՝ Ջերմաղբյուրի և Կարկարի համար փորձ է արվում նաև մասնավոր ներդրումների ներգրավվում, թեև այստեղ էլ ռեսուրսների ներուժի վերաբերյալ պատկերը ամբողջական չէ:

Հայաստանում բացակայում է երկրաջերմային ռեսուրսներից էներգիա ստանալու նպատակով փորձառությունը թե՛ փոքր (մինչև 400մ), թե՛ մեծ (>400մ) խորություններում գտնվող ռեսուրսների յուրացման նպատակով[2], իսկ օտարերկրյա ներդրումների ներգրավմանը խանգարում է ո՛չ միայն երկրաբանական տեղեկատվության ոչ լիարժեք առկայությունը, այլ նաև այլ իրավական, կառավարման և տնտեսական հանգամանքներով պայմանավորված գործոններ:

Հոդվածն ունի փորձագիտական-տեղեկատվական ուղղվածություն, որի նպատակն է հիմնավորել Հայաստանում այս ոլորտի զարգացման նպատակահարմարությունը և հեռանկարները՝ այլ երկրների երկրաջերմային կայանների տեխնիկատնտեսական ցուցանիշների հիման վրա: Հոդվածում ներկայացվել են աշխարհում երկրաջերմային էներգետիկայի աճի տեմպերը, էներգակայանների ներդրում-

[1]Economic analysis of geothermal energy provision in Europe ENGINE – Enhanced Geothermal Network of Europe, Workpackage 5 – Deliverable D35

[2]**Ծանոթ**. Հիշեցնենք, որ փոքր խորությամբ կամ մակերևույթամերձ երկրաջերմային ռեսուրսները (մինչ 400մ խորության դեպքում) հիմնականում օգտագործվում են ջեռուցման, հովացման և տաք ջրի մատակարարման համար, իսկ խորը տեղադրված ռեսուրսները ցածր ջերմապարունակության դեպքում՝ ($<100^0$ C) ջերմային էներգիա, իսկ բարձր ջերմապարունակության դեպքում ($>100^\circ$C) ոչ միայն ջերմային էներգիա, այլ նաև էլեկտրաէներգիա ստանալու համար:

ներային ծախսերը և էլեկտրաէներգիայի արտադրական ծախսերը ըստ տեխնոլոգիական առանձնահատկությունների, ինչպես նաև Հայաստանի պայմաններում այդ ռեսուրսների յուրացման առանձնահատկությունները:

Աշխատանքի գաղափարն է Հայաստանում ներդնել և զարգացնել երկրաջերմային էներգետիկան՝ հիմնվելով փորձառություն ունեցող երկրների օրինակների վրա: Կարևորվում է հատկապես արդյունավետ տեխնոլոգիաների կիրառումը և դրանց զարգացումը Հայաստանում, ինչպես նաև պետական աջակցության արդյունավետ մեխանիզմների կիրառումը: Ուսումնասիրության օբյեկտը հիմնականում հանդիսանում է խորը երկրաջերմային կայաններից էլեկտրաէներգիայի ստացումը:

Երկրաջերմային էներգետիկայի գլոբալ միտումները: Բացի երկրաբանական առանձնահատկություններից, որոնք ամենակարևոր դեր են խաղում այդ ռեսուրսների յուրացման նպատակահարմարության տեսակետից, պակաս կարևոր չեն նաև ճիշտ ընտրված տեխնոլոգիաները և տնտեսական ու մենեջմենթի գործոնները: Կարևոր հանգամանք է նաև երկրաջերմային նախագծերի ապահովումը ներդրումներով, այսինքն ֆինանսական միջոցներով, քանի որ այս ոլորտին բնորոշ են համեմատաբար մեծ ռիսկերը:

Երկրաջերմային էներգետիկան նույնպես զարգացման տեմպեր է գրանցում ամբողջ աշխարհում՝ 0,7 ԳՎտ նոր երկրաջերմային հզորություններ են հիմնադրվել 2017թ.-ին, իսկ ընդհանուր հզորությունները հասել են 12,8 ԳՎտ-ի: Այն սակայն համարժեք չէ ՎԷ-ի որոշ ուղղությունների՝ հողմնային կայանների (նոր հզորությունների աճը նախորդ տարի կազմել է 52 ԳՎտ, իսկ ներկայումս տեղակայված հզորությունները կազմում են 539 ԳՎտ) և արևային ՖՎ կայանների (աճը 99 ԳՎտ, տեղակայված հզորություններ 402 ԳՎտ) աճի տեմպերի և հզորությունների հետ[3]: Նշենք, որ 2017թ.-ին ամբողջ աշխարհում երկրաջերմային կայանների նախագծերի վրա կատարվող ներդրումների ծավալները 36 %-ով նվազել են՝ հասնելով 1,4 միլիարդ ամերիկյան դոլարի, որը վերջին տարիների կտրվածքով եղել է ամենացածր մակարդակը: Նախորդող տարիներին, տարեկան ներդրումների միջին ծավալը կազմում էր մոտ 2 միլիարդ ամերիկյան դոլար[4]:

Ծախսերի միտումները: Եթե վերջին տարիներին արևային և հողմնային կայանների կառուցման վրա *ներդրումային ծախսերը*, ինչպես նաև էլեկտրական էներգիայի արտադրության ծախսերը՝ դրանց տեխնոլոգիաների և սարքավորումների գների նվազման արդյունքում նվազում են, ապա երկրաջերմային կայանների կառուցման ներդրումային ծախսերը գրեթե չեն նվազում, թեև էլեկտրաէներգիայի արտադրության 1 կՎտ.ժ-ի ծախսը բավականին ցածր է և նույնիսկ ամենացածրներից մեկն է վերականգնվող էներգիայի բոլոր աղբյուրների շարքում: Վերջիններս չեն նվազում, քանի որ չեն նվազում հորատանցքերի հորատման ծախսերը, որոնք ներդրումային ծախսերի զգալի մասն են կազմում՝ մոտ 40-70%-ը: Հորատանցքերի առանձնահատկություններից և ամրացնող նյութերի հատկություններից կախված՝ 1 գծամետր հորատանցքի ինքնարժեքը ներկայում տատանվում է 1600-2400 եվրոյի սահմաններում:

Ինչպես նշեցինք, երկրաջերմային էլեկտրակայանների նախագծերը կապիտալատար են, սակայն ունեն ցածր և կանխատեսելի գործառնական ու սպասարկման ծախսեր: Երկրաջերմային էլեկտրակայաների ամբողջական ներդրումային ծախսերը ծածկում են հետախուզման աշխատանքների և ռեսուրսների գնահատման ծախսերը (հետախուզական հորատանցքերի, արտադրական և ներմղման հորատանցքերի ծախսերը)[5], ինչպես նաև

[3]RENEWABLES 2018, Global Status Report, Ren 21, www.ren21.net

[4]Global Trends in Renewable Energy Investment 2018, http://www.fs-unep-centre.org (Frankfurt am Main)

[5]**Ծանոթ.** Հետախուզման ծախսերը նախատեսված են նախկին արդյունքների հաստատման, նոր տվյալների ստացման և սեյսմիկ հետազոտությունների հիմնավորման համար: Հորատման ծախսերի մեծությունը կախված է տեղանքի պայմաններից, որտեղ ծախսերը խորության մեծացման հետ մեծանում են: Որքան երկրաջերմային գրադիենտը բարձր է, այնքան քիչ է պետք հորատել նախատեսված ջերմաստիճանին հասնելու համար: Չնայած, ամեն դեպքում անհրաժեշտ ջերմաստիճանի կարելի է հասնել միշտ էլ որոշակի խորության վրա, թեև այդ դեպքում ապարների մեծ ճնշման արդյունքում ցածր թափանցելիությունը որոշակիորեն սահմանափակում է այդ ռեսուրսների օգտագործումը: Նախագծերի տնտեսական կենսունակությունը պայմանավորված է նաև հիդրոթերմալ ջրերի քանակությամբ, որտեղ հորատանցքի արտադրողականությունը պետք է թույլ

դաշտային ենթակառուցվածքների (ճանապարհներ, ջրատարներ, գազամատակարարում, էներգամատակարարում և այլն), հեղուկների հավաքման և հեռացման համակարգերի, վերերկրյա և ստորգետնյա սարքավորումների, էլեկտրակայանի կառուցման և դրա հետ համակցված գործընթացների, նախագծի զարգացման, ցանցի միացման և մնացած ծախսերը: Ներդրումային ծախսերը՝ հորատանցքների խորության և հորատանցքների թվով պայմանավորված, ունեն բարձր զգայունություն: Հորատման աշխատանքների տեսակարար կշիռը ներդրումային ծախսերում կարող է տատանվել մոտավորապես 40-70%-ի սահմաններում, իսկ էլեկտրակայանների կառուցումը ներդրումային ծախսերում մոտ՝ 20-50%: Մնացած ծախսերը, կազմում են՝ հիդրոթերմալ ջրերի շրջանառության, ենթակառուցվածքների, հեղուկների ամբարների կառուցման, մղման պոմպերի, պլանավորման, ցանցի միացման և այլ ծախսերը[6]: Հետաքրքիր է, որ օրինակ Ինդոնեզիայում գործող մի քանի բինարային ցիկլի կայանների պարագայում ընդհանուր ներդրումների կառուցվածքում հորատանցքների հորատման ծախսերը ցածր են՝ տատանվում են 24-34%-ի սահմաններում, իսկ ահա էլեկտրակայանի կառուցման ծախսերը բարձր են և կազմում են 54-56%, ենթակառուցվածքների ծախսերը՝ 1-7%, պլանավորման և մենեջմենթի ծախսերը՝ 3-12%, իսկ ապահովագրությունը և այլ ծախսերը միասին՝ 4-10%: Սովորաբար բինարային ցիկլով կայանների ORC (Organic Rankine Cycle) կամ Kalina էլեկտրակայանների ներդրումային ծախսերը ավելի բարձր են, քան չոր գոլորշու և թաց գոլորշու կայաններինը:

Իմիջիայլոց, բավականին թանկ են նաև՝ պետրոթերմալ (Petrothermal) կամ ապարաջերմային ռեսուրսներ յուրացնող կամ այսպես կոչված Stimulated Geothermal Systems (SGS) համակարգերը, որոնք օգտագործում են ոչ թե ընդերքի հիդրոթերմալ ջրերը, այլ ապարներում կուտակված ջերմությունը, որի ջերմությունը փոխանցվում է դրսից համակարգ մղվող ջրերին, որոնք էլ մղվում են դեպի վերգետնյա սարքավորումներ՝ փակ շրջանառություն կատարելով: Քանի որ շատ մեծ խորությունների վրա մեծ ճնշման արդյունքում ապարների ծակոտկենությունը փոքրանում է, ջուրը քչանում է, իսկ խթանման միջոցները, բնականաբար, օգտագործվում են նաև թափանցելիության բարձրացման նպատակով և բավականին ծախսեր են պահանջվում:

Երկրաջերմային էլեկտրակայանների հիմնադրման ներդրումային ծախսերը, կախված տեխնոլոգիաներից, 1 ՄՎտ տեղակայման հզորության համար տատանվում են՝ 1,8-5 մլն. ԱՄՆ դոլլարի սահմաններում: Ավելի կոնկրետ, 1ՄՎտ-ի համար ներդրումային ծախսերը աշխարհում 2016-2017թ.-ի դրությամբ կազմել են՝ բինարային ցիկլով աշխատող կայանների համար՝ 4,2-5 միլիոն դոլար, չոր գոլորշու կայանների համար՝ 3,7-3,9 միլիոն դոլար, թաց (ֆլեշ) կայանների համար՝ 2-5 միլիոն դոլար սահմաններում[7]:

Ընթացիկ ծախսերի մակարդակը հիմնականում նույնպես կախված է կայանի տիպից և տեխնոլոգիայից, երկրաջերմային դաշտի բնութագրից և իրականացվող տնտեսական քաղաքականությունից: Կայանների կառուցումից հետո, քիչ շուկայական գործոններ են հետագայում ազդում ընթացիկ ծախսերի մակարդակի վրա, այդ պատճառով դրանք կայուն են: Կարող են որոշակիորեն ազդել գնաճի տատանումները: Նավթի և գազի գների տատանումները բորսաներում չեն ազդում երկրաջերմային էլեկտրաէներգիայի ծախսերի մակարդակի վրա: Յուրաքանչյուր երկրաջերմային էներգակայան ունի իր առանձնա-

տա ջրերի բավարար հոսքի առկայություն և հոսքերի արագություն:

[6]**Ծանոթ.**Կայանների չափսերը կախված են՝ կիրառվող տեխնոլոգիայից, ռեսուրսի քանակից, ռեսուրսի ջերմաստիճանից, ջերմաջրերի հատկություններից, տեղադրման խորությունից և ապարների թափանցելիությունից, ինչպես նաև բնապահպանական քաղաքականությունից, հարկային քաղաքականությունից, ֆինանսավորման տարբերակներից և ծախսերից: **Թաց գոլորշու տեխնոլոգիաներով կայանների (Flash steam power stations)** հզորությունները մեկ ցիկով տեխնոլոգիաների դեպքում կարող են հասնել մինչև 80 ՄՎտ, կրկնակի ցիկլի տեխնոլոգիաների դեպքում մինչև 110 ՄՎտ, իսկ եռակի ցիկլի դեպքում 60-ից մինչև 150 ՄՎտ: **Ուղղակի և չոր գոլորշու կայանները (Dry Steam power stations)** սովորաբար ունենում են 8 ՄՎտ-ից մինչև 140 ՄՎտ հզորություններ: **Բինարային կայանները** (Binary cycle power stations) 1 ՄՎտ-ից մինչև 50 ՄՎտ չափով: **Համակցված ցիկլի (Combined power stations) կամ հիբրիդային կայանների** հզորությունները տատանվում է մի քանի ՄՎտ-ից մինչև 10 ՄՎտ:

[7]IRENA, Geothermal Power: Technology Brief, International Renewable Energy Agency, 2017

հատուկ ծախսերը, որը կախված է արտադրողականությունից, ռեսուրսի բնութագրից, բնապահպանական կանոնավորումից, հարկերից, օպերատորի գործողություններից և այլ տնտեսական գործոններից:

Եվ այսպես. 2016-2017թ.-ին 1 կՎտ.ժ-ի էներգիայի հավասարակշռված ծախսը (LCOE)[8] տատանվել է՝ բինարային կայանների համար 0,08-0,12 ԱՄՆ դոլարի սահմաններում, թաց (ֆլեշ) գոլորշու կայանների համար՝ 0,04-0,12 ԱՄՆ դոլար, չոր գոլորշով կայանների համար՝ 0,06-0,07 ԱՄՆ դոլար[9]:

Երկրաջերմային էլեկտրաէներգիան թանկ է նստում աֆրիկյան մայրցամաքի երկրներում՝ միջինում 0,09 ԱՄՆ դոլար կամ 9 ԱՄՆ ցենտ 1 կՎտ.ժ-ի համար, Կենտրոնական Ամերիկայում՝ 0,10 ԱՄՆ դոլար, Եվրոպայում՝ 0,10 ԱՄՆ դոլար, համեմատաբար էժան է Ասիայում՝ 0,05 ԱՄՆ դոլար, Հարավային Ամերիկայում՝ 0,04 ԱՄՆ դոլար[10]:

Ամփոփելով նշենք, որ 2016-2017թ.-ին ներդրումային ծախսերը երկրաջերմային էլեկտրակայանների կառուցման համար միջինում կազմել է՝ 2959 դոլար/ՄՎտ: Գլոբալ LCOE-ն կազմել է՝ 0,04-0,14 ԱՄՆ դոլար/կՎտ.ժ սահմաններում, միջինում՝ 0,07 ԱՄՆ դոլար կամ 7 ցենտ, որտեղ գործառնական և սպասարկման (O&M) ծախսերը կազմել են՝ 0,01-0,03 ԱՄՆ դոլար/կՎտ.ժ:

Սակագները (Feed in tariffs) երկրաջերմային էներգետիկայի զարգացման համար տնտեսական քաղաքականության ամենակարևոր գործիքներից մեկն է: ԵՄ երկրներում այն ամենատարածված խթանն է, որն ապահովում է ֆիքսված գին մեկ կՎտ.ժ էլեկտրաէներգիայի համար: Շատ երկրներում, երկրաջերմային էլեկտրաէներգիայի արտադրության ոլորտում ներդրողների մոտ կոմերցիոն հետաքրքրություն առաջացնելու համար, սակագները խաղում են ֆունդամենտալ դեր: Այս ռեսուրսի ամենաարագ զարգացումը ապահովելու համար սակագնային քաղաքականությունը ամենահաջող քաղաքականությունն է: Ներկայում մի քանի տասնյակ երկրներ օգտագործում են սակագնային համակարգը (համակցված նաև բոնուսային և քվոտային համակարգերը):

Այս սակագները էլեկտրաէներգիայի արտադրողներին կայուն երաշխիքներ են տալիս 10-20 տարիների կտրվածքով: Բնականաբար՝ տարբեր երկրներում դրանք ունեն տարբեր մակարդակներ, որոնք ներկայացվում են հաճախ նվազագույն (min) և առավելագույն (max) մակարդակներում, օրինակ Շվեյցարիայում, 1 կՎտ.ժ-ի համար այն կազմում է 0,18 եվրոյից մինչև 0,33 եվրո, որտեղ մաքսիմում սակագինը՝ 33 եվրոցենտը, աշխարհում ամենաբարձրներից մեկն է և նախատեսված է մինչև 5 ՄՎտ հզորության կայանների համար: Իսկ ահա Գերմանիայում, մինիմում մակարդակը կազմում է՝ 0,25 եվրո կՎտ.ժ և 0,30 եվրո/կՎտ.ժ մաքսիմում մակարդակը՝ պետրոթերմալ կայանների համար: Ֆրանսիայում այն կազմում է 0,20 եվրո/կՎտ.ժ, Խորվաթիայում 0,17 եվրո/կՎտ.ժ, իսկ ամենացածրներից է Ուկրաինայում՝ 0,08 եվրո/կՎտ.ժ, Ավստրիայում՝ 0,075 եվրո/կՎտ.ժ[11]: Կիրառվում է նաև բոնուսների համակարգը, ինչպես օրինակ Գերմանիայում՝ վերը նշված 0,25 եվրո/կՎտ.ժ սակագնում 0,05 եվրո աջակցություն պետության կողմից[12]:

Երկրաջերմային ռեսուրսների յուրացման հնարավորությունները և հեռանկարները Հայաստանում: Ռազմավարական տեսակետից վերականգնվող էներգետիկայի զարգացումը Հայաստանում այլևս կասկած չի հարուցում, հատկապես, եթե հաշվի առնենք նոր ատոմակայանի կառուցման անորոշ հեռանկարը, բնական գազի անխափան մատակարարման և գնային ռիսկերը, ինչպես նաև հիդրոէներգետիկայի ընդլայնման համար մեր ջրային ռեսուրսների սահմանափակ հնարավորությունները: Իր հերթին՝ վերականգնվող էներ-

[8]LCOE- Levelized Energy Cost, որն էլեկտրաէներգիայի արտադրության միջին հաշվարկային ինքնարժեքն է էլեկտրակայանի ամբողջ գործունեության ընթացքում, 1 Կվտ.ժ-ի համար իր մեջ հաշվարկում է ներդրումային ծախսերը, գործառնական և սպասարկման (O&M) ծախսերը, ֆինանսական ծախսերը ըստ տարեկան արտադրված էլեկտրաէներգիայի քանակի և կայանի գործունեության տևողության:

[9]IRENA (2018), Renewable Power Generation Costs in 2017, International Renewable Energy Agency, Abu Dhabi.

[10]RENEWABLES 2018, Global Status Report, Ren 21, www.ren21.net

[11]Feed-in Tariffs Blessing or Curse for Geothermal Energy? Worldwide Background and Overview Dr. Eckehard Buscher IGO - The International Coordination Office of German Geothermics, GRC *Transactions*, Vol. 36, 2012

[12]Geothermal Investment Guide, November 2013, Authors: M. Serdjuk (GGSC), P. Dumas & L. Angelino (EGEC), L. Tryggvadóttir (Mannvit)

գետիկայի համար, հատկապես հեռանկարային համարվող արևային կայանների և հողմնային էներգետիկայի կողքին, մեծ ուշադրություն պետք է հատկացվի երկրաջերմային ռեսուրսների յուրացմանը, որը վերը նշված ռեսուրսների նկատմամբ ունի իր առավելությունները և միաժամանակ նաև թույլ կողմերը:

Հանրապետության տարածքում նորագույն հրաբխականության լայն տարածումը և տեկտոնական ակտիվությունը, ինչպես նաև խորքային տաք ջրերի բազմաթիվ երևակումները հուշում են երկրաջերմային խոշոր ռեսուրսների առկայության մասին[13]: Հայաստանում ամենազգալի չափով երկրաջերմային ռեսուրսները տեղաբաշխված են բարձր ջերմային հոսքի գոտում, որը ձգվում է երկրի կենտրոնական մասով՝ մոտավորապես հյուսիսարևմուտք-հարավարևելք ուղղությամբ[14]: Արևելյան հրաբխային գոտում բարձր ջերմապարունակությամբ երկրաջերմային ռեսուրսների առկայություն նույնպես հնարավոր է[15]: Հայաստանը ունի երկրաջերմային խոշոր պաշարների նախադրյալներ և բոլոր հեռանկարային վայրերում անհրաժեշտ է կատարել ավելի մեծ ծավալների երկրաբահետախուզական աշխատանքներ: Ամենահեռանկարային տեղամասերից են՝ Ջերմաղբյուրի, Կարկարի, Գրիձորի, Սիսիանի, Վայոց սարի, Ակնալճի, հայկական ատոմակայանի, Մուխանի տեղամասերը[14]: Այնումենայնիվ՝ Հայաստանում էներգետիկ նշանակության երկրաջերմային ռեսուրսների վատ ուսումնասիրված լինելու պատճառով ամբողջ ներուժի և զարգացման ուղղությունների մասին դեռևս շատ բան ասել չենք կարող:

Եվ այսպես, էներգիա ստանալու նպատակով երկրաջերմային ռեսուրսների յուրացումը Հայաստանում պայմանականորեն կարող ենք բաժանել երեք ուղղությունների՝

Ոչ խորը կամ մակերևույթամերձ երկրաջերմային էներգետիկա՝ ապակենտրոնացված, փոքր և միջին հզորություններով կայանների ստեղծումով, որոնք կարող են օգտագործվել սեփական տների, շենքերի, հյուրանոցների, մանկապարտեզների, դպրոցների և այլ կառույցների հովացման, ջեռուցման և տաք ջրով ապահովելու համար: Այստեղ՝ երկրի մակերևույթին մոտ տեղամասերում, ապարների 7-ից 12°C համեմատաբար ցածր ջերմաստիճանը կարող է ջերմային պոմպի օգնությամբ վերափոխվել և օգտագործվել էներգետիկ նպատակներով: Հիմնական թերությունը՝ ծախսատար է, առավելությունը՝ անկախ բնակլիմայական պայմաններից և օրվա հատվածից կարող են կիրառվել ցանկացած պայմաններում, բնապահպանական տեսակետից բարենպաստ են, ապահովում են երկարատև և կայուն ջերմային էներգիա, հովացում և տաք ջուր: Կարող են աշխատել նաև համակցված՝ արևային և հողմնային փոքր հզորության սարքավորումների հետ, որի արդյունքում այդ կայանների արդյունավետությունը ավելի է մեծանում:

Երկրորդ ուղղությունը, դա մեծ խորություններում գտնվող (սովորաբար 400մ -ից խորը), սակայն ցածր ջերմապարունակություն (40-100^{0}C) ունեցող հիդրոթերմալ ռեսուրսներից էներգիա արտադրող կենտրոնացված ջերմային կայանների զարգացումն է: Այստեղ նույնպես մեծ ներդրումների անհրաժեշտություն կա, սակայն պետք է հաշվի առնել, որ ցածր ջերմապարունակություն ունեցող ռեսուրսները ավելի տարածված են և սրանց կարևորությունը կիրառման տեսակետից ավելի է մեծանալու, այդ թվում՝ հեռանկարային են նաև ապազայում էլեկտրաէներգիա ստանալու տեսակետից:

Երրորդ ուղղությունը, դա խորը երկրաջերմային ռեսուրսներից էլեկտրաէներգիայի

---

[13]**Ծանոթ**.Երկրաջերմային ռեսուրսների յուրացման համար անհրաժեշտ և ամենակարևորագույն պարամետրերից են՝ **ռեսուրսների ջերմաստիճանը**, որն էական նշանակություն ունի կայանի օպտիմալ ջերմային ցիկլը որոշելու համար, այսինքն թե ինչ ջերմաստիճան կարող է մատակարարվել կայանին, **հորատանցքներից հեղուկի արտահոսքի քանակը**, որն անհրաժեշտ է, թե ինչ քանակի հեղուկ է հարկավոր ապահովել էլեկտրակայանին, **ռեսուրսի խորությունը**, որը սահմանում է, թե որքան խորը պետք է լինեն հորատանցքերը, որն էլ զգալի չափով ազդում է կայանի ծախսերի վրա: Իսկ **ռեսուրսային տարածքի չափը** անհրաժեշտ է թե ինչ մեծության կայան կարող է կառուցվել: Կարևոր է նաև հորատանցքերում **հեղուկի ճնշումը**:

[14]Հովհաննես Ազիզբեկյան, Խաչիկ Ստամբոլցյան, Երկրաջերմային էներգիայի ուսումնասիրման և հայտնաբերման հեռանկարները Հայաստանի տարածքում, Իրատես, 2015

[15]Moushegh Badalyan, GEOTHERMAL FEATURES OF ARMENIA: A COUNTRY UPDATE, Institute of Geophysics and Engineering Seismology of the National Academy of Science of Armenia, Leningradian St., Giumri, 377501, Republic of Armenia, , Proceedings World Geothermal Congress 2000, Kyushu - Tohoku, Japan, May 28 - June 10, 2000

արտադրությունն է՝ խորը (400-3000մ) և շատ խորը (3000-6000մ և ավել) խորություններից տաք և գերտաք ջերմապարունակության հիդրոթերմալ ռեսուրսներից (100°C-ից մինչև 350°C) էլեկտրաէներգիա, ինչպես նաև կոմբինացված՝ էլեկտրաէներգիա և ջերմային էներգիա արտադրող կենտրոնացված կայանների կառուցումն է: Ինչպես նշել ենք արդեն, սրանք իրենց հերթին լինում են չոր գոլորշով, թաց գոլորշով, բինարային ցիկլով, ինչպես նաև համակցված կայաններ:

Իր հերթին՝ Հայաստանում էլեկտրաէներգիա ստանալու նպատակով կարող են գործել երկրաջերմային ռեսուրսների զարգացման 3 հնարավոր տարբերակներ (բայց ոչ սցենարներ): **Առաջին դեպքում** դա գոլորշու 180-350°C բարձր ջերմաստիճանի առկայությամբ ռեսուրսներից էլեկտրաէներգիա արտադրվող չոր գոլորշու կայաններն են: Սովորաբար այս կայանները ունենում են մեծ հզորություն և արտադրողականություն: Հատկապես տարածված են Իտալիայում: Ինչպես նշեցինք՝ Հայաստանում նույնպես հնարավոր են չոր գոլորշու ռեզերվուարների առկայություն:

Երկրորդ տարբերակը ենթադրում է թերմալ ջրերի (ջերմաջրերի) 180°C-ից բարձր ջերմաստիճան ունեցող ռեսուրսներից էլեկտրաէներգիայի ստացում, որի դեպքում կիրառելի կլինեն թաց գոլորշու տեխնոլոգիաները, որոնց կայանները նույնպես ունենում են մեծ հզորություններ և մեծ արտադրողականություն, հետևաբար՝ ավելի ցածր ինքնարժեք:

Երրորդ տարբերակի դեպքում, երբ ջերմաջրերի ջերմաստիճանը համեմատաբար ցածր է (100-180°C), այդ ժամանակ կիրառելի են **բինարային ցիկլային տեխնոլոգիաներ**[16]: Այստեղ կարող են օգտագործվել **Kalina** կամ **Organic Rankine Cycle (ORC)** տեխնոլոգիաները: ORC կամ Kalina ցիկլի սարքավորումների օգտագործումը Հայաստանում կարող է տնտեսական առումով որոշակի արդարացված լինել, երբ ջերմաջրերի ջերմաստիճանը լինի գոնե 150-180°C սահմաններում: Ավելի ցածրի՝ 100-150°C դեպքում դրանք վիճարկելի են: Ցածր ջերմաստիճանի ջերմաջրերի՝ 110°C դեպքում կիրառելի է նաև Կալեքս տեխնոլոգիան[17]: Բոլոր դեպքերում, բինարային կայանները, ինչպես նշեցինք, ավելի կապիտալատար են և ծախսերը ավելի բարձր են: Եթե թաց (ֆլեշ) գոլորշու կայանների դեպքում Հայաստանում գուցե և տնտեսապես հնարավոր է կոմերցիոն նպատակներով էլեկտրաէներգիայի ստացումը, ապա բինարային կայանների դեպքում՝ առանց պետական օժանդակության և ֆինանսական աջակցության մեխանիզմների, միանշանակ, դրանք շահույթով չեն կարողանա աշխատել: Նշենք, որ բինարային տեխնոլոգիաների նախագծման և շահագործման մեծ փորձառություն ունեն գերմանացիները, որոնց փորձառությունը կարող է օգտակար լինել նաև Հայաստանի համար[18]:

Հայաստանում տեսականորեն կիրառելի են նաև **պետրոթերմալ ռեսուրսների յուրացման համակարգերի՝ Stimulated Geothermal Systems (SGS)** շահագործումը, քանի որ մեզ մոտ բացի չոր գոլորշու ռեզերվուարներից, թաց ջրագոլորշու տաք խառնուրդների հանքավայրերից, թերմալ ջրերի հանքավայրերից առկա են նաև չոր, տաք ժայռային ապարների շերտեր, որոնք տաքանում են մագմայի միջոցով և մագմային օջախներ՝ մինչև 1300°C ջերմաստիճան հալեցված լեռնային ապարներով, որոնք իդեալական պայմաններ են ստեղծում վերը նշված համակարգերի շահագործման համար, թեև սրանք ամենաթանկարժեք և ծախսատար կայաններն են:

Տևողությունը: Երկրաջերմային կայանների նախագծերի իրականացումը՝ գաղափարից մինչև գործարկում սովորաբար տևում է 5-ից 7 տարի, իսկ կայանների շահագործումը՝ 30 տարի և ավել: Երկրաջերմային ռեսուրսների հետազոտման և զարգացման փուլերը հիմնա-

[16]**Ծանոթ.Բինարային կամ երկուական ցիկլի տեխնոլոգիա**, որն գործում է, որպես փակ ջերմափոխանակման համակարգ, որի դեպքում երկրաջերմային ջրերի («առաջնային հեղուկ») ջերմությունը փոխանցվում է «երկրորդական» կամ «աշխատանքային» ցածր ջերմաստիճանում եռացող հեղուկին, որի առաջացած գոլորշին է օգտագործվում է գեներատորի տուրբիններում էլեկտրաէներգիա արտադրելու համար

[17]Կարկարի պոտենցիալ երկրաջերմային էլեկտրակայանի տնտեսական և ֆինանսական գնահատումը: Վերջնական հաշվետվություն, Նոյեմբեր 2012, Դենզլ Հենքինսոն

[18]Երկրաջերմային (գեոթերմալ) ռեսուրսների յուրացումը Գերմանիայում և գերմանական փորձի կիրառման հնարավորությունները Հայաստանում, Սարգիս Մանուկյան, Սոնա Բաղդասարյան, «Այլընտրանք» գիտական հանդես, 2018, N4

կանում բաղկացած են լինում հետևյալ 8 փուլերից[19]՝
(1) Նախնական ուսումնասիրություն (Preliminary Survey),
(2) Հետազոտում (Exploration), այստեղ իրականացվում է նաև նախնական գնահատման կամ Prefeasibility փուլը,
(3) Փորձարկման հորատում (Test drilling),
(4) Նախագծի վերանայում, պլանավորում և իրագործելիության գնահատում (Project review and planning, Feasibility),
(5) Զարգացում (Field development),
(6) Էլեկտրակայանի կառուցում (Power Plant Construction),
(7) Գործարկում (Commissioning),
(8) Շահագործում (Operation):

Այս ամբողջ գործընթացում, կկարևորենք նաև երկրաջերմային նախագծի իրականացման համար հիմնական թույլտվությունների ապահովումը, որոնց ձեռքբերման բարդությունները երկրաջերմային էներգետիկայի զարգացման հիմնական խոչընդոտներից են համարվում: Դրանք են՝ ջրային, հողային և լեռնահատկացման իրավունքները, հետախուզման թույլտվությունները, շահագործման թույլտվությունները, հորատանցքերի անցկացման թույլտվությունը, ինչպես նաև էլեկտրակայանների կառուցման և գործունեության համար թույլտվությունները: Կարևոր խնդիրներից է համարվում նաև բնօգտագործման և բնապահպանական վճարների որոշումը, Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության (ՇՄԱԳ) կամ միջազգային կիրառություն ունեցող Բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատման (ԲՍԱԳ) իրականացումը:

Սովորաբար, երկրաջերմային կայանների գործունեությունը պահանջում է զգույշ մենեջմենթ, իսկ ժամանակի ընթացքում անընդհատ օպտիմալացում: Բոլոր դեպքերում երկրաջերմային կայանների կառուցման համար մի քանի տասնյակ կամ հարյուրավոր միլիոն դոլար ներդրումներ պետք է ապահովել: Ինչպես օրինակ, Ջերմաղբյուրի երկրաջերմային 25 ՄՎտ հզորությամբ, 194,4 մլն. կՎտ.ժ արտադրողականությամբ կայանի ներդրումների համար պահանջվում է՝ 44 մլն. ամերիկյան դոլար, որտեղ ջերմաջրերի ջերմաստիճանը 2500-3000 մետրի վրա կանխատեսվում է 250°C: Իսկ 28,5 ՄՎտ հզորությամբ, 220-250 մլն.կՎտ.ժ տարեկան արտադրողականությամբ Կարկարի էներգակայանի համար անհրաժեշտ է 100 մլն. ամերիկյան դոլար[20]: Համենայն դեպս, Կարկարի տեղամասում արդեն հորատված հետախուզական B-1 հորատանցքի 1460 մ խորության վրա ջերմաջրերի առավելագույն ջերմաստիճանը կազմել է մոտ 116°C, իսկ որոշակի հեռավորության վրա հորատված B-2 հորատանցքում 1600 մետր խորության վրա այն կազմել է մոտ 124°C, որտեղ, կոմերցիոն նպատակներով օգտագործելու համար, հորատանցքերում ջրի քանակությունը բավականին ցածր է[17]: Եթե հետագա հետախուզական աշխատանքների արդյունքում փաստացի տվյալները չհամապատասխանեն կանխատեսվող տվյալներին, ապա, լավագույն դեպքում, հնարավոր կլինի բինարային կայանի օգտագործումը, որի դեպքում հզորությունը և արտադրվող էլեկտրաէներգիայի քանակը ավելի ցածր կլինեն, իսկ ներդրումային և գործառնական ծախսերը՝ համեմատաբար բարձր:

Անկախ ամեն ինչից՝ ընդհանուր պատկերը իմանալու համար պետք է այդ ռեսուրսների ներուժի բացահայտման մեծածավալ երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացում: Հաջորդ փուլում պետք է առանձնացնել ամենահեռանկարային տեղամասերը և այդ տեղամասերի համար ապահովել նախագծերի տնտեսական և ֆինանսական կենսունակության վերլուծություններ: Անհրաժեշտ է կազմել էլեկտրաէներգիայի ծախսերի կառուցվածքը և դրանց վճռորոշ բաղադրիչները, որի միջոցով պետք է պարզվի, թե ինչ միջոցառումներ պետք է իրականացվեն երկրաջերմային ռեսուրսների յուրացումը տնտեսապես նպատակահարմար դարձնելու համար:

Կարևոր է, որ երկրաբանահետախուզական դրական արդյունքների դեպքում սահմանվի ամենաքիչը 9-10 ամերիկյան ցենտին համարժեք սակագին (43-48 դրամ) 1 կՎտ.ժ-ի երկրաջերմային էլեկտրաէներգիայի համար, որը համարժեք կլինի, կամ գոնե ոչ ցածր կլի-

[19]Best Practices Guide for Geothermal Exploration, IGA, Germany, 2014

[20] http://investmentprojects.am/

նի Հայաստանում հաստատված մյուս վերականգնվող էներգիայի աղբյուրների սակագներից[21]:

Երկրաջերմային էլեկտրակայանները, իհարկե, կարող են Հայաստանի համար էներգիայի մատակարարման տնտեսական և ֆինանսական առումով կենսունակ և կոմերցիոն լինել, եթե տեղանքի երկրաջերմային ռեսուրսի ջերմաստիճանը 250-300°C-ից բարձրը լինի: Եթե առկա է թերմալ ջրերի բարձր և ջերմաստիճան, անհրաժեշտ ծավալի հեղուկի արտահոսք, ապա կարող է կառուցվել թաց գոլորշու (ֆլեշ) ցիկլի էլեկտրակայան: Ենթադրվում է, որ ֆլեշ ցիկլի տեխնոլոգիայի դեպքում 1 կՎտ էլեկտրաէներգիայի արժեքը կտատանվի՝ 0,04-0,07 դոլարի սահմաններում: Իսկ Ֆլեշ տեխնոլոգիաների էլեկտրակայանի ներդրումային ծախսերը կկազմեն՝ 2-3 միլիոն ամերիկյան դոլար 1 ՄՎտ հզորության համար, իսկ բինարային կայանի դեպքում 3-4 մլն դոլար 1 ՄՎտ-ի համար:

Ինչպես նշեցինք, ներդրումների համար պետք է երկրաջերմային ռեսուրսների առկայություն և շահութաբերություն ապահովող հաստատված նախագիծ[22]: Այս ռեսուրսների գնահատման համար իրականացվում են հետախուզման, հորատման աշխատանքների զգալի ծախսեր, իսկ արդյունքները ռիսկային են և դա էլ հաճախ պատճառ է լինում ներդրումներից հրաժարվելու համար և բանկերը, սովորաբար, դժվարությամբ են վարկեր տրամադրում: Դրա համար, ներդրողները նախօրոք պետք է ձեռք բերեն ֆինանսավորման միջոցներ տարբեր աղբյուրներից՝ գոնե սկզբնական փուլերում որոշակի աշխատանքներ իրականացնելու համար: Կառավարությունը կարող է ռիսկը և ծախսերը նվազեցնել տարբեր եղանակներով: Կարող է ստեղծել պետական ընկերություններ, որոնք հետախուզում և շահագործում են երկրաջերմային ռեսուրսները, հետագայում՝ այն մասնավոր ընկերություններին, որոնք ցանկություն ունեն զբաղվելու այս բիզնեսով, խրախուսելու, ինչու չէ նաև փոխանցելու համար: Կամ այլ եղանակ է, մասնավոր ընկերության հորատման ծախսերի մի մասը պետության կողմից իր վրա վերցնելը կամ պետություն-մասնավոր սխեմաներով ռիսկերի կառավարումը: Հորատման տվյալների, երկրաջերմային համակարգերի և գրունտային ջրերի կոնցեպտուալ մոդելների առկայության դեպքում, ռիսկերը կարող են նվազել և ֆինանսական խոչընդոտները կարող են վերանալ՝ դրանով նպաստելով ռեսուրսների յուրացման արագացմանը:

in no case, it can be less than that of international law. The tribunal in *Petrobart Ltd. v. The Kyrgyz Republic* case interpreted that the article obliges the host state to have judicial proceedings in conformity with the rule of law in a democratic society and show respect to the investor that has made an investment under the Treaty[33]. *Nykomb v. Latvia* tribunal found a breach of the obligation to not impair investor rights through "unreasonable or discriminatory measure" under the circumstances when the investor has been obliged by host state to pay higher tariffs than it was prescribed by the law when the investor made its investment and other companies continued to pay a lower tariff compared to the claimant[34].

Article 10 (1) Umbrella Clause

The last sentence of Article 10(1) contains an umbrella clause which stipulates that "each Contracting Party shall observe any obligations it has entered into with an Investor or an Investment of an Investor of any other Contracting Party"[35]. The clause has the obligatory/ hard commitment for states that they "shall observe" their commitments (including contractual) outside of the ECT[36]. Additionally, "any obligations" wording can be considered as broad wording that can be interpreted extensively.

There is one more nuance in the ECT connected with the umbrella clause. In disputes settlement clause while the signatory parties give an unconditional consent to international arbitration, a group of countries listed in Annex IA exclude this jurisdiction for umbrella clause[37].

Article 10 (7) National Treatment and Most-Favoured-Nation

ECT obliges the contracting states to provide post-establishment NT and MFN treatment (whichever is more favourable) in relation to investors and investments of other contracting states as well as activities associated with them in "management, maintenance, use, enjoyment or disposal"[38]. The treaty does not provide the same treatment standards for the pre-establishment stage of investments, which allows the host countries discretion to potentially favour or disfavour domestic enterprises or certain foreign enterprises in pre-establishmenrt stage of investment. Currently, there is no ECT based case law concerning NT and MFN clauses, thus, the future case law will allow a better understanding of the interpretation of these clauses.

Article 13 Expropriation

ECT Part III provides the investors with the assurance that their property will not be "nationalized, expropriated or subjected to a measure or measures having an effect equivalent to nationalization or expropriation". This definition evidently includes both direct and indirect (creeping) expropriation. The state can only expropriate the property "for a purpose which is in the public interest; not discriminatory; carried out under due process of law; accompanied by the payment of prompt, adequate and effective compensation." The compensation shall be the fair market value of the investment and be paid in freely convertible currency. In BIT context, the "fair market value" stipulation has been found to be favourable for investors and the conditions of expropriation fully reflect the international law standards. Further discussion on expropriation clause in the context of international investment agreements can be found in section.

Conclusion

To conclude, Energy Charter Treaty, in terms of investment protection is the biggest multilateral treaty with the largest geographical area coverage. The scope of the treaty is limited to activities in the energy sector, and thus only investments in this sector can be protected by the treaty. Consequently, ECT provides fair and equitable treatment and a minimum standard of treatment, umbrella clause, repatriation of profits, national treatment and most-favoured-nation, protection against unlawful expropriation and investor-state dispute settlement clause which enables the investors to bring claims against the host states in front of international arbitration. It was historically very important for Armenia being a signatory party to the Energy Charter Treaty, due to Armenia's lack of rich energy

---

[33] *Petrobart Ltd. v. The Kyrgyz Republic*, Arb. Inst. of the SCC, Case No. 126/2003 74 (2005), paras. 75-8.

[34] *Nykomb Synergetics Tech. Holding AB v. The Republic of Latvia*, Arb. Inst. of the SCC, Case No. 118/2001 34 (2003), paras. 28-34. See also, Reed, Lucy, and Lucy Martinez. "The Energy Charter Treaty: An Overview." *ILSA J. Int'l & Comp. L.* 14 (2007): 411-12.

[35] Energy Charter Treaty, Part III, Art. 10 (1), Dec. 17, 1994. See also some further discussion on Karimov, Elnur. "Umbrella Clauses within Energy Charter Treaty." *Baku St. UL Rev.* 4 (2018): 80-94.

[36] Last sentence of the Art. 10 (1) is an umbrella clause. We refer to it as the "last sentence" due to similar reference in ECT.

[37] Energy Charter Treaty (1994), 7. Annex IA, List of Contracting Parties not Allowing an Investor or Contracting Party to Submit a Dispute Concerning the Last Sentence of Art. 10(1) to International Arbitration (In Accordance with Art. 26(3)(C) and 27(2)).

[38] Ibid, Part V, Art. 10 (7), Dec. 17, 1994.

resources and the relative reliance on energy resources imported from Russia and Iran. ECT created a stable legal framework for the Russian investments in the energy sector of Armenia, which further facilitated the energy security and availability in Armenia.

Used Sources

1. Andrews-Speed, C. P., and T. W. Waelde. "Will the Energy Charter Treaty help international energy investors?" *Transnational Corporations* 5 (1996): 31-60;
2. Bielecki, Janusz. "Energy security: is the wolf at the door?" *The quarterly review of economics and finance* 42, no. 2 (2002): 235-240. Energy security is defined as "reliable and adequate supply of energy at reasonable prices"
3. Energy Charter Treaty (1994).
4. Gadiyev, Kamal. "Arbitration of Energy-Related Disputes under the Energy Charter Treaty." *Global Jurist* 8, no. 2 (2008).
5. Happ, Richard. "Dispute Settlement under the Energy Charter Treaty." *German YB Int'l L.* 45 (2002): 331-62;
6. *Compania deAguas delAconquija and Compagnie Generale des Eaux v. Argentine Republic*, Case. No. ARB/07/3, Award of 21 November 2000.
7. Hobér, Kaj. "The Energy Charter Treaty-An Overview." *J. World Investment & Trade* 8 (2007): 323-55;
8. Iacob, Iuliana-Gabriela, and Ramona-Elisabeta Cirlig. "The Energy Charter Treaty and settlement of disputes-current challenges." *Juridical Tribune Journal Tribuna Juridica* 6, no. 1 (2016): 71-3.
9. Karimov, Elnur. "Umbrella Clauses within Energy Charter Treaty." *Baku St. UL Rev.* 4 (2018): 80-94.
10. Konoplyanik, Andrei, and Thomas Walde. "Energy Charter Treaty and its role in international energy." *J. Energy Nat. Resources L.* 24 (2006): 523.
11. *Nykomb Synergetics Tech. Holding AB v. The Republic of Latvia*, Arb. Inst. of the SCC, Case No. 118/2001 34 (2003), paras. 28-34. See also, Reed, Lucy, and Lucy Martinez. "The Energy Charter Treaty: An Overview." *ILSA J. Int'l & Comp. L.* 14 (2007): 411-12.
12. *Petrobart Ltd. v. The Kyrgyz Republic*, Arb. Inst. of the SCC, Case No. 126/2003 74 (2005), paras. 75-8.
13. Reed, Lucy, and Lucy Martinez. "The Energy Charter Treaty: An Overview." *ILSA J. Int'l & Comp. L.* 14 (2007): 405-39;
14. Reed, Lucy, and Lucy Martinez. "The Energy Charter Treaty: An Overview." *ILSA J. Int'l & Comp. L.* 14 (2007): 415-28.
15. The World Bank, "Implementation Completion and Results Report (Tf-12163) on a Grant From the Global Environment Facility Trust Fund in The Amount of Us$1.82 Million To The Republic Of Armenia For An Energy Efficiency Project", Report No: Icr00003835, November 18, 2016.
16. Tucker, Andrew EL. "The Energy Charter Treaty and Compulsory International State/investor Arbitration." *LJIL* 11 (1998): 513-26;
17. U.S. Department of Commerce's International Trade Administration, "Armenia-Energy Sector", 2017.
18. Walde, Thomas W. "Energy Charter Treaty-based Investment Arbitration: Controversial Issues." *J. World Investment & Trade* 5 (2004): 373-412.

Становление и развитие концепции международного водотока (судоходные и несудоходные использования)

Мейроян Э. С.
Российско-Армянский (Славянский) Университет (Армения, Ереван)
edgar.meyroyan@yahoo.com

Ключевые слова: международный водоток, судоходство, несудоходные виды использования, Конвенция о Праве Несудоходных Видов Использования Международных Водотоков 1997 года

Միջազգային ջրահոսքի հասկացության ձևավորումը և զարգացումը (նավարկային և ոչ նավարկային օգտագործումներ)

Մեյրոյան Է. Ս.
Հայ-Ռուսական (Սլավոնական) Համալսարան (Հայաստան, Երևան)
edgar.meyroyan@yahoo.com

Ամփոփում: Սույն հոդվածը վերլուծում է միջազգային ջրահոսքերի միջազգային իրավական կարգավորման հիմնահարցերը, ներառյալ նման ջրահոսքերի նավարկային և ոչ նավարկային բնույթի օգտագործումները, ինչպես նաև նշյալ հասկացության պատմական զարգացումը։ Հոդվածի հեղինակը, մասնավորապես, վերլուծում է պատմական մոտեցումները և հնագույն քաղաքակրթություններում գոյություն ունեցած իրավական գործիքները, այնուհետև դիտարկում է նավարկության կարևորությունը միջազգային ջրահոսքերի իրավունքում և վերջինիս փոխհարաբերակցությունը ջրահոսքերի ոչ նավարկային բնույթի օգտագործումների հետ, որոնք ժամանակի ընթացքում ձեռք են բերել մեծ նշանակություն
Հիմնաբառեր՝ միջազգային ջրահոսք, նավարկություն, օգտագործման ոչ նավարկային տեսակներ, միջազգային ջրահոսքերի ոչ նավարկային տեսակների օգտագործման իրավունքի մասին 1997 թ. կոնվենցիան

The Formation and Development of the Concept of the International Watercourse (Navigational and Non-Navigational Uses)

Meyroyan E. S.
Russian-Armenian (Slavonic) University (Armenia, Yerevan)
edgar.meyroyan@yahoo.com

Abstract: This article provides an analysis of the international legal framework of international watercourses, including navigational and non-navigational uses of such watercourses, along with the historical development of the said concept. In particular, the author of the article analyzes the historical approaches and legal instruments that existed in ancient civilizations, and then considers the importance of navigation in the law of international watercourses, and the latter's relationship with non-navigational uses of watercourses, which over time have gained massive importance.
The author discusses the above issues predominantly through the analyses of respective instruments, judicial cases, as well as teachings of publicists.
Keywords: international watercourse, navigation, non-navigational uses, Convention on the Law of the Non-Navigational Uses of International Watercourses of 1997.

Концепция водотока находит свое определение в Конвенции о Праве Несудоходных Видов Использования Международных Водотоков 1997 года, где "водоток" представляется как "систем[а] поверхностных и грунтовых вод, составляющих в силу своей физической взаимосвязи единое целое и обычно имеющих общее окончание".[1] В этом случае, "международный водоток" по смыслу Конвенции "означает водоток, части которого находятся в различных государствах".[2] При этом, водоток, который используется для целей судоходства, часто именуется водным путем (waterway).

Еще с незапамятных времен, люди использовали водотоки как для судоходных, так и для несудоходных целей. Один из самых ранних нам известных соглашений, заключенным между политическими единицами, касающееся общей пресной воды, регулировало, *inter alia*, вопрос относительно распределения воды для ороше-

[1] Конвенция о Праве Несудоходных Видов Использования Международных Водотоков от 21 мая 1997 года, статья 2 (a).

[2] Там же, статья 2(b).

ния: это был договор, подписанный между месопотамскими городами-государствами Умма и Лагаш около 3100 г. до н.э. с целью прекратить военные действия за воду между двумя территориями.[3]

Со времен Римской империи существовали правила судоходства, которые рассматривали реки империи как rei publicae jure gentium (в том смысле, что у народа есть право на общее благо), тем самым предоставляя всем свободу судоходства.[4] В этом отношении, примечательна самая ранняя запись в сборнике Продовольственной и сельскохозяйственной организации ООН (ФАО) – из более чем 2000 международно-правовых инструментов, касающихся воды – которая представляет собой грант свободы судоходства по реке Рейн монастырю от Карла Великого в 805 году нашей эры.

На самом деле, во многом из-за своего возрастающей экономической значимости и, возможно, также из-за того, что суда могли физически вторгаться на территорию других государств, судоходство было в центре внимания до конца девятнадцатого века (иначе говоря, стороны, заключая между собой соглашения, касающиеся международных водотоков, акцентировались именно на судоходные виды использования водотоков), в то время как несудоходные виды использования как правило не влекут за собой такого очевидного вмешательства. Наиболее значительными из этих соглашений были многосторонние мирные договоры, начиная с Вестфальского мира в 1648 году, и продолжая вплоть до Венского Конгресса 1815 года, а также Мирный Договор между союзными и ассоциированными державами и Германией.

По сравнению с правом судоходства на международных водных путях правовая база, регулирующая несудоходные виды использования международных водотоков, развивалась довольно медленно. Несмотря на то, что к концу девятнадцатого века, особенно в Европе, право судоходства было достаточно хорошо урегулировано, правила, существовавшие для несудоходных видов использования, основывались главным образом на двусторонних соглашениях. Однако, со временем, поскольку спрос на воду увеличился в девятнадцатом веке из-за роста промышленной революции и с развитием в конце девятнадцатого века технологии для производства гидроэлектроэнергии, потребность в правилах, регулирующих несудоходные виды использования международных водотоков, стала очевидной и возрастающей.

[3] McCaffrey, *The Law of International Watercourses* (OSAIL, Oxford, 2007), стр. 59.

[4] Там же.

Одним из двух совещаний по международным водотокам, созванным Лигой Наций в начале 1920-х годов, была Вторая Конференция по коммуникации и транзиту, состоявшаяся в Женеве в 1923 году. Лига учредила Следственную Комиссию для подготовки проекта соглашения. В докладе Комиссии за 1920 год о международном режиме судоходных водных путей говорится, что "Сто лет назад водные пути использовались главным образом для целей судоходства; сегодня это уже не всегда так".[5] Государства, участвующие в конференции, состоявшейся в Женеве в 1923 году, приняли Конвенцию о Гидроэнергии Водных Потоков, Имеющих Значение для Нескольких Государств. Однако лишь в 1997 году было заключено универсальное соглашение, регулирующее вопрос международных водотоков всеобъемлющим образом: Конвенция о Праве Несудоходных Видов Использования Международных Водотоков. Данная конвенция последовала за принятием регионального инструмента в 1992 году, в рамках Европейской Экономической Комиссии, а именно, Конвенции по Охране и Использованию Трансграничных Водотоков и Международных Озер. Другие многосторонние соглашения, касающиеся несудоходных видов использования определенных водотоков, таких как река Дунай, Меконг и река Рейн были также заключены во второй половине двадцатого века. Все эти соглашения способствовали разработке правовой основы, регулирующей несудоходные виды использования международных водотоков.

Помимо сказанного, важно проанализировать взаимоотношение и конфликтные вопросы между судоходным и несудоходными видами использования международных водотоков.

При попытке примирить конфликты между судоходным и несудоходными видами использования международных водотоков, неизбежно возникает вопрос, есть ли какой-то неотъемлемый приоритет или предпочтение между ними. Как было видно вначале статьи, за очень небольшим исключением, судоходство исторически имело приоритет перед другими видами использования водотоков. Иллюстрацией того, что судоходство имеет приоритет над несудоходными видами использования, является Барселонская Конвенция 1921 года и Статут о Режиме Судоходных Путей Международного Значения, статья 10(1) которого предусматривает следующее:

[5] League of Nations, "Report on the Draft Convention on the International Regime of Navigable Waterways: Presented to the General Communications and Transit Conference by the Commission of Enquiry", 415.

1. Каждое прибрежное государство обязано, с одной стороны, воздерживаться от всех мер, которые могут нанести ущерб судоходности водного пути, или уменьшить возможности для судоходства, и с другой стороны, как можно быстрее предпринять все необходимые шаги для устранения любых препятствий и опасностей, которые могут возникнуть для судоходства.[6]

Следует, однако, отметить, что 6-ой параграф той же статьи допускает важное исключение из сказанного принципа, а именно:

> "В исключительном случае одно из прибрежных государств судоходного водного пути международного значения, не упомянутое в статье II-ой, может закрыть водный путь для судоходства, если судоходство на нем имеет очень малое значение и, если соответствующее государство может оправдать свои действия на основании экономического интереса, который явно имеет большее значение, чем судоходство".[7]

Поскольку со временем другие виды использования начали конкурировать с судоходством в плане экономической и социальной важности, государства фактически стали признавать, что общее присвоение абсолютного приоритета любому использованию будет препятствовать достижению оптимального использования водотока. В качестве примера, приведем некоторые примечательные двусторонние договоры по поводу сказанного. Например, в Договоре 1909 года о Пограничных Водах между США и Канадой установлен так называемый "порядок приоритета", в соответствии с которым судоходство классифицируется ниже "использований для бытовых и санитарных целей", но выше "использований для целей энергии и орошения".[8] А в Договоре 1944 года между США и Мексикой о реках Колорадо, Тихуана и Рио-Гранде перечислен следующий "порядок предпочтений" в качестве руководства для Международной Пограничной и Водной Комиссии:

1. Бытовое и муниципальное использование;
2. Сельское хозяйство и животноводство;
3. Электроэнергия;
4. Другие промышленные использования;
5. Судоходство;
6. Рыбалка и Охота;
7. Любое другое полезное использование, которое может быть определено Комиссией.[9]

Надо, однако, отметить, что данный список не отражает абсолютный порядок приоритета, так как Комиссия имеет право усмотрения.

Однако, даже там, где судоходство остается важным компонентом, современные соглашения, как правило не предоставляют ему приоритет над другими видами использования. Например, Соглашение о Сотрудничестве в целях Устойчивого Развития Бассейна Реки Меконг от 5 апреля 1995 года предусматривает, что "Судоходному использованию не гарантируется какой-либо приоритет над другими видами использования, но он будет включен в любой основной проект".[10] Данное положение ясно отражает намерение сторон, чтобы усилия по разработке Меконга были направлены на обеспечение совместимости судоходных и несудоходных видов использования, а не на приоритет того или другого.

Статья VI Хельсинских Правил далее поддерживает вышеотмеченную позицию, закрепляя, что "Использование вод тем или иным способом не предполагает каких-либо преимуществ этого способа использования перед другими способами".[11] Ассоциация Международного Права предложила следующее объяснение данного правила в своей комментарии к Статье VI:

> "За последние двадцать пять лет … технологическая революция и демографический взрыв, которые привели к быстрому росту несудоходных видов использования, привели к потере прежнего превосходства, связанного с судоходным использованием. Сегодня ни судоходство, ни какое-либо другое использование не пользуются таким предпочтением".[12]

Данный вопрос был также рассмотрен Комиссией Международного Права в статье 10 ("взаимосвязь между различными видами использования") своего проекта статьей, который впоследствии стал основой соответствующего положения Конвенции 1997 года. Статья, в частности, отмечает следующее:

---

[6] Барселонская Конвенция 1921 года и Статут о Режиме Судоходных Путей Международного Значения, статья 10(1).

[7] Там же, статья 10(6).

[8] Treaty between Great Britain and the United States relating to Boundary Waters and Questions Arising between the United States and Canada, 1909, статья 8, 102 BFSP стр. 137.

[9] Treaty between the United States and Mexico relating to the Utilization of the Waters of the Colorado and Tijuana Rivers, and of the Rio Grande (Rio Bravo) from Fort Quitman, Texas, to the Gulf of Mexico, 1944, статья 3, 3 UNTS стр. 314.

[10] Agreement on the Cooperation for the Sustainable Development of the Mekong River Basin, 1995, статья 9, 34 ILM стр. 864.

[11] Хельсинские Правила Использования Вод Международных Рек от 20 августа 1966 года, статья VI.

[12] Там же, комментарии к статье VI (доступно по этой ссылке: https://www.internationalwaterlaw.org/documents/intldocs/ILA/Helsinki_Rules-original_with_comments.pdf).

1. В отсутствие иного соглашения или обычая никакой вид использования международного водотока не пользуется неотъемлемым приоритетом перед другими видами использования.

2. В случае возникновения противоречия между видами использования международного водотока оно должно разрешатся с учетом статей 5-7 с уделением особого внимания требованиям удовлетворения насущных человеческих нужд.[13]

Таким образом, согласно этому положению, конфликты между использованием международного водотока должны разрешаться в соответствии с основополагающим принципом справедливого использования (статьи 5 и 6) и обязательством не причинять значительный ущерб другим государствам, разделяющим водоток (статья 7). Новаторский аспект этой статьи заключается в ее открытом признании того факта, что, хотя ни одно использование не должно иметь неотъемлемого приоритета, *насущные человеческие нужды* не должны подвергаться опасности в процессе согласования конфликтующих видов использования.

По смыслу Конвенции, в каждом отдельном случае все соответствующие факторы будут рассматриваться для определения того, должно ли конкретное использование (например, бытовое потребление) иметь приоритет над другим использованием (например, судоходство или промышленное использование). В дополнение сказанному, важно отметить, что если расширение и развитие несудоходных видов использования действительно превзошли судоходство, как первостепенного использования, то это не обязательно означает, что несудоходные виды использования теперь имеют автоматический приоритет над судоходными. Вместо этого, как было указано Комиссией и в Конвенции 1997 года, любой конфликт между судоходным и несудоходным использованием следует разрешать таким же образом, как и сам конфликт между различными несудоходными видами использования. Сказанное возможно при совместном рассмотрении всех соответствующих факторов с целью прибытия к справедливому распределению использований рассматриваемой международной системы водотока. Примечательно отметить, что для эффективного и оптимального разрешения этот процесс должен применятся не только к вопросу о необходимости поддержания уровня воды, достаточного для судоходства, но и к другим потенциальным воздействиям судоходного использования, таким, как загрязнение водотока.

Когда речь идет о несудоходных видах использований международных водотоков, следует также пролить свет на три *основополагающих* принципа, которые играют существенную роль в этом отношении. Этими принципами являются справедливое и разумное использование, предотвращение значительного ущерба и предварительное уведомление, касающееся планируемых мер. Из этих трех, пожалуй, самым фундаментальным является справедливое использование. В деле *Gabčíkovo-Nagymaros,* Международный Суд сослался на этот принцип, когда упомянул об “основном праве государства на справедливое и разумное распределение ресурсов международного водотока”.[14] Суд далее укрепил этот принцип, когда установил, что “современное развитие международного права усилило” принцип общности интересов, сформулированный в решении *River Oder* в отношении несудоходных видов использования международных водотоков, о чем и свидетельствует дальнейшее принятие Конвенции 1997 года. Обязательство справедливого и разумного использования требует, чтобы государство использовало водоток справедливым и разумным способом по отношению к его прибрежным государствам. Принцип, тем самым, подразумевает справедливую уравновешенность (fair balance) использований между различными государствами, разделяющими водоток. И как указано в статьях 5 и 6 Конвенции 1997 года, определение того, что является справедливым и разумным в данной фактической ситуации, требует учета всех соответствующих факторов и обстоятельств, включая те, которые связаны с природными и социальными условиями, а также использованиями водотока.

Второе основное обязательство, изложенное в 7-ой статье Конвенции 1997 года заключается в предотвращении причинения значительного ущерба другим прибрежным государствам посредством деятельности, связанной с международным водотоком. Данный принцип представляется как обязательство должной осмотрительности (obligation of due diligence). Как отмечается в статье 7(2) Конвенции, “в том случае, когда другому государству водотока все же наносится значительный ущерб, государство, которое своим использованием наносит такой ущерб, … принимает все необходимые меры, … в консультации с потерпевшим государством, для ликвидации или уменьшения такого ущерба и, при необходимости, для обсуждения вопроса о ком-

[13] Выше, п. 1, статья 10(1) и (2).

[14] *Gabčíkovo-Nagymaros case [Hungary/Slovakia]*, 1997 ICJ Rep. 7, пара. 78.

пенсации".[15] Как видно, довольно сложная формулировка статьи 7(2) иллюстрирует сложную взаимосвязь между обязательствами по справедливому использованию и предотвращению значительного ущерба. В целом, во время переговоров по Конвенции 1997 года государства, расположенные выше по течению, которые часто являются гористыми и развивают свои водные ресурсы позже, чем государства, находящиеся ниже по течению, предпочли отдать первенство справедливому использованию, а не предотвращению вреда, в то время как государства, находящиеся ниже по течению, предпочли обратное. В результате аргумент основывается на том, что государства должны стремится избежать вреда таким образом, чтобы это соответствовало принципу справедливого использования.

Наконец, третьим основным обязательством в праве несудоходных видов использования международных водотоков является своевременное уведомление о планируемых мерах, которые могут оказать существенное неблагоприятное воздействие на другие прибрежные государства. Основная цель данного принципа – избежать ситуаций, которые могут привести к несправедливому или вредному использованию.

Таким образом, исторически несудоходные виды использования международных водотоков не были настолько обширными, чтобы смогли существенным образом посягать на интересы других прибрежных государств. По этой причине, а также из-за исторической важности судоходства как способа передвижения, права и обязанности прибрежных государств рассматривались именно в контексте судоходства. Однако, как показывает историческое развитие права международных водотоков, на сегодняшний день судоходство утратило былое превосходство, так как со временем, несудоходные виды использования водотоков стали приобретать все большее значение. Сказанное, однако, как увидели, не означает, что последние тем самым приобретают автоматическое превосходство, и что в любой ситуации необходимо учитывать множество факторов, чтобы понять взаимоотношение этих двух видов использований. И как верно отмечает по этому поводу специальный докладчик Комиссии Международного Права, те, которые, с практической точки зрения, несут ответственность за общее управление водными ресурсами не могут игнорировать взаимодействие между двумя видами использования международных водотоков.

[15] Выше, п. 1, статья 7(2).

Использованные источники

1. Конвенция о Праве Несудоходных Видов Использования Международных Водотоков от 21 мая 1997 года.
2. McCaffrey, *The Law of International Watercourses* (OSAIL, Oxford, 2007).
3. League of Nations, "Report on the Draft Convention on the International Regime of Navigable Waterways: Presented to the General Communications and Transit Conference by the Commission of Enquiry".
4. Барселонская Конвенция 1921 года и Статут о Режиме Судоходных Путей Международного Значения.
5. Treaty between Great Britain and the United States relating to Boundary Waters and Questions Arising between the United States and Canada, 1909, 102 BFSP.
6. Treaty between the United States and Mexico relating to the Utilization of the Waters of the Colorado and Tijuana Rivers, and of the Rio Grande (Rio Bravo) from Fort Quitman, Texas, to the Gulf of Mexico, 1944, 3 UNTS.
7. Agreement on the Cooperation for the Sustainable Development of the Mekong River Basin, 1995, 34 ILM.
8. Хельсинские Правила Использования Вод Международных Рек от 20 августа 1966 года.
9. *Gabčíkovo-Nagymaros case [Hungary/Slovakia]*, 1997 ICJ Rep.

Քաղաքացիների դատական պաշտպանությունն ապահովող պետական և հասարակական ինստիտուտները

Ավագյան Գ.Պ.
ՀՀ պետական կառավարման ակադեմիա (Հայաստան, Երևան)
geoavagyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ օրենք, դատարան, առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան, վարչական դատարան, սահմանադրական դատարան, կառավարություն, Ազգային ժողով, դատախազություն, մարդու իրավունքների պաշտպան, հասարակական կազմակերպություն

Государственные и общественные институты, обеспечивающие защиту прав граждан

Авагян Г.П.
Академия государственного управления РА (Армения, Ереван)
geoavagyan@gmail.com

Резюме: Эта статья посвящена освещению государственных и общественных институтов, защищающих права и свободы граждан. Автор подчеркнул конкретные функции государственных учреждений, занимающихся защитой прав граждан, в частности, роль судов в этом контексте. Изучено как национальное, так и международное право, проведен сравнительный анализ национальной и зарубежной юридической литературы.
Ключевые слова: закон, суд, суд первой инстанции, апелляционный суд, кассационный суд, административный суд, Конституционный суд, Правительство, Национальное собрание, прокуратура, Защитник прав человека, общественная организация

The state and public institutes providing protection of the rights of citizens

Avagyan G.P.
Public Administration Academy of RA
geoavagyan@gmail.com

Abstract: This article is devoted to illumination of the state and public institutes protecting the rights and freedoms of citizens. The author emphasized concrete functions of the public institutions which are engaged in protection of the rights of citizens, in particular, a role of vessels in this context. Both the national, and international law is studied, the comparative analysis of national and foreign legal literature is carried out.
Keywords: law, court, court of the first instance, court of appeal, court of cassation, administrative court, Constitutional court, Government, National assembly, prosecutor, Ombudsman, public organization

Իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի դատական պաշտպանությունը համարվում է ժամանակակից իրավագիտության համապարփակ հասկացություն ոչ միայն քաղաքացիների, այլև իրավահարաբերությունների այլ մասնակիցների համար: Իրավունքների, ազատությունների ու օրինական շահերի դատական պաշտպանությունը համարվում է անհատի անձնական (քաղաքացիական) իրավունքների և ազատությունների ամբողջության ոչ միայն անբաժանելի մասը, այլև իրավունքների և այլ ձևերի իրականացման երաշխիքը, որը թույլատրված է քաղաքական, տնտեսական, մշակութային, սոցիալական և այլ ոլորտներում:

Վ. Ա. Լազարևը նշում է, որ գիտության մեջ դատական պաշտպանությունը դիտարկվում է մի քանի տեսանկյունով. և' որպես սահմանադրական իրավունքի ինստիտուտ, և' որպես անհատի իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության տեսակ, և' որպես հասարակական հարաբերություն, և' որպես պետական գործառույթ: Ավելին, երբեմն դատական պաշտպանությունը նույնացվում է արդարադատության հետ կամ դիտվում է որպես նրա ի հայտ գալու երաշխիք[1], ըստ որում

[1] Տե՛ս Жилин Г.А. О праве на судебную защиту при определении гражданских прав и обязанностей. Материалы Всероссийской научно-практической конференции. Краснодар, 2006, էջ 45:

քրեադատավարական գիտության մեջ դատական պաշտպանությունը համարվում է դատավարական միջոցների համակցություն, որը տրամադրված է կասկածյալին, մեղադրյալին և տուժողին իրենց իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար:

Ներկայացված դիրքորոշումները չեն հակասում միմյանց և ընդգծում են պետական իշխանության, իրավական ազդեցության և հասարակական հարաբերությունների գործունեության կառուցակարգում դատական պաշտպանության առանձնահատուկ դերը:

Դատական իշխանության ազդեցության օրինաչափ ուժեղացումը իրավական պետության մեջ, նրա տարանջատումն իրավապահ մարմիններից և որպես պետական իշխանության ինքնուրույն ճյուղի առանձնացումն անխուսափելիորեն հանգեցնում է ինքնուրույն պետական գործառույթում քաղաքացիների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության աճին:

Իրավունքների դատական պաշտպանության սահմանադրորեն հռչակված երաշխիքը վկայում է միայն համապատասխան ներպետական գործունեության առաջնահերթության մասին, որը ապահովված է համարժեք իշխանական կառուցակարգով, ինչից էլ ելնելով պետք է խոսել պետությունից այդ գործառույթի առանձնացման մասին:

Այսպիսով՝ իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանությունը մի կողմից համարվում է նշված ձևերի իրականացման սահմանադրական երաշխիքը, մյուս կողմից՝ հենց պետության քաղաքականության կարևորագույն ուղղություններից է, ինչի հետ կապված էլ տվյալ գործունեության ուսումնասիրության հարցը դառնում է շատ կարևոր:

Պետք է համաձայնել այն մասնագետների հետ, ովքեր պնդում են, որ դատական պաշտպանությունը պետք է դիտարկել որպես պետության իրավապահ գործառույթների բաղկացուցիչ մասը: Դիտարկվող գործառույթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այն ունի վառ արտահայտված առանձնահատկություններ՝ համեմատած պետության նման այլ գործառույթների հետ, ինչպիսինն է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Ավելին, ի տարբերություն այլ իրավասություններով օժտված սուբյեկտների, դատական պաշտպանության իրավունքը համարվում է մարդու և քաղաքացու բոլոր այլ իրավունքների ու ազատությունների երաշխիքը, և դրա իրականացումը մեծապես կախված է պատշաճ իրավական կառուցակարգերի գոյությունից:

Հարկ է նշել, որ դատական պաշտպանության իրավունքն իր արտացոլումն է ստացել ոչ միայն ՀՀ Սահմանադրության, այլև շատ ժողովրդավարական պետությունների, ԱՊՀ անդամ պետությունների հիմնական օրենքներում: Դատական պաշտպանության իրավունքի իրացման հնարավորությունը ժամանակակից ժողովրդավարական պետություններում ճանաչվում է որպես անհատի իրավական կարգավիճակի հիմնական ինստիտուցիոնալ երաշխիք:

Հետազոտելով տարբեր պետությունների սահմանադրություններում դատական պաշտպանության ինստիտուտի ամրապնդման ծագումնաբանությունը, նկատում ենք, որ եվրոպական երկրների մեծամասնության սահմանադրություններում ամրագրված է դատական պաշտպանության իրավունքը, որպես անմիջականորեն գործող իրավունք: Ակնհայտ է, որ քաղաքացիների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանությունը, ինչպես և դրանց դատական պաշտպանության իրավունքը, պետական-իրավական կառույցների գործունեության բավական հստակ առաջնահերթություն է: Օրինակ՝ ՌԴ Սահմանադրության 2-րդ հոդվածն ամրագրում է, որ մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների ճանաչումը, պահպանումը և պաշտպանությունը համարվում է պետության պարտականությունը: Զարգացնելով այդ սահմանադրական դրույթը, սահմանվում է նաև դատական պաշտպանության երաշխիքը: Օրինական շահերի՝ որպես յուրաքանչյուրի ձգտումների համապատասխան իրավական կարգադրության մասին, ոչինչ չի ասվում, չնայած այն հանգամանքի, որ «օրինական շահեր» եզրույթը ՌԴ Սահմանադրության համար խորթ չէ:

Այս առնչությամբ կարելի է առանձնացնել՝ ի՞նչ հարցերով և ինչ պահանջներով կարելի է դիմել դատարան, ի՞նչ է իր մեջ ներառում դատական պաշտպանության իրավունքը և ի՞նչն է ենթակա դատական պաշտպանութ-

յան: Կարելի է հասկանալ, որ այդ իրավունքը որպես ցանկացած անձանց, պետական և այլ մարմինների հանդեպ ցանկացած պահանջների հետ կապված դատարան դիմելու թույլատրելիություն, որն իր մեջ ներառում է նաև այն հարցերի շրջանակը, որոնք չեն կարող քննության առարկա լինել:

Ամփոփելով վերոգրյալը, կարող ենք արձանագրել, որ խախտված կամ վիճարկվող օրինական շահերը դատական կարգով պաշտպանելու հնարավորություն ունեն իրավահարաբերությունների ցանկացած մասնակիցներ: Իրավունքը պաշտպանելու համար դատարան դիմելու ցանկացած օրինական շահը երաշխավորվում է յուրաքանչյուրին և բոլորին:

Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում են Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև մասնագիտացված դատարանները: Առաջին ատյանի դատարաններն են՝ 1) ընդհանուր իրավասության դատարանները, 2) մասնագիտացված դատարանները: Մասնագիտացված դատարաններն են՝ 1) վարչական դատարանը, 2) սնանկության դատարանը: Վերաքննիչ դատարաններն են՝ 1) քրեական վերաքննիչ դատարանը, 2) քաղաքացիական վերաքննիչ դատարանը, 3) վարչական վերաքննիչ դատարանը:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության սկզբնական օղակը, ըստ էության, ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններն են: Համաձայն Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի՝ ընդհանուր իրավասության դատարանին ենթակա են բոլոր գործերը, բացառությամբ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված գործերի:

Ընդհանուր իրավասության դատարանը քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում քրեական վարույթի մինչդատական փուլի նկատմամբ: Վերոգրյալից հետևում է, որ մարդու իրավունքների ենթադրյալ ցանկացած խախտման դեպքում յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների դատական պաշտպանության երաշխիք: Օրենսդրությամբ հստակ սահմանված են առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում գործերի քննության սկզբունքները, առանձնահատկությունները, ժամկետները, ինչպես նաև այդ մարմինների կայացրած ակտերի օրինական ուժի մեջ մտնելու կարգն ու պայմանները:

Եվրոպական Կոնվենցիայի 13-րդ հոդվածին համապատասխան՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում նշվում է «իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ» ձևակերպումը, որը ենթադրում է ազգային մակարդակում բավականաչափ ծանրակշիռ և հաստատուն երաշխիքների գոյություն, որոնք իրական հնարավորություն են ստեղծում բողոքարկելու հանրային իշխանությունների ենթադրյալ անիրավաչափ գործողություններն ու որոշումները և երաշխավորում են անհրաժեշտության դեպքում դատական ատյաններին դիմելու իրավունքը: Այս դրույթից բխում է նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքի մասին, եթե նույնիսկ խախտումը կատարել են ի պաշտոնե գործող անձինք: Սրան համապատասխան պետական-իրավական կառուցակարգի բոլոր մարմինները կոչված են ոչ միայն կանխելու մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության բնագավառում թույլ տրվող խախտումները, այլև խախտումների դեպքում վերականգնել այդ իրավունքներն ու ազատությունները[2]: Ըստ որում, «պետական այլ մարմիններ» կապակցությունը լայն առումով ներառում է ազգային իշխանության ոչ միայն օրենսդիր, գործադիր (վարչական) կամ դատական մարմիններին, այլև տեղական ինքնակառավարման մարմիններին, հասարակական միավորումներին, իրավունքների պաշտպանության միջպետական մարմիններին և այլն:

Դատարան դիմելու մատչելիության իրավունքի խախտման հետ կապված կարևորագույն հարցերից մեկն այն է, որ պետությունն իրավունք չունի սահմանափակելու կամ վերացնելու դատական հսկողությունը գործունեության առանձին բնագավառներում կամ

---

[2] Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, 2010թ, «Իրավունք», էջ 211:

առանձին կատեգորիայի անձանց վերաբերյալ: Դատարան դիմելու մատչելիության իրավունքի խախտման դեպքում խաղաքարտի վրա է դրվում ժողովրդավարական պետությունում դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը:

Հետևաբար, դատարանները պարտավոր են Սահմանդրությամբ իրենց իրավասությանը վերապահված հարցերի վերաբերյալ բոլոր դիմումներն ընդունել վարույթ և քննել դրանք՝ ապահովելով ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 5-րդ հոդվածի 1-ին մասի և 61-րդ հոդվածի 1-ին մասի անմիջական գործողությունը: Բացի այդ, դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է ելնեն այն սկզբունքից, որ միջազգային պայմանագրերում ամրագրված միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներն ու նորմերը և ՀՀ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված է, որ վավերացրած միջազգային պայմանագրերի և օրենքների միջև հակասության դեպքում կիրառվում են միջազգային պայմանագրի նորմերը:

ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածով նախատեսված իրավունքը Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասի տրամաբանական հետևանքն է, որը պետության վրա պարտավորություն է դնում ապահովելու մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը՝ միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Այդ իրավունքների և ազատությունների հաստատման համար իրավական պաշտպանության միջոցներ տրամադրելը կարելի է դիտել իբրև այդ պարտավորության մի մաս: Միևնույն ժամանակ ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունը որոշող մյուս կարևոր սկզբունքն այն է, որ այս կամ այն դատական ատյանի մատչելիությունը պետք է լինի ոչ միայն ձևական, այլև իրական:

Վարչական դատարանը մասնագիտացված դատարան է և ըստ էության քննում է միայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործեր, որի երրորդ հոդվածով հստակ ամրագրվում է, որ 1. վարչական դատարան դիմելու իրավունք ունեն յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝

1) խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, այդ թվում, եթե՝ ա) խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար, բ) չեն ապահովվել անհրաժեշտ պայմաններ այդ իրավունքների իրականացման համար, սակայն դրանք պետք է ապահովվեին Սահմանադրության, միջազգային պայմանագրի, օրենքի կամ այլ իրավական ակտի ուժով.

2) նրա վրա ոչ իրավաչափորեն դրվել է որևէ պարտականություն.

3) նա վարչական կարգով ոչ իրավաչափորեն ենթարկվել է վարչական պատասխանատվության:

2. Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ 1) ֆիզիկական կամ իրավաբանական անձինք վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը, 2) ֆիզիկական կամ իրավաբանական անձանց որոշակի իրավունքներից զրկելու կամ նրանց վրա որոշակի պարտականություններ դնելու պահանջով, եթե օրենքով դա վերապահված է դատարանին, 3) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ իրավասության վերաբերյալ վեճով, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով, 4) ընդդեմ մեկ այլ վարչական մարմնի՝ սույն օրենսգրքի 29.2-րդ գլխով նախատեսված դեպքերում:

ՀՀ Վարչական դատավարության օրենսգիրքը հստակ սահմանում է նաև հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև վարչական մարմինների և պաշտոնատար անձանց կողմից վարչական դատարան դիմե-

լու կարգն ու պայմանները[3]: Ըստ այդմ, վարչական դատարան կարող են դիմել պետական և տեղական ինքնակառավարման մարմինները կամ պաշտոնատար անձինք՝ ընդդեմ վարչական մարմնի, եթե համարում են, որ այդ մարմնի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել կամ անմիջականորեն կարող են խախտվել պետության կամ համայնքի այն իրավունքները, որոնց պաշտպանության լիազորությունը դրված է իրենց վրա, եթե այդ վեճը ենթակա չէ լուծման վերադասության կարգով: Նորմատիվ իրավական ակտերի իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով վարչական դատարան կարող է դիմել նաև Մարդու իրավունքների պաշտպանը, ինչպես նաև Երևանի ավագանու խմբակցությունը:

Վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմանում վերանայում է ընդհանուր իրավասության դատարանների՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերը: Վարչական վերաքննիչ դատարանն իր իրավասության սահմաններում վերանայում է վարչական դատարանի կայացրած դատական ակտերը: Վերաքննիչ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վերաքննիչ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

Գործերի վերաքննության իրավունքը քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության կարևորագույն կառուցակարգերից է: Վերաքննիչ ատյանի դատարանների՝ դատական համակարգում ունեցած դերով են պայմանավորված դատական բողոքարկման հարաբերությունների կարգավորման բնագավառում կատարված օրենսդրական փոփոխությունները, որոնց արդյունքում օրենսդիրը վերաքննիչ դատարանին օժտել է վերաքննիչ բողոքն ամբողջությամբ կամ մասամբ բավարարելու, ինչպես նաև այն մերժելու իրավասությամբ, ինչը հնարավորություն է տալիս քաղաքացիներին ապահովագրվել հնարավոր դատական սխալներից: Բանն այն է, որ նույնիսկ այն դեպքում, երբ առաջին ատյանի դատարանում թույլ է տրվել առերևույթ դատական սխալ՝ նյութական կամ դատավարական, ապա անձը հնարավորություն ունի վերադասության կարգով ևս մեկ անգամ դատարանի ուշադրությունը հրավիրել իր իրավունքների ենթադրյալ խախտման փաստի վրա:

ՀՀ սահմանադրական դատարանը արտահայտել է իրավական դիրքորոշում առ այն, որ իրավունքը ենթադրում է նաև կոնկրետ երաշխիքներ՝ իրավունքի վերականգնում արդարադատության միջոցով, որը համապատասխանում է արդարության պահանջին: Դատական ակտը վերանայելու հնարավորության բացակայությունը, հակառակը, սահմանափակում է այդ իրավունքը: Ըստ որում, իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրականացման շրջանակներում հնարավոր է ցանկացած պետական մարմնի, ներառյալ դատարանների որոշումների ու գործողությունների դատական բողոքարկում:

Հայաստանի Հանրապետության բարձրագույն դատական ատյանը, բացի սահմանադրական արդարադատության հարցերից, վճռաբեկ դատարանն է, որը կոչված է ապահովելու օրենքի միատեսակ կիրառությունը: Իր այդ առաքելությունն իրականացնելիս վճռաբեկ դատարանը պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը: Վճռաբեկ դատարանն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով վճռաբեկ բողոքի հիման վրա վերանայում է վերաքննիչ դատարանի կողմից առաջին ատյանի դատարանի դատական ակտերի վերանայման արդյունքում կայացված դատական ակտերը, ինչպես նաև վերաքննիչ դատարանի՝ օրենքով նախատեսված դեպքերում բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերը: Վճռաբեկ դատարանը դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Վճռաբեկ դատարանի լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ և օրենքով:

Համաձայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 414[2]-րդ հոդվածի՝ 1. Վճռաբեկ բողոքն ընդունվում է քննության, եթե վճռաբեկ դատարանը հանգում է այն հետևության, որ՝ 1) բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, 2) առերևույթ առկա է մարդու

[3] ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքն ուժի մեջ է մտել 05.12.2013թ (ՀՀՊՏ, N64 (588), 19.12.2007):

իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում:

2. Սույն հոդվածի իմաստով՝ բողոքում բարձրացված հարցի վերաբերյալ վճռաբեկ դատարանի որոշումը կարող է էական նշանակություն ունենալ օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառության համար, եթե՝ 1) տարբեր գործերով ստորադաս դատարանների՝ առնվազն երկու դատական ակտով միևնույն նորմը կիրառվել է իրար հակասող մեկնաբանությամբ, 2) բողոքարկվող դատական ակտում որևէ նորմի մեկնաբանությունը հակասում է վճռաբեկ դատարանի որոշման մեջ տվյալ նորմին տրված մեկնաբանությանը, 3) դատարանի կիրառած նյութական կամ դատավարական իրավունքի նորմի կապակցությամբ առկա է իրավունքի զարգացման խնդիր:

3. Սույն հոդվածի իմաստով՝ առերևույթ առկա է մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտում, եթե՝ 1) բողոքարկվող դատական ակտը կայացնելիս դատարանը թույլ է տվել դատական սխալ, որը խաթարել է արդարադատության բուն էությունը, 2) առկա է նոր կամ նոր երևան եկած հանգամանք:

Հարկ է ընդգծել, որ դատական սխալը յուրաքանչյուր դատավարության համար սահմանվում է համապատասխան դատավարական օրենսգրքով:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված: Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին որոշման մեջ վճռաբեկ դատարանը պետք է հիմնավորի վճռաբեկ բողոքում վկայակոչված վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու՝ օրենքով նախատեսված յուրաքանչյուր հիմքի բացակայությունը:

Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունվելու դեպքում վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտի պատճառաբանական մասը պետք է պարունակի տվյալ գործով օրենքով նախատեսված հիմքերից առնվազն մեկի առկայության հիմնավորումը:

Վճռաբեկ դատարանն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով ամբողջությամբ կամ մասամբ բավարարելու վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության, սահմանելով նոր քննության ծավալը: Չբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ: Վճռաբեկ դատարանն իրավունք ունի նաև մասնակիորեն բեկանել և փոփոխել ստորադաս դատարանի դատական ակտը, եթե ստորադաս դատարանում հաստատված փաստական հանգամանքները տալիս են նման հնարավորություն և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից:

Վճռաբեկ դատարանի իրավասությունների մեջ է մտնում նաև վճռաբեկ բողոքի մերժումն ու վերաքննիչ դատարանի կողմից դատական ակտը փոփոխվելու դեպքերում ամբողջությամբ կամ մասնակիորեն վերաքննիչ դատարանի դատական ակտի բեկանումը՝ օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի դատական ակտին: Այս դեպքում Վճռաբեկ դատարանը լրացուցիչ պատճառաբանում է առաջին ատյանի դատարանի դատական ակտը, եթե այն թերի կամ սխալ է պատճառաբանված:

Օրենսդրական այս նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ օրենսդիրը հատկապես մեծ ուշադրություն է դարձնում պատճառաբանված դատական ակտին, ինչը, մեր կարծիքով, իրավական պետության կարևորագույն բնութագրիչներից է: Այսպես՝ վերաքննիչ դատարանը պարտավոր է առաջին ատյանի դատական ակտի պատճառաբանությունները լրացնել նոր պատճառաբանություններով, եթե այդ ակտը թերի է պատճառաբանված, ճիշտ պատճառաբանել, եթե այդ ակտը սխալ է պատճառաբանված, կամ պատճառաբանել, եթե այդ ակտն ընդհանրապես պատճառաբանված չէ: Հետևաբար՝ վերադաս դատարանին նման իրավասություն վերապահելիս օրենսդիրը նկատի է ունեցել օրենքով նախատեսված՝ ըստ էության ճիշտ վճռի՝ ձևական նկատառումներով բեկանման արգելքի հանգամանքը:

Վերադաս դատական ատյաններին նման իրավասության վերապահումը համահունչ է ՀՀ Սահմանադրությամբ, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայով երաշխավորված՝ արդար դատաքննության և ողջամիտ ժամկետներում դատական քննության իրավունքներին:

Ի տարբերություն նախկին օրենսդրության՝ գործող օրենսդրությամբ խսպառ բացառված է չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնական սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում:

Հարկ է ընդգծել նաև, որ Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթի, այն է՝ օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելն ու այդ գործառույթն իրականացնելիս իրավունքի զարգացմանը նպաստելու շրջանակներում պարտավոր է վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու մասին որոշման մեջ մեկնաբանել խնդրո առարկա հասկացությունների օրենսդրական բովանդակությունը՝ հնարավորություն տալով իրավունքի համապատասխան սուբյեկտներին կանխատեսել իրենց վարքագծի իրավական հետևանքները:

Սահմանադրության ընդունումից հետո արժնորվեց ՀՀ իրավական համակարգում դատական իշխանության ինստիտուցիոնալ և գործառութային որոշակի փոփոխությունների իրականացումը, որոնց շարքում պետք է առանձնացնել նաև վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական նոր կարգավիճակի հստակեցումը՝ պայմանավորված մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները վերացնելու խնդրի իրացման անհրաժեշտությամբ:

ՀՀ Սահմանադրության (փոփոխություններով) սահմանվեցին ոչ միայն հայրենական դատական համակարգի աստիճանակարգությունը, այլև գործառութային առումով հստակ սահմանազատում մտցվեց յուրաքանչյուր դատական ատյանի գործունեության սահմանադրաիրավական հիմքերի, նպատակների և խնդիրների միջև:

Վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական բովանդակությունից բխում է, որ վերջինիս կողմից իրականացվող դատական վերանայման գործառույթն աներկբայորեն պետք է ուղղված լինի վերջինիս սահմանադրաիրավական այն խնդիրների իրացմանը, որոնք գտնվում են փոխադարձ փոխկապակցվածության մեջ, քանի որ առանց մարդու իրավունքների և ազատությունների հիմնարար խախտումները (սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության վերջնական նպատակը խաթարող նյութական և դատավարական իրավունքի նորմերի կոպիտ խախտումները) վերացնելու, անհնար է ապահովել օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունը և դատական պրակտիկայի միասնականությունը:

Հարկ է ընդգծել, որ ՀՀ դատավարական օրենսդրությունը հստակ չափորոշիչներ չի սահմանում, թե որ դեպքերում մարդու իրավունքների և ազատությունների խախտումները պետք է համարել հիմնարար, կամ բողոքաբերը վճռաբեկ բողոքում ինչպիսի փաստարկներով է պարտավոր հիմնավորել այդպիսի խախտումների «հիմնարար» լինելու հանգամանքը: ՀՀ-ում վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական գործառույթը որոշակիորեն տարբերվում է նաև մայրցամաքային իրավական համակարգում դասական վճռաբեկության ֆրանսիական օրինակից, որը, լինելով զուտ իրավունքի դատարան, սահմանափակված է առավելապես օրենքի միատեսակ կիրառության, դատական պրակտիկայի միասնականության ապահովման գործառույթով և, ի տարբերություն դատական վերանայման գերմանական կամ ավստրիական մոդելի, վերահսկողական տարրեր չի պարունակում[4]:

Մեր կարծիքով, ՀՀ-ում վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակից բխող խնդիրների իրացումը բոլորովին այլ մոտեցում և բողոքի ընդունելիության պայմանների իրավակարգավորում է պահանջում: Ընդ որում, արդարացված չի կարելի համարել դատավարության օրենքում դատական ակտերը վերաքննության և վճռաբեկության կարգով բեկանելու առանձին հիմքերի սահմանումը: Այսպես, վճռաբեկ դատարանը պետք է իրավական գնահատական տա և ուղղի (վերացնի) բոլոր այն սխալները, որոնք չի ուղղել կամ չի վերացրել վերաքննիչ դատարանը, կամ էլ՝ եթե այդպիսի սխալները թույլ են տրվել հենց այս դատական ատյանում: **Հետևաբար՝ դատական ակտի բեկանման հիմքերն ընդհանուր պետք է լինեն վերաքննիչ և վճռաբեկ դատական ատյանների համար:**

---

[4] Տե՛ս Գասպարյան Վ., ՀՀ վճռաբեկ դատարանի սահմանադրաիրավական կարգավիճակը, Եր., 2007, էջ 41:

Մարդու իրավունքների դատական պաշտպանության պետական կարևորագույն ինստիտուտներից է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 167-րդ հոդվածով ամրագրված է, որ երկրում սահմանադրական արդարադատությունն իրականացնում է սահմանադրական դատարանը՝ ապահովելով Սահմանադրության գերակայությունը: Նրա լիազորությունները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ կազմավորման և գործունեության կարգը Սահմանադրությամբ և Սահմանադրական դատարանի մասին օրենքով: Հարկ է ընդգծել, որ Հայաստանի Հանրապետության առաջին՝ 1995թ. Սահմանադրության տեքսի համաձայն՝սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը բավականին նեղ էր, իսկ ֆիզիկական և իրավաբանական անձինք մեծ հաշվով զրկված էին սահմանադրական արդարադատության իրավունքից: Իրավիճակը փոխվեց 2005թ. Սահմանադրական բարեփոխումներով, որի արդյունքում մարդկանց՝ սահմանադրական արդարադատությունից օգտվելու երաշխիքը սահմանադրաիրավական կարգավորում ստացավ: Սուբյեկտների շրջանակն էլ ավելի ընդլայնվեց 2015թ. սահմանադրական փոփոխությունների արդյունքում: Այսպես, գործող իրավակարգավորմամբ՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան կարող են դիմել, ի թիվս այլոց, յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և անձը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթի սահմանադրականությունը:

Սահմանադրական դատարանի գործունեության մեջ մտնում է նաև քաղաքացիների իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության հարցերը, որը, քննության առարկա դարձնելով տարբեր իրավադրույթների սահմանադրականության հարցը, հարստացնում է իրավական պատասխանատվության մասին առկա գիտատեսական մոտեցումները, ուղղորդող դեր է ունենում իրավական պատասխանատվության հիմքում ընկած սկզբունքների իրացման չափանիշների, կիրառման շրջանակների հստակեցման և դրանք նորովի, դատարանի կողմից բացահայտված բովանդակությամբ և նրբերանգներով ընկալման գործում:

Սահմանադրական դատարանի իրավական դրույթները հարստացնում են իրավաբանական պատասխանատվության բովանդակությունը, սահմանում դրանց իրականացման պայմաններն օրենսդրության և իրավակիրառության մեջ: Այս համատեքստում կարևոր ենք համարում ընդգծել, որ սահմանադրական դատարանն իր ուրույն դերակատարությունն ունի նախևառաջ իրավական պատասխանատվության սկզբունքների բովանդակության բացահայտման մեջ:

Անգնահատելի է, թերևս, օրենսդիր մարմնի դերը քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության ոլորտում, քանզի մեր երկրում Ազգային ժողովի բացառիկ իրավասությանն է վերապահված օրենսդիր իշխանության իրականացումը: Հատկապես կարևորում ենք Ազգային ժողովի պետականիրավական և մարդու իրավունքների պաշտպանության հարցերի մշտական հանձնաժողովի գործունեությունը, որը մշակում է օրինագծեր կամ եզրակացություն է տալիս կառավարության մշակած օրինագծերի վերաբերյալ: Արդարադատության ոլորտում օրենսդրական բարեփոխումներ իրականացնելու արդյունքում ստեղծվել են ազգային օրենսդրությունը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու լուրջ նախադրյալներ: ՀՀ քրեական օրենսգրքում տեղ են գտել դրույթներ, որոնք պատիժ են նախատեսում կյանքի և առողջության, արժանապատվության ու անձի նկատմամբ հարգանքի, ինչպես նաև քաղաքացիական, սոցիալական իրավունքների, ընտանիքի, անչափահասների և արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների համար, նաև դատական և իրավապահ մարմինների կողմից մարդու իրավունքների և ազատությունների խախտումների համար: ՀՀ քրեական օրենսգրքում, ՀՀ ընտանեկան օրենսգրքում, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում, ՀՀ աշխատանքային օրենսգրքում տեղ են գտել մարդու իրավունքների և ազատությունների, ինչպես նաև օրինական շահերի պաշտպանության կուռ երաշխիքներ:

Երկրում իրավունքների պաշտպանության կատարողական բոլոր միջոցների իրականա-

ցումը դրված է ՀՀ կառավարության վրա, որն էլ պարտավոր է ապահովել հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ[5]:

Իրավունքների և ազատությունների պետական պաշտպանության պարտավորության կատարման գործում մեծ ներդրում ունեն նաև տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք առավել մոտ են կանգնած բնակչությանը և պետական մարմինների հետ սերտ համագործակցությամբ, պետական ֆինանսական օժանդակությամբ լուծում են նրա կենսական խնդիրները:

Մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանություն իրականացնող պետական մարմինների շարքում իր առանձնահատուկ տեղն ունի ՀՀ դատախազությունը, որը ՀՀ գլխավոր դատախազի կողմից ղեկավարվող միասնական համակարգ է, որը ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածի համաձայն գործում է Սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում՝ օրենքի հիման վրա: Դատախազությունը մարդու եւ քաղաքացու իրավունքներն ու ազատությունները կարող է պաշտպանել միայն քրեական հետապնդում հարուցելու, մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու, դատարանում մեղադրանքը պաշտպանելու, դատական ակտերը բողոքարկելու և պատիժների ու հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու ճանապարհով[6]:

Քաղաքացիների իրավունքների դատական պաշտպանության հարցերում անուրանալի դեր ունի մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: 2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում մարդու իրավունքների պաշտպանին սահմանադրական դատարան դիմելու իրավասությամբ օժտելը լուրջ երաշխիք է մարդկանց իրավունքների դատական պաշտպանության իրացման կառուցակարգում:

Մարդու իրավունքների պաշտպանությունը, ինչպես գիտենք, նախևառաջ, պետության պարտավորություններից է: Այդ իսկ պատճառով, մարդու իրավունքները հռչակելով պետության հոգածության կարևոր հիմնասկզբունքներից մեկը, ստանձնելով դրանց պաշտպանությանն ուղղված մի շարք միջազգային պարտավորություններ, պետությունները, այդ թվում և Հայաստանի Հանրապետությունը ձեռնարկում են տարբեր միջոցներ՝ այդ պարտավորություններն իրականացնելու նպատակով: Այդ միջոցներից է նաև Մարդու իրավունքների պաշտպանի կամ ինչպես ընդունված է անվանել՝ օմբուդսմենի ինստիտուտը, որը մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության միջոց է: Օմբուդսմենն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է ոչ միայն օրիանականության, այլ նաև արդյունավետության, նպատակահարմարության, բարեխղճության, արդարացիության սկզբունքներով: Եվ, ինչպես արդեն պարզ է իր անվանումից իսկ, այս ինստիտուտն իրականացնում է միայն մարդու իրավունքները ոտնահարող դեպքերով գործերի քննություն: Քանի որ մարդու իրավունքները, նախևառաջ, անձի և պետության փոխհարաբերության տիրույթում են, ստացվում է, որ մարդու իրավունքների պաշտպանն անհրաժեշտության դեպքում յուրօրինակ ներկայացուցչի, կարգավորողի դեր է կատարում անհատի և պետության միջև հարաբերություններում, դառնում է միջնորդ կողմ իրավունքների պաշտպանության դեպքում: Ստացվում է, որ լինելով պետական պաշտոնյա, նա պայքարում է պետական ինստիտուտների դեմ, եթե խախտվում են մարդկանց իրավունքներն ու ազատությունները:

Օմբուդսմենի կարգավիճակը սովորաբար ամրագրված է ժողովրդավարական բազմաթիվ պետությունների սահմանադրություններով: ՀՀ գործող Սահմանադրությամբ նախատեսված են Մարդու իրավունքների պաշտպանին վերաբերող մի շարք դրույթներ: ՀՀ Սահմանադրության 191-րդ հոդվածի համաձայն Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որը հետևում է

---

[5] Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա.Վաղարշյանի,Երեւան,2010թ.«Իրավունք»,էջ212:

[6] Տե՛ս նույն տեղում, էջ 213:

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց, իսկ Մարդու իրավունքների պաշտպանի մասին օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանմանը, նպաստում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին և ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը: ՀՀ-ում օմբուդսմենի ինստիտուտն ստեղծվել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ օրենքով, որով սահմանված են օմբուդսմենի իրավասությունները, լիազորությունները, կարգավիճակը, ընտրության ձևը, պաշտոնավարման ժամկետն ու այլ հարցեր: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունն իրականացնում է ՀՀ Սահմանադրության և օրենքների, ինչպես նաև միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքների ու նորմերի համաձայն:

Մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք ակտիվորեն զբաղվում են երեխաների, կանանց, ազգային փոքրամասնությունների, երիտասարդության, թոշակառուների, ֆիզիկական սահմանափակ կարողություններով անձանց, փախստականների և ձերբակալված անձանց խնդիրներով: Հասարակական կազմակերպություններից շատերը պարբերական ուսումնասիրություններ են կատարում մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում, մշակում կանխարգելման և հանրային իրազեկման զանազան ծրագրեր: Ամեն տարի տարբեր հասարակական կազմակերպությունների անդամներ ՀՀ Ազգային ժողով են ներկայացնում զեկույցներ Հայաստանում մարդու իրավունքների ապահովման ոլորտում տիրող վիճակի վերաբերյալ:

Քրեական դատավարությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու իրավական հիմունքները

Ավագյան Գ.Պ.
ՀՀ պետական կառավարման ակադեմիա (Հայաստան, Երևան)
geoavagyan@gmail.com

Վճռորոշ բառեր՝ օրենք, դատավարական ժամկետ, դատական համակարգ, դատական պաշտպանություն, ողջամիտ ժամկետ, քրեական, քրեական դատավարության, օրենսգիրք

Правовая основа для осуществления уголовного процесса в разумные сроки

Авагян Г.П.
Академия государственного управления РА (Армения, Ереван)
geoavagyan@gmail.com

Резюме: Эта статья посвящена раскрытию термина "разумный срок", его содержанию и юридическому описанию, который обеспечивает осуществление проблемы уголовного и уголовно-процессуального права. В статье автор подчеркнул важность термина "разумный срок", представил правовые механизмы для проведения уголовного производства в разумные сроки. Статья основана на международных правовых актах и национальных положениях.
Ключевые слова: закон, судебный срок, судебная система, судебная защита, разумный срок, уголовный, уголовный процесс, кодекс

Legal basis for implementation of criminal proceedings in reasonable term

Avagyan G.P.
Public Administration Academy of RA
geoavagyan@gmail.com

Abstract: This article is devoted to disclosure of the term "reasonable term", its contents and the legal description which provides implementation of a problem of the criminal and criminal procedure law. In article the author emphasized importance of the term "reasonable term", presented legal mechanisms for criminal proceedings in reasonable time. Article is based on the international legal acts and national provisions.
Keywords: law, judicial term, judicial system, judicial protection, reasonable term, criminal, criminal trial, code

Ողջամիտ ժամկետում գործերի քննությունն արդար դատաքննության իրավունքի առանցքային տարրերից է: Թե՛ քաղաքացիադատավարական և թե՛ քրեադատավարական հարաբերություններում ողջամիտ ժամկետի պահպանումը պահանջում է որոշակի չափորոշիչների առկայություն, քանի որ ողջամտությունը չի կարող վերացական կարգով գնահատվել և յուրաքանչյուր գործի հանգամանքները որոշարկվում են անհատապես[1]:

Քրեական դատավարությունում «ողջամիտ ժամկետ»-ի սկզբունքն անհրաժեշտ է դիտարկել՝

- սահմանադրաիրավական հարթության մեջ քրեական դատավարության օրենսգրքի մակարդակով ամրագրելու անհետաձգելիության ու կարևորության.
- ողջամիտ ժամկետի չափորոշիչների ամրագրման անհրաժեշտության տեսանկյունից՝ եվրոպական նախադեպային իրավունքի հաշվառմամբ[2]:

ՀՀ Սահմանադրության 1995 թվականի տեքստի 39-րդ հոդվածում ամրագրված էր, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածու-

[1] Տե՛ս Van djik, p. Theory and Practice of the European Convention on Human Rights. Antwerpen, Oxford: Intersentia, 2006, էջ 607:

[2] Հարցի առնչությամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատավարական ժամկետների պահպանումը կարևոր նշանակություն ունի նաև դատավարության տևողության ողջամտության ապահովման համար, իսկ ողջամիտ ժամկետում դատաքննության իրավունքը Մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքներից է: http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf:

թյունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից իր գործի հրապարակային քննության իրավունք: Ինչպես տեսնում ենք, այս հոդվածում «ողջամիտ ժամկետ» սկզբունքն ամրագրված չէ և այս սկզբունքի սահմանադրական ամրագրման կարևորությունը դեռ տվյալ ժամանակ արդար դատաքննության իրավունքի անբաժանելի բաղկացուցիչ չէր: Սկզբունքի ամրագրումը կապվում է այլ ժամանակի, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության կողմից Եվրոպայի խորհրդին անդամակցելու ժամանակահատվածի հետ: 2001 թվականին Հայաստանի Հանրապետությունն անդամակցելով Եվրոպայի խորհրդին, ստանձնեց օրենսդրական, կոնվենցիոն և ինստիտուցիոնալ պարտավորություններ: Կոնվենցիոնալ պարտավորությունների շրջանակներում 2002 թվականին Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան, և միացավ մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական ընտանիքին ու 2005 թվականի նոյեմբերի 27-ի ՀՀ Սահմանադրության փոփոխություններով ամրագրվեց, որ յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից *ողջամիտ ժամկետում* (ընդգծումն իմն է՝ հեղ.) իր գործի հրապարակային քննության իրավունք (հոդված 19):

ՀՀ դատարանների նախագահների խորհուրդը 13.06.2006 թվականի թիվ 98 որոշմամբ[3] արձանագրեց, որ մեր երկրում կան որոշ խնդիրներ գործերի քննության ողջամիտ ժամկետների հետ կապված՝ ինչպես դատական պրակտիկայի, այնպես էլ օրենսդրության կատարելագործման տեսանկյունից: Միաժամանակ նշեց, որ գործի քննությունը պետք է իրականացվի հնարավորին սեղմ ժամկետում:

2015 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածը որակապես նոր հարթության վրա դրեց «ողջամիտ ժամկետ» սկզբունքը, թեև ինչպես արդեն նշվեց, այս իրավունքը նախատեսված էր դեռևս նախորդ խմբագրությամբ: Ըստ որում, 63-րդ հոդվածի առաջին մասի բովանդակությունն այժմ ավելի լայն է և հստակ[4]: Նախկինում արդար դատաքննության իրավունքը կապվում էր խախտված իրավունքների վերականգնման կամ քրեական մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու նպատակի հետ: Փոփոխված Սահմանադրությունը նախատեսում է ցանկացած գործով յուրաքանչյուր անձի արդար դատաքննության իրավունքը, որի բովանդակության ծավալներն ավելի լայն են:

Ողջամիտ ժամկետի վերաբերյալ վերոհիշյալ սահմանադրական դրույթը վերարտադրում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6–րդ հոդվածի առաջին կետի պահանջները: Սակայն, մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կոնվենցիայով չի տրվում ողջամիտ ժամկետի հասկացությունը՝ մասնավորեցնելով ամիսներն ու տարիները: Այդ գնահատականը թողնված է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքին[5]:

Ողջամիտ ժամկետի սկզբունքն ամրագրված է նաև Եվրոպական միության «Հիմնարար իրավունքների մասին» կանոնադրության 47-րդ հոդվածում: Եվրոպական միությունն այս առնչությամբ ընդունում է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ամրագրված դիրքորոշումները: Այս սկզբունքը Եվրոպական Միության համակարգում ամփոփում է նախադեպային իրավունքի զարգացումն այս երաշխիքի վերաբերյալ:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և *ողջամիտ ժամկետում* քննության իրավունք[6]: Ժամկետների

---

[3] Տե՛ս http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf

[4] Տե՛ս http://lawlibrary.info/ar/books/giz2016-ar-Brief_explanations_of_Consitution_2016.pdf

[5] Տե՛ս Reasonable time. Guy Van Cruen Eulex Judge:

[6] Տե՛ս Սամվել Դիլբանդյան, Մի քանի նկատառումներ նախաքննության ժամկետների երկարացման իրավական կարգավորման վերաբերյալ, Երևան, 2015թ., էջ 35: http://ysu.am/files/04S_Dilbandyan.pdf

սահմանումը քրեական դատավարությունում նաև մասնավոր անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության կարևոր երաշխիք է: Պատահական չէ, որ Եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է ինչպես մինչդատական վարույթում, այնպես էլ դատական քննության ընթացքում «ողջամիտ ժամկետում գործերի քննության» հասկացությանը: Պետք է նշել, որ այն որպես սկզբունք ամրագրվեց ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 24-րդ հոդվածում, որի հիմքում ընկած է ողջամիտ ժամկետում դատարանի առջև կանգնելու մեղադրյալի իրավունքը:

ՀՀ քրեական դատավարության 388-րդ հոդվածն ամրագրում է, որ վերաքննիչ դատարանը պարտավոր է գործը քննել և որոշում կայացնել *ողջամիտ ժամկետում:* Գործի քննության ողջամիտ ժամկետը որոշելիս հաշվի է առնվում նաև առաջին ատյանի դատարանում գործի քննության ժամկետը:

ՀՀ քրեական դատավարության 417-րդ հոդվածն ամրագրում է, որ վճռաբեկ դատարանը դատական նիստում գործը քննում է *ողջամիտ ժամկետում:* Հարկ է նշել, որ, ի տարբերություն գործող օրենսգրքի, քրեական դատավարության օրենսգրքի նախագծի 194-րդ հոդվածի առաջին մասն ամրագրում է, որ մինչդատական վարույթում հանրային քրեական հետապնդումն այն հարուցելու պահից չի կարող տևել ավելի, քան երկու ամիս ոչ մեծ ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով, չորս ամիս միջին ծանրության հանցանքի վերաբերյալ վարույթով, ութ ամիս ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով, տասը ամիս առանձնապես ծանր հանցանքի վերաբերյալ վարույթով: Ըստ այդ հոդվածի երկրորդ մասի՝ բացառիկ դեպքերում, երբ դա է պահանջում արդարադատության շահը, նախատեսված ժամկետները վերադաս դատախազի կողմից կարող են երկարացվել առավելագույնը երկու ամսով: Այսպիսով, փաստորեն, ամրագրվում է անձի նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու առավելագույն ժամկետները:

Քրեադատավարական նորմերի վերլուծությունը վկայում է այն մասին, որ՝

1. Inter alia, ողջամիտ ժամկետն ամրագրված է որպես քրեադատավարական ունիվերսալ սկզբունք, որպես արդար դատաքննության իրավունքի օրգանական մաս և որ դատավարական ժամկետները դատավարական բոլոր մասնակիցներին պետք է հնարավորություն տան իրականացնելու իրենց իրավունքներն ու պարտականությունները[7]: Ըստ որում, մրցակցային դատավարական ձևի պայմաններում ավելի մեծ ուշադրություն է դարձվում ողջամիտ ժամկետներում դատարանի առջև կանգնելու մասին անձի իրավունքի իրացմանը,

2. առաջին ատյանի, վերաքննիչ և վճռաբեկ դատարանները սահմանափակված են գործի քննության և որոշման կայացման ողջամիտ ժամկետներով:

Որքան էլ վերոհիշյալ քրեադատավարական նորմերը վկայում են ողջամիտ ժամկետներում վարույթի իրականացման մասին, այնուամենայնիվ, դրա չափորոշիչներն օրենքում տրված չեն: Թեև Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրքն ամրագրում է դատարանի պարտավորությունն իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության վերաբերյալ՝ օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից, գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության միջոցով, այնուամենայնիվ դա ևս նշված հարցում սպառիչ չէ: Դրա համար էլ բացի պետության պարտավորությունից, դատական օրենսգրքում տրված են ողջամիտ ժամկետի որոշման որոշակի չափորոշիչներ, որպիսիք են՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը[1]: Այս առնչությամբ հարկ է ընդգծել, որ Բարձրագույն դատական խոր-

---

[7] Տե՛ս Сокол П. Я. Процессуальные гарантии быстроты предварительного расследования: Дисс. канд. юрид. наук. М., 1990, էջ 79:

հուրդը դեռևս չի մշակել գործի քննության միջին ուղենիշային տևողության չափանիշները: Թեև Բարձրագույն դատական խորհուրդն իր 2018 թվականի «ՀՀ-ում արդարադատության արդյունավետության համալիր բարելավման հայեցակարգ»-ի[8] մեջ ամրագրել է, որ անհրաժեշտ է որակական փոփոխություններ իրականացնել դատարանի մատչելիության ու ողջամիտ ժամկետներում գործերի քննության հիմնարար սկզբունքների իրացման համար, բայց այդ ուղղությամբ աշխատանքներ դեռևս արված չեն: Բացի այդ, հարկ է նշել, որ գործող Դատական օրենսգրքի «Դատական վիճակագրության վարումը և հրապարակայնության ապահովումը» վերտառությամբ 21.1-րդ հոդվածի 9-րդ մաս ամրագրում է, որ առաջին ատյանի յուրաքանչյուր դատարանի և դատավորի վերաբերյալ՝ ըստ քրեական, քաղաքացիական և վարչական գործերի, հրապարակվում են, մասնավորապես, հետևյալ տվյալները (տեղեկությունները)՝ 1. գործի քննության միջին տևողությունը՝ ըստ նիստերի քանակի. 2. գործի քննության միջին տևողությունը՝ ըստ ժամանակի (հաշվարկի միավոր՝ ժամ) (այդ թվում՝ ըստ դատաքննության նախապատրաստության, դատաքննության և դատական ակտի կայացման փուլերի միջին տևողության): Չնայած այս օրենսդրական պահանջներին՝ դատարանների գործունեության վերաբերյալ հրապարակային տվյալների ուսումնասիրությունը վկայում է, որ այդպիսի վիճակագրություն ներկայում չի վարվում, ինչը հնարավորություն չի տալիս վերհանել դատական ատյանների կողմից գործերի քննության միջին տևողությունը: **Ուստի, կարծում ենք, որ այդպիսի վիճակագրական տվյալների մշակումն ու վերլուծությունը, դրանց արդյունքների հրապարակումն ուղղորդող նշանակություն կարող են ունենալ գործերի քննության ողջամիտ ժամկետների չպահպանման պատճառները վերհանելու, ըստ այդմ դատական պրակտիկայի կատարելագործմանն ուղղված ընդհանուր միջոցառումներ իրականացնելու առումով:** Միևնույն ժամանակ, ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններում քրեական գործերի քննության վերաբերյալ՝ 2015-2017 թվականների հաշվետվությունների ուսումնասիրությունը վկայում է, որ տվյալ տարում անավարտ գործերի քանակի ավելացման և դրանով պայմանավորված՝ հաջորդ տարում դատարանների ծանրաբեռնվածության աճի միտում կա:

Վերը նշված չափորոշիչների սահմանազծումը խոսում է այն մասին, որ պետությունը փորձել է ապահովել դատավարության մասնակիցների պաշտպանությունը դատաքննության անհարկի ձգձգումներից, որից էլ կախված է արդարադատության որակն ու արդյունավետությունը: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղված թիվ R(87)18 հանձնարարականում նշվում է, որ հանցագործությունների բացահայտման հապաղումը վարկաբեկում է քրեական դատավարությունը և ընդհանուր առմամբ բացասաբար է անդրադառնում արդարադատության պատշաճ իրականացման վրա[9]: Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն իր DH (97) հանձնարարականում[10], որն ընդունվել է Իտալիայում ձևավորված քաղաքացիական գործերի քննության ողջամիտ ժամկետների խախտման պրակտիկայի կապակցությամբ, ընդգծել է, որ «արդարադատության իրականացման չափազանց ձգձգումը լուրջ վտանգ է ներկայացնում իրավունքի գերակայության համար»: Ներպետական մարմիններում դատաքննության կամ այլ իրավական վարույթի տևողության ժամկետը գնահատելիս Եվրոպական դատարանն առաջնորդվում է նաև այն սկզբունքով, որ ողջամիտ ժամկետի պահանջի խախտումը կարող է կատարվել միայն պետության մեղքով տեղի ունեցած ձգձգումներով: Ընդ որում, պատասխանող Կառավարությունը չի կարող քաղաքացիական և քրեական գործերի քննությունը ողջամիտ ժամկետում կազմակերպելու իր պարտավորությունից շեղումը պատճառաբանել ներպետական դատարանների ծանրաբեռնվածությամբ: Եվրոպական դատարանը

[8] Տե՛ս http://court.am/news/21-08-2018/Հայեցակարգ.pdf

[9] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղվածթիվ R(87)18 հանձնարարականը: http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR(87)18e.pdf

[10] Տե՛ս Մարդու իրավունքների եւ հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ. նոյեմբերի 4-ի կոնվենցիայի մեկնաբանություն. Երեւան 2005թ. էջ 45:

բազմիցս մերժել է պատասխանող կառավարությունների նման պատճառաբանությունը, ընդգծելով որ Եվրոպական կոնվենցիան պայմանավորվող պետություններին պարտավորեցնում է իրենց իրավական համակարգերը կազմակերպել այնպես, որ դատարանները կարողանան ապահովել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները՝ ներառյալ «ողջամիտ ժամկետի» պահանջը[11]:

Եվրոպական դատարանը մշակել է այն չափանիշները, որոնցով պետք է առաջնորդվեն պայմանավորվող պետությունների իրավասու մարմինները ժամկետների ողջամտությունը գնահատելիս: Այդպիսիք են՝

- գործի բարդությունը,
- Եվրոպական դատարան դիմած անձի, ինչպես նաև պետաիշխանական մարմինների վարքագիծը, որոնց պատճառով ձգձգվել է գործի քննությունը,
- դիմողի համար դատաքննության առարկա հանդիսացող արժեքի կարևորությունը:

Գործի բարդությունը որոշելիս Եվրոպական դատարանը ելակետային է համարում մի շարք չափանիշներ, նշելով որ բարդությունը կարող է կապված լինել ինչպես փաստի, այնպես էլ իրավական տեսակետների հետ: Այդ հարցում դատարանը մեծ նշանակություն է տալիս հետևյալ գործոններին. հաստատման ենթակա փաստերի բնույթին, մեղադրյալների և վկաների թվաքանակին, միջազգային գործոններին, ինչպես նաև դատավարությանը նոր անձանց ներգրավմանը: Սակայն այս ցանկը նույնպես չի կարելի սպառիչ համարել: Այսպես՝ Ալեննն ընդդեմ Ֆրանսիայի գործով Դատարանը որպես գործը բարդացնող հանգամանքներ նշեց պետության պատասխանատվության հետ կապված դեպքերը, ընդգծելով որ գործի բարդությունը չի կարող լիովին արդարացնել դատական քննության տևողությունը: Տվյալ բարդ գործով, որի քննությունը ազգային դատարաններում տևել էր 11 տարի և 6 ամիս, Եվրոպական դատարանը փաստեց ողջամիտ ժամկետի խախտումը[12]: Գործի բարդությունը որոշելիս Եվրոպական դատարանը հաշվի է առնում նաև ժամանակի և տարածության առումով այն հեռավորությունը, որ կա քննվող դեպքերի կամ փաստերի և դատավարական գործընթացի միջև[13]:

Դիմումատուի վարքագծի վերաբերյալ պահանջվում է, որպեսզի դիմումատուն ողջամտություն ցուցաբերի իրեն առնչվող դատավարական քայլերի կատարման հարցում, ձեռնպահ մնա ձգձգելու հնարքների գործադրումից և օգտվի ներպետական օրենսդրությամբ տրամադրվող շրջանակներից՝ վարույթը կրճատելու համար:

Համապատասխան մարմինների վարքագծի վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ պետությունն է պատասխանատու իր բոլոր մարմինների համար, ըստ որում, ոչ միայն դատական մարմինների, այլև բոլոր հասարակական հաստատությունների համար[14]: Նույնիսկ այնպիսի իրավական համակարգերում, որոնցում կիրառվում է այն սկզբունքը, որ ընթացակարգի իրականացման նախաձեռնությունը վերապահվում է կողմերին, վերջիններիս վերաբերմունքը դատարաններին չի ազատում արագ կերպով դատաքննություն ապահովելու պարտավորությունից, ինչը պահանջվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով[15]:

Դիմողի համար դատաքննության առարկա հանդիսացող արժեքի կարևորության մասին խոսելիս պետք է ընդգծել այն գործերի շրջանակը, որոնք իրենց բնույթով պահանջում են քննության հատուկ արագություն եւ ընթացակարգ:

ՀՀ դատական օրենսգրքում ողջամիտ ժամկետի որոշման օրենսդրական չափանիշների շրջանակը սպառիչ չէ և կարող է համալրվել: Այս առումով նաև հատկանշական է Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների և

---

[11] Տե՛ս Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ 1987 թվականի սեպտեմբերի 17-ի քրեական արդարադատության պարզեցմանն ուղղվածթիվ R(87)18 հանձնարարականը: http://www.barobirlik.org.tr/dosyalar/duyurular/hsykkanunteklifi/recR(87)18e.pdf

[12] Տե՛ս Нила Моул, Катарина Харби, Л.Б.Алексеева. Статья 6: право на справедливое судебное разбирательство. М. 2001, էջեր 36-37: Տե՛ս նաեւ Европейский суд по правам человека. т. 1, М. 2000, էջեր 89, 91:

[13] Տե՛ս Տե՛ս Донна Гомьен, ДавидХаррис, ЛеоЗваак. Европейская конвенция по правам человека и Европейская социальная хартия: правоипрактика, перев. сангл., М. 1998, էջ 214:

[14] Տե՛ս Martins Moreira v Portugal § 60:

[15] Տե՛ս Pafitis - ը եւ այլք ընդդեմ Հունաստանի , § 93, Tierce - ն ընդդեմ Սան Մարինոյի , § 31, Sürmeli - ն ընդդեմ Գերմանիայի [ՄՊ], § 129:

իրավունքի գերակայության գլխավոր տնօրինության 2017 թվականի կարծիքը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի նախագծի վերաբերյալ առ այն, որ թեև գործին բնորոշ հանգամանքների բացակայության պարագայում անհնար է ճշգրիտ նշել, թե որ ժամկետը կլինի «ողջամիտ», այս դրույթի ձևակերպումը կարող է խստացվել՝ ամրագրելով որ դատավորները և դատախազները պարտականություն ունեն երաշխավորելու, որ ջանասիրաբար հետամուտ են քրեական վարույթի իրականացմանը, որում իրենք ներգրավված են[16]:

Անդրադառնալով եվրոպական նախադեպային իրավունքին, հարկ է նշել, որ ի լրումն վերոհիշյալի, քննարկվող հարցում կարևորվում են հետևյալ գործոնները՝

- վարույթն սկսելու պահը,
- վարույթն ավարտելու պահը,
- ողջամիտ ժամկետի գնահատումը:

Դատավարական գործողությունների սկիզբ դիտարկվում է մեղադրանք ներկայացնելու պահը[17]: «Ողջամիտ ժամանակ»-ը սկսում է հաշվարկվել մինչ գործը դատարան ներկայացնելը՝ կալանավորելու պահից: Էկլեն ընդդեմ Գերմանիայի գործով[18] դատարանն իր որոշման մեջ նշել է, որ, քրեական գործով ողջամիտ ժամկետը, որի մասին խոսվում է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին կետում, սկսում է ընթանալ այն պահից, երբ անձին մեղադրանք է առաջադրվել, որը կարող է տեղի ունենալ ավելի վաղ, քան գործը դատարան կհասնի, կալանավորման օրվանից, այն ամսաթվից, երբ շահագրգռված անձը պաշտոնապես տեղեկացվել է, որ նրա նկատմամբ հարուցված է քրեական գործ, կամ պաշտոնապես տեղեկացվել է, որ նրա նկատմամբ հարուցված է քրեական գործ, կամ այն ամսաթվից, երբ սկսվել է նախաքննությունը: Մեղադրանքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի կետի նպատակների ներքո կարելի է բնորոշել որպես իրավասու իշխանությունների կողմից անձի պաշտոնապես տեղեկացումն առ այն, որ գոյություն ունեն հիմքեր՝ պնդելու վերջինիս կողմից քրեորեն պատժելի իրավախախտում կատարելու մասին:

Եվրոպական դատարանը պատասխանել է նաև այն հարցին, թե որոնք են ողջամիտ ժամկետի սահմանները: Արդեն հիշատակված Էկլեն ընդդեմ Գերմանիայի գործով Դատարանը նշել է, որ ինչ վերաբերում է ավարտվելու ժամանակին, ապա քրեական գործերով այն ժամանակահատվածը, որի վրա տարածվում են 1-ին կետի պահանջները, ներառում է գործի ընթացքի ամբողջ ժամանակը՝ ներառյալ վերաքննիչ գործընթացը: Գործի քննության ինչպիսի՞ տևողությունը պետք է համարել ողջամիտ, և ինչպիսի՞նը՝ ոչ:

Այս հարցին միանշանակ պատասխան չի կարող տրվել, ինչի առթիվ բազմիցս է արտահայտվել Եվրոպական դատարանը: Մասնավորապես, Պրետոն և այլոք ընդդեմ Իտալիայի գործով[19] Դատարանը նշել է, որ դատական քննության տևողության ողջամտությունը յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է լինում գնահատել ըստ տվյալ գործի կոնկրետ հանգամանքների և դատարանի պրակտիկայում ձևավորված չափանիշների, այն է՝ գործի բարդությունը, կողմերի վարքագիծը, դատական իշխանությունների վարքագիծը՝ հաշվի առնելով գործի քննությունը: Օրինակ՝ Իտալիայի դատարաններում գործի քննությունն ընդհանուր առմամբ տևել էր 3 տարի 6 ամիս և 5 օր, սակայն Եվրոպական դատարանը գտավ, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջների խախտում տեղի չի ունեցել, այսինքն՝ գործը քննվել է ողջամիտ ժամկետներում:

Ինչ վերաբերում է ժամկետն ավարտելու հարցին, ապա այն սովորաբար տարածվում է քննարկվող ամբողջ վարույթի վրա՝ ներառելով բողոքարկման վարույթը՝ ընդհուպ մինչև վեճը լուծող որոշման ընդունումը: Ուստի, ողջամիտ ժամկետի պահանջը կիրառվում է իրավական վարույթի բոլոր այն փուլերի նկատմամբ, որոնք ուղղված են վեճը լուծելուն՝ չբացառելով գործն ըստ էության լուծող վճռին հաջորդող փուլերը[20]:

Վարույթի տևողության ողջամտությունը որոշվում է գործի այն հանգամանքների լույսի ներքո, որոնք պահանջում են ընդհանուր

[16] Տե՛ս https://rm.coe.int/16806ef4c5

[17] Տե՛ս Neumeister v. Austria, էջ 18:

[18] Տե՛ս Deweer v. Belgium· էջ 42:

[19] Տե՛ս Preto and others v Italy, § 28:

[20] Տե՛ս Ուղեցույց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի վերաբերյալ: Արդար դատաքննության իրավունք, էջ 72: https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf#page72

գնահատում: Եթե վարույթի որոշակի փուլեր ինքնին անցկացվում են ընդունելի արագությամբ, ապա վարույթի ընդհանուր տևողությունը կարող է այնուամենայնիվ գերազանցել ողջամիտ ժամկետը[21]: Կոնվենցիայի 6-րդ հոդվածը պահանջում է, որ դատական վարույթն արագացված լինի, սակայն այն նաև սահմանում է արդարադատության պատշաճ իրականացման առավել ընդհանուր սկզբունքներ: Այս հիմնարար պահանջի տարբեր տեսանկյունների միջև պետք է հաստատվի արդար հավասարակշռություն:

Հարկ է ընդգծել, թե քրեական վարույթի տևողությունը որոշելիս ինչպե՞ս է պարզվում ժամկետի ողջամտությունը: Այս դեպքում դատարանը պետք է հաշվի առնի այնպիսի գործոններ, ինչպիսիք են գործի բարդությունը, դիմումատուի վարքագիծը և համապատասխան վարչական ու դատական մարմինների վարքագիծը[22]:

Հայաստանի Հանրապետությունում քրեական արդարադատություն իրականացնելիս կարևոր է հաշվի առնել ՄԻԵԴ-ի կողմից նախադեպային իրավունքում ձևավորված իրավական դիրքորոշումներին՝ անհատական մոտեցում ցուցաբերելով յուրաքանչյուր գործ քննելիս: Մեր կարծիքով՝ թե՛ օրենսդիրը և թե՛ Բարձրագույն դատական խորհուրդը /վերջինս, որպես ուղենիշային նորմեր սահմանող մարմին/ պետք է նաև հատուկ ուշադրություն դարձնեն ու ամրագրեն ողջամիտ ժամկետի սահմանների ու դրա պահպանման վրա:

Ողջամիտ ժամկետի պահպանման վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովը (CEPEJ) վերջին տարիներին մշակել է առաջարկություններ և նշել, որ ողջամիտ ժամկետի սկզբունքի ի կատար ածումը կախված է մի շարք գործոններից, մասնավորապես՝ գործի ընթացքի նկատմամբ դատական հսկողությունից, գործերի մշտադիտարկումից, ուշացումները կանխորոշելուն ուղղված միջոցների նախատեսումից ու ձգձգման հետևանքով առաջացող ենթադրյալ ռիսկերը նվազեցնելուց[23]:

Ողջամիտ ժամկետի ամրագրման և պահպանման վերաբերյալ եվրոպական չափորոշիչներից որոշ մասեր պետությունները ներառել են իրենց քրեադատավարական օրենսգրքերում, մասնավորապես՝

Լեհաստանի քրեական դատավարության օրենսգրքի 2-րդ հոդվածի համաձայն քրեական դատավարության օրենսգրքի նպատակն է՝ սահմանել կանոններ, որոնք կապահովեն գործի ելքը, որը հասանելի կլինի ողջամիտ ժամկետում:

Նույն օրենսգիրքն ամրագրում է, որ դատարանը կարող է գործը հետ ուղարկել դատախազին՝ նախապատրաստական գործընթացները ավարտելու կարգով…որն էլ հնարավորություն կտա դատարանին ողջամիտ ժամկետում ճիշտ որոշում կայացնել[24]:

Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգրքի 22-րդ հոդվածի առաջին կետի համաձայն դատարանը գործը պետք է քննի ողջամիտ ժամկետում: Դատախազն ու հետաքննող մարմինները պարտավորված են ապահովել նախաքննության իրականացումը քրեական օրենսգրքով սահմանված ժամկետի շրջանակներում[25]:

Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածի համաձայն մեղադրյալի նկատմամբ վերջնական դատական ակտը պետք է կայացվի ողջամիտ ժամկետում[26]:

Լատվիայի քրեական դատավարության օրենքի 14-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք իրավունք ունի քրեական վարույթը ողջամիտ ժամկետում, այսինքն՝ առանց չհիմնավորված ուշացման ավարտելու: Քրեական դատավարական գործողությունների ավարտը ողջամիտ ժամկետում կապված է գործի ծավալի /բարդության/, իրավական ընթացակարգերի, դատավարական ծավալի, դատա-

[21] Տե՛ս Dobbertin v France, § 44:

[22] Տե՛ս König v Germany, § 99, Neumeister v Austria , §21, Ringeisen v Austria, §110, Pélissier-ը and Sassi v France §67, Pedersen and Baadsgaard - և v Denmark, §45: https://www.echr.coe.int/Documents/Guide_Art_6_HYE.pdf#page72

[23] Տե՛ս http://www.mzz.gov.si/fileadmin/pageuploads/Zakonodaja_in_dokumenti/knjiznica/bled_proceedings.pdf

[24] Լեհաստանի քրեական դատավարության օրենսգիրք, տե՛ս www.legislationline.org

[25] Բուլղարիայի քրեական դատավարության օրենսգիրք, տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21344

[26] Տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21375

վարությունում ներգրավված անձանց՝ իրենց պարտավորությունների կատարման հանդեպ ունեցած վերաբերմունքի և այլ օբյեկտիվ պայմաններ: Քրեական վարույթը, որում կիրառված է ազատությունից զրկելու հետ կապված խափանման միջոցը, ողջամիտ ժամկետի ապահովման հարցում առավելություն ունի այլ քրեական գործընթացների համեմատ: Անչափահասների հետ կապված քրեական վարույթն ողջամիտ ժամկետի մասով առավելություն ունի չափահասների գործով նմանատիպ վարույթների նկատմամբ: Ողջամիտ ժամկետը չպահպանելը կարող է հիմք հանդիսանալ Լատվիայի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված վարույթի դադարեցման համար[27]:

Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն յուրաքանչյուր ոք արդար դատաքննության իրավունք ունի, ինչպես նաև անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում գործի ելքի՝ Մոլդովայի քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նույն օրենսգրքի մեկ այլ դրույթով սահմանվում է, որ քրեական հետապնդումն ու գործի քննությունը իրականացվում են ողջամիտ ժամկետներում: Քրեական գործի քննության ողջամիտ ժամկետների չափորոշիչներն են. գործի բարդությունը, դատավարության մասնակիցների վարքագիծը, դատական իշխանության և քրեական հետապնդման մարմինների վարքագիծը, շահագրգիռ անձի համար դատավարության արժեքը /կարևորությունը/, տուժողի անչափահասությունը: Քրեական հետապնդումը ողջամիտ ժամկետներում ապահովվում է դատախազի կողմից, իսկ քրեական գործի դատաքննությունը՝ համապատասխան դատական ատյանի կողմից: Այն դեպքում, երբ քրեական հետապնդման կամ դատաքննության ընթացքում կոնկրետ գործով սպառնալիք է ստեղծվում ողջամիտ ժամկետի խախտման, ապա դատավարության մասնակիցները կարող են քրեական հետապնդման մարմնին կամ դատական ատյանին դիմել, ով քննում է ըստ էության գործը՝ քրեական հետապնդման կամ դատավարության արագացման դիմումով: Դիմումի քննությունն իրականացվում է կողմերի բացակայությամբ հինգ աշխատանքային օրվա ընթացքում այլ դատավորի կամ դատավորների այլ կազմով, որը քննում է կոնկրետ գործը: Քրեական հետապնդման մարմինը կամ դատական ատյանը պատճառաբանված որոշում են կայացնում ըստ դիմումի, որով պարտավորեցնում են համապատասխանաբար քրեական հետապնդման մարմինը կամ դատական ատյանը, որն ըստ էության քննում է գործը՝ դատավարական գործողությունների կատարման՝ անհրաժեշտության դեպքում որոշակի ժամկետ սահմանել պրոցեսի արագացման համար կամ էլ դիմումը մերժել: Ընդ որում, որոշումն ենթակա չէ բողոքարկման[28]:

Ռումինիայի քրեական դատավարության օրենսգրքի 8-րդ հոդվածի համաձայն դատական մարմինները պարտավորված են իրականացնելու քրեական հետապնդում և դատաքննություն՝ դատաքննության երաշխիքների և կողմերի իրավունքների համապարփակ ապահովմամբ և միջոցներ են ձեռնարկում հանցագործությունը բացահայտելու ուղղությամբ. ցանկացած մեղավոր և հանցագործություն կատարած անձ քրեորեն պատժելի են օրենքով սահմանված կարգով՝ ողջամիտ ժամանակի ընթացքում[29]:

Շվեյցարիայի քրեական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի համաձայն կողմերը կարող են նշանակել երկու կամ ավելի իրավական գործակալ՝ դատավարությունը չպատճառաբանված չձգձգելու համար[30]:

Բոսնիայի և Հերցեգովինայի քրեական դատավարության օրենսգրքի 14-րդ հոդվածի համաձայն մեղադրվող կամ կասկածյալ անձինք պետք է դատարանի առաջ բերվեն նվազագույն ողջամիտ ժամկետում և գործերը պետք է քննվեն առանց ուշացման՝ այն օրվանից մեկ տարվա ընթացքում, երբ հաստատվել է մեղադրական ակտը: Դատարանը նույնպես դատավարությունը չպետք է իրականացնի ուշացումներով: Կալանավորման ժամկետը պետք

[27] Լատվիայի քրեական դատավարության օրենք, տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21415

[28] Տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21427:

[29] Տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21462:

[30] Տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21477:

է իրականացվի կարճագույն անհրաժեշտ ժամկետում[31]:

Վերլուծելով միջազգային փորձը, կարող ենք նշել, որ զարգացած երկրների օրենսդրությունը ելնում է հիմնականում կոնկրետ ժամանակի սահմանումից, մինչդեռ վերջին տարիներին իրենց օրենսդրական ակտերում փոփոխություններ կատարած զարգացող երկրների օրենսդրական ակտերում փորձ է արվել չափորոշիչների ամրագրմամբ ապահովել ողջամիտ ժամկետի սկզբունքը:

Հատկանշական են նաև օրենսդրական ակտերում այնպիսի եզրույթների օգտագործումը, ինչպիսիք են նվազագույն ողջամիտ ժամկետ, նվազագույն անհրաժեշտ ժամկետ և այլն:

Անկախ սահմանադրական ամրագրումից և քրեադատավարական օրենսգրքում ողջամիտ ժամկետի վերաբերյալ ամրագրումից, հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետությունում 2017 թվականի ընթացքում Մարդու իրավունքների պաշտպանին ներկայացված բողոքների շրջանակներում բարձրացվել են քրեական գործերի քննության ձգձգման՝ ողջամիտ ժամկետների խախտման հետ կապված բազմաթիվ խնդիրներ: Այդ բողոքների հիմնական բովանդակությունն այն է, որ քրեական գործերի նախաքննությունը կամ դատաքննությունն անընդհատ անհիմն պատճառներով ձգձգվում են[32]:

Նշենք, որ վերջին տարիներին արձանագրվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններում ստացված գործերի կտրուկ աճ: Այսպես՝ միայն քրեական գործերի հաշվարկով 2015 թվականի ընթացքում ստացվել է 4476 քրեական գործ, 2016 թվականի ընթացքում 4599 քրեական գործ, 2017 թվականի ընթացքում 5027 քրեական գործ: Այսինքն՝ ողջամիտ ժամկետների պահպանման առումով կարևոր հարց է նաև դատավորների ողջամիտ ծանրաբեռնվածության հարցը: Ընդ որում, որևէ օրենսդրական ակտ չի տալիս ողջամիտ ծանրաբեռնվածության հստակ եղանակներն ու չափորոշիչները: Այնուամենայնիվ, խնդրի լուծման ինստիտուցիոնալ քայլերից էր Երևան քաղաքում առաջին ատյանի ընդհանուր իրավասության մեկ դատարանի ստեղծումը, որի դատական տարածքը Երևան քաղաքի տարածքն է: Մեկ դատարան ստեղծելու հիմնական նպատակներից մեկը դատական գործերի հավասարաչափ բաշխման արդյունքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի բոլոր դատավորների հավասարաչափ ծանրաբեռնվածությունն ապահովելն է: Հաջորդ ինստիտուցիոնալ քայլերից է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատավորների ոչ ֆիքսված թվակազմը:

Օրենսդրական և ինստիտուցիոնալ բացթողումները մեզանում հանգեցնում են գործերի քննության ժամկետների անհարկի ձգձգումների և ողջամիտ ժամկետներում գործերի քննության սկզբունքի զանգվածային ոտնահարումների:

Ելնելով կատարված ուսումնասիրություններից, առաջարկում ենք ողջամիտ ժամկետի վերաբերյալ քրեադատավարական ու դատական օրենսգրքերում հստակեցնել ողջամիտ ժամկետի որոշման/գնահատման/ չափորոշիչները՝ ամրագրելով որ.

- ***դատավորները և դատախազները պարտականություն ունեն երաշխավորելու քրեական վարույթի իրականացումը, որում իրենք ներգրավված են /պատշաճ ջանասիրության պահանջի սահմանումը/: Պատշաճ ջանասիրության սկզբունքի ամրագրումը կպարտավորեցնի դատավորներին և դատախազներին ավելի պատասխանատու մոտենալ գործը ընթացքի և ելքի նկատմամբ,***
- ***Բարձրագույն դատական խորհուրդն ուղենիշային տևողության նորմերը սահմանելիս պետք է ուշադրություն դարձնի նմանատիպ գործերով ողջամիտ ժամկետի սահմանների ուրվագծմանը,***
- ***ողջամիտ ժամկետի խախտումը կարող է հանգեցնել քրեական վարույթի դադարեցման: Այս իրավական հիմքը հստակ պետք է ամրագրել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում,***
- ***ողջամիտ ժամկետի խախտման սպառնալիքի դեպքում համապատասխան իրավասու մարմիններին դիմում ներկայացնելու ինստիտուտը /գործի քննությունն արագացնե-***

---

[31] Տե՛ս https://www.legislationline.org/documents/action/popup/id/21342:

[32] Տե՛ս http://www.ombuds.am/resources/ombudsman/uploads/files/publications/b5220dd0b83b420a5ab8bb037a1e02ca.pdf:

լու վերաբերյալ դիմումի ներկայացում/: Այստեղ խոսքը գնում է ոչ թե, նախաքննության ժամկետի երկարացման վերաբերյալ քննիչի կողմից դատախազին ուղղված պատճառաբանական որոշման, այլ ձգձգման սպառնալիքի հիմքերի վերացման մասին: Վերոհիշյալ առաջարկությունները, կարծում ենք, Բարձրագույն դատական խորհուրդը կարող է հաշվի առնել գործի քննության միջին ուղենիշային տևողության չափանիշները մշակելիս՝ ըստ դատական օրենսգրքով սահմանված պարտավորության:

Հարկ ենք համարում նաև նշել, որ քրեական դատավարության օրենսգրքով սահմանված նախաքննության ավարտի երկամսյա ժամկետի վերաբերյալ անհրաժեշտ է որոշ սահմանափակումներ նախատեսել: Մասնավորապես, երկամսյա ժամկետը վերջնական չէ և կարող է օրենքով սահմանված կարգով երկարացվել: Մեկ անգամից ավելի նախաքննության երկարաձգումը կարող է հանգեցնել նախաքննության ժամկետի անընդհատ երկարացման: Վերջինս մեծացնում է անձի անընդհատ քրեական հետապնդման տակ մնալու վտանգը: Ուստի գտնում ենք, որ

- **ողջամիտ ժամկետն ակնհայտ խախտած իրավասու մարմինների համար պետք է նախատեսել պատասխանատվություն:** Ակնհայտության սահմանումը դժվարագույն գործընթացներից է, սակայն կոնկրետ ժամկետներից ոչ ողջամիտ ձգձգումն ու շեղումը կարող է բնորոշվել ողջամիտ ժամկետի սահմանները բնորոշելով: Իսկ ակնհայտ խախտած իրավասու մարմինների պատասխանատվությունը կարող է լինել վարչականից ընդհուպ քրեական պատասխանատվություն:

Բացի չափորոշիչների ամրագրումներից, անհրաժեշտ է նաև նախատեսել գործերի քննության պլանավորման հստակ համակարգը, դատական քարտեզի մոդեռնիզացումը, ինչպես նաև ողջամիտ ծանրաբեռնվածության օրենսդրական չափորոշիչների և գործերի մշտադիտարկման հնարավորության ամրագրումը, գործի ընթացքի նկատմամբ դատական հսկողության, ուշացումները կանխորոշելուն ուղղված միջոցների և ձգձգումների նվազեցման մեխանիզմների սահմանումը:

Ողջամիտ ժամկետի քրեադատավարական ամրագրումն ու իրավակիրառ մարմինների կողմից վերջինիս պահպանումը նպաստում է յուրաքանչյուրի արդար դատաքննության իրավունքի իրականացմանն ու իրավական անորոշության վերացմանը, ինչպես նաև ընդհանուր առմամբ արդարադատության նկատմամբ հանրային վստահության վերականգնմանը:

Կյանքի և մահվան դիալեկտիկան հայ գրականության մեջ

Դավթյան Վ.Ս.
Երևանի հյուսիսային համալսարան (Հայաստան, Երևան)
varduhidavtyan@mail.ru

Վճռորոշ բառեր՝ կյանք, մահ, մարդ, կյանքի ու մահվան դիալեկտիկա

Диалекика жизни и смерти в армянской литературе

Давтян В.С.
Северный университет Еревана (Армения, Ереван)
varduhidavtyan@mail.ru

Резюме: Извечные проблемы человеческих судеб, их спасения кажущиеся мистическими вопроси параллельного мира создали неразрешимую тему жизни и смерти в литературе, религии и философии. В частности, в литературе, в контексте углубленного анализа данных систем, в концепте "Человека", как наивысший ценности, раскрывается важнейшая проблемса бытия- счастья жизни. Формула "извечной темы" будучи исследованной литературоведами, включает в себе концепт смерти. В литературе тема смерти была и остается одна из доминантных.
Ключевые слова: жизн, смерть, человек, диалектика жизни и смерти.

The Dialectics Between Life and Death in the Armenian Literature.

Davtyan V. S.
North University of Yerevan (Armenia, Yerevan)
varduhidavtyan@mail.ru

Abstract: The issues of human fates, their salvation and survival and the eristance of a parallel world have raised the eternal question of life and death on philosophy, religion and literature. In literature, in particular, in the cousse of a minute study, the value of a “human being” reveals one of the most important questions- the happiness of living. The concept of an “eternal theme” is treated by the literary theoreticians as a phenomenon of death. The predominance of the concept “death” on literature remains an undisputable one.
Keywords: death, life, human,dialectics between Life and Death.

Մարդկային ճակատագրի, մարդու փրկության, առեղծված թվացող այնկողմնային աշխարհի մշտակա խնդիրները գրականության, կրոնի, փիլիսոփայության մեջ ձևավորել են կյանքի և մահվան հավերժական թեմաները: Մասնավորապես գրականության մեջ այս համակարգերի խորքային քննության համապատկերում «Մարդ» արժեքի բարձրագույն ըմբռնման մեջ բացվում է կեցության կարևոր խնդիրներից մեկը՝ ապրելու երջանկությունը: Մարդը ծնվում է լինելիության խորհրդով, կեցության բնազդական այն համառությամբ, թե չպետք է բաց թողնել քեզ բաժին հասած կյանքը:

Ժամանակի անընդմեջ փոփոխվող շրջապտույտի մեջ վերաձևվում են կյանքի և մահվան փոխկապակցված հարցերի մեկնությունները, առաջ են գալիս կյանքի խորհրդի տարիմաստ ընկալումներ:

Անցյալ դարի վերջին երկարատև արգելքներից հետո հետմահու վերագնահատվեց հնդիկ հոգևոր առաջնորդ Բխագվան Շրի Ռաջնիշը, առավել հայտնի՝ «Օշո» անունով, որն իր կրոնական և մշակութային ոգեշնչումների մեջ բանաձևեց համամարդկային կենսական ճշմարտություններ: Կյանքը աստվածացնող և մահվան անճանաչությունը ճշգրտող Օշոն կրոնափիլիսոփայական հանձնառությամբ մահը համարեց նոր կյանքի սկիզբ, մի բանի վերջ, որն արդեն մահացել է, ավելին, կյանքի կուլմինացիա, դուռ՝ երկու կյանքերի միջև, որոնցից մեկն ավարտվեց, մնաց հետևում, իսկ մյուսը սպասում է ապագայի մեջ իր բացվելուն: Սա մի տեսակ հաշտեցման «արարողակարգ» էր կյանքի, մահվան և մարդու միջև: Երկու անխուսափելիությունները՝ մարդուց անբաժան, հաջորդում են իրար, և մարդը, սկսելով մեկից, բաց չթողնելով կյանքը, չպետք է միայն շնչի կամ շարունակի ծերանալ՝ սեփական գոյությունը դարձնելով յոթանասուն կամ ութսունամյա աստիճանական մահ: Անհրաժեշտ է վայելել կյանքի անա-

ընկալությունը, բարձրագույն այն գիտակցությամբ, որ կյանքի դինամիկ, հարաշարժ ընթացքին գույն, հոտ, իմաստ հաղորդողը ինքդ ես, և ոչ ոք քեզնից բացի:

Ավելի հաճախ մարդիկ սարսափում են մահից, խուսափում բարձրաձայնել սահմռկեցնող այս բառը, թեև շրջանցելով մահվան թեման և խուսափելով նրա հետ հնարավոր բոլոր հանդիպումներից՝ մարդը երբեմն խիզախում է մատչել նրան, դուրս գալ մահվանն ընդառաջ՝ հաշտության ձեռք մեկնելով կամ ընդվզելով նրա դեմ, պայծառամտորեն ծաղրելով «հավիտենական զրույց» մահվան կերպարի հետ:

Մահը որակական երևույթ է: Մահվան վերապրումը նորացնում է կյանքը: Ամեն ինչի մահացման և կրկին ծաղկելու գործընթացը դառնում է կեցության հավերժական շրջապտույտի խորհրդանիշ՝ քրիստոնեական խորհրդով:

Դեռևս հայ հին գրականության և մասնավորապես շարականգրության մեջ (5-րդ դար) կյանքի և մահվան հարցերը միախառնվում էին ճշմարիտ կեցության, մեղսազուրկ կյանքի, Աստծու կողմից ընդունելի լինելու տրամադրություններին: Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը իրենց սքանչելի շարականներում փառաբանության, բարեբանության աստվածառաք խոսքերի հետ Աստծուն խնդրում էին նաև ապրեցնել իրենց: «Կեցո՛ ըզմեզ»[1],- ականկալությամբ դիմում էր Տիրոջը Ս. Պարթևը, «Ապրեցո՛ եւ ողորմեա՛»[2],- խոնարհաբար աղերսում էր Մ. Մաշտոցը:

Մահվան ներթաքույց սպասումն ու քրիստոնեական նախապատրաստությունը իրենց գեղարվեստական արտահայտությունը գտան գրեթե բոլոր շարականգիրների մոտ, սակայն ավելի ուշ՝ 10-րդ դարում, հատկապես Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» պոեմի մեջ նկատում ենք կենսահորդ տրամադրությունների ներհոսք, ավելին, տաղերգուն չի ցնծում մահվան առաջիկա կանխավայելքից: Իրեն համարելով «մահու մեղապարտ»՝ քննում է կյանքի ունայնությունն ու անցողիկությունը, շեշտում մարդկային այն մեծագույն ողբերգությունը, որը նաև մահվան անխուսափելիության գիտակցության ծնունդն է: Գ. Նարեկացին լեցուն է կյանքի նկատմամբ սիրով: Նրա պոեմում բազմիցս կրկնվում են «ապրեցո՛ւ», «կենսագործի՛ր», «կենդանական շո՛ւնչ ընծայիր», «հանի՛ր մահվան խոր անդունդից» աղերսանք-պահանջները՝ ապրելու անկասելի մղումով: Պարույր Սևակի դիպուկ մակդիրավորմամբ՝ «մարդախույզ», «մարդագիր», «մարդերգու» Գ. Նարեկացին քիչ է ասել՝ սիրում է մարդուն: Նա մահը՝ որպես մարդուն բաժին հասած անխուսափելի ողբերգություն, թանձրագույն վերարտադրում է սեփական մահվան, «մեռած դրության», «թշվառ կիսամեռության» գեղարվեստական նկարագրությունների մեջ՝ ակամա հիշեցնելով իրենից շատ-շատ հետո՝ 20-րդ դարում Առաջին աշխարհամարտին հաջորդած տարիներին զարգացող սյուրռեալիստական գրականության ներկայացուցիչներից մեկի՝ ֆրանսիացի Բորիս Վիանի՝ մահվան վերաբերյալ էքսցենտրիկ ընկալումները: Բ. Վիանը ևս սեփական մահվան վերարտադրությամբ՝ «Ես կմեռնեմ ողնաշարի քաղցկեղից…» էպոտաժային ձևակերպմամբ, վկայում է կյանքի քաոսայնությունը, ուր ողջ մնալ հնարավոր չէ, ուստի այլ բան չի մնում, քան վայելել հասանելիք կյանքը:

Մահը երաշխավորված է բոլորին, իսկ կյանքը երաշխավորված չէ ոչ ոքի: Սա գիտակցում է նաև միջնադարյան տաղերգուն՝ շարունակելով «պնդել» իր աղերսանքները՝ պաշտպանվելու, նորոգվելու, բժշկվելու վերստին հույսով տոգորված: Ապրելու կենսական բանաձևը մարդու գերագույն նպատակն է: Կյանքի և մահվան չստացվող երկխոսությունը թուլանում է վերածննդյան հումանիզմի հարթակի վրա, և Նարեկա վանականը մարդու ապրելու անկասելի մղումը իրացնում է միանգամայն բնական ձգտումով՝ հետևյալ պայման-խնդրանքով՝

Եվ եթե հասնեմ խորին ծերության քո
առաջնորդությամբ՝ մահվան արժանիս՝
Մի՛ լքիր ինձ տկարությանս մեջ և մի՛
անարգիր մազերս սպիտակ,
Մի՛ կործանիր կործանվածին և կքյալին մի՛
իջեցնի,

[1] Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, Եր., 1979, էջ 11:
[2] Նույնը, էջ 14:

Մի՛ ցած բեր խոնարհվածին և առկայծյալին
հողմի շնչին մի՛ մատնիր...[3]

Աստծուն հասցեագրված կենսագործվելու պահանջը, նրանից սպասվող կամենալու և փրկելու քերթողի ակնարկի երանգները գնալով թանձրանում են, և արդեն հետագա դարերում՝ հատկապես Ֆրիկի (13-րդ դար) մոտ, մահվան վրա ասված ողբը աղաչախառն ուղղվում է աստծուն՝ ունկնդիր դարձնելու իր՝ մեղավորի հետևյալ խոսքերին.

Որ երբ մահն ինձ հանդիպի,
Նա օրհնեալ հողըն ծածկէ զիս:[4]

Մահվան սպասումը քերթողի մտքի մեջ է, և «էգուց մեռնելու» պայմանը ենթադրում է «ճար անելու» անհրաժեշտություն: Մահը նետվում է առաջ, «անողորմ գրողը» ոչ ոքի չի խնայում, և Ֆրիկի հոգեշահ խոսքերը խրատալից հնչելով գրեթե յուրաքանչյուր բանքում՝ փորձում են հավասարակշռել հոգու և մարմնի՝ անընդմեջ վերուվարվող նժարները:

Ֆրիկը Գ. Նարեկացու չափ սիրում է կյանքը՝ միաժամանակ գիտակցելով այն անբեկանելի ճշմարտությունը, թե «զինչ ծնեալ կայ՝ մեռանի, մահն ամենին հաւասար կու գայ»:[5] Ընդհանրապես կյանքի և մահվան հարցերում Ֆրիկի տրամադրությունը կարելի է բնութագրել այսպես. քերթողն անուղղելի կենսասեր է, բայց հաջորդիվ ներխուժում է «յայս կեանըս շահ չի կայ» կրոնական խոստովանանքը, և աղոթքի, անարժան լինելու վախի թրթիռները վերածվում են աստվածաբանական, դավանաբանական խրատասացության:

Կյանքի և մահվան թեմայի խաղարկումը միջնադարյան գրականության մեջ երբեմն ենթարկվում է ռացիոնալ մեկնության: Միջնադարյան հոգևորական, բանաստեղծ Հովհաննես Պլուզ Վարդապետը (13-րդ դար) բանական հիմնավորմամբ է բացատրում մահը՝ որպես մարմնի, նյութի քայքայման կենսաբանական գործառույթ: «Մարդիկ զինչ զարնան ծաղիկ փթթին ու այլվի չորանան»[6],- կուռ տրամաբանությամբ գրում է Հովհաննես Պլուզն իր կաֆաներից մեկում: Վարդապետը լավ գիտի, թե որտեղ է կյանքի սկիզբն ու «հատը», մնում է՝ «ճամփորդը» գիտենա, թե որն է իր կյանքի նպատակն ու իմաստը: Հովհաննես Պլուզը մարդու կյանքում կարևորում է ապրելու պատասխանատվությունը.

Եկել ես օտար յերկիր, մէկ ցուցու, թէ ինչու՞
կու կենաս.
Մեռնիս դու ' ւ ի հող մըտնիս, մէկ ասա, թէ
ու՞ր կու գնաս:[7]

Կյանքի ու մահվան իմացական դարձվածքի խորհրդի մեջ միջնադարյան մտածողն ու քերթողը անընդմեջ տարուբերվում է. Գերազանցությունը որի՞ն տալ, ինչպե՞ս ձևակերպել ապրելու կենսական բանաձևը. տուրք տալ կյանքի՞ն, ապրելու գայթակղությա՞նը, թե՞ ծնված օրից պատրաստվել մահին՝ կամաց-կամաց հանգրվանելով սեփական մարմին-նավը «մահվան նավահանգստում»:

Սակայն միջնադարյան տաղերգության ներքին բովանդակության մեջ կրոնական պատկեր - խորհրդանիշներին զուգահեռ ներթափանցող աշխարհիկ զգացումները, գեղեցիկի փառաբանման քնարական դրսևորումներն իրենց հետ բերեցին մահվան հետ «հաշվեհարդարի» նստելու հանդգնություն:

Է մահ, քանի ըզքեզ յիշեմ
Կու դողամ ու սարսափիմ ես.
Չըկայ քան ըզքեզ լեղի,
Ի՝ ամենայն լեղոյ լեղի ես[8],-

գրում է միջնադարյան տաղերգուներից մեկը՝ Հովհաննես Թլկուրանցին (14-15-րդ դարեր)՝ կարծեք անզոր գտնելով իրեն՝ բարեշրջելու մահվան անվարան ընթացքը:

Է՛ մահ, թէ դու քէն ունիս,
Ի՝ Ադամայ որդին կու հանես.
Կամ մեղաց հարուած ես դու
Ի մահու պըտղէն ծընեալ ես[9]:

Երբեմն մահվան թեմայի մշտակա ներկայությունը ձեռք է բերում նոր ընդհանրություններ, և միջնադարյան գրականության մեջ նորնոր արծածվող պանդխտության թեման վերաձևվում է փիլիսոփայական խոր ընկալչությամբ: Սոցիալական աղետաբեր երևույթը ձեռք է բերում կյանքի անցողիկության ենթիմաստ, այս աշխարհում մահկանացուի՝ պանդուխտ լինելու սթափ գնահատություն.

---

[3] Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության, Եր., 1960, էջ 373:
[4] Ֆրիկ, Բանաստեղծություններ, Եր., 1941, էջ 33:
[5] Նույնը, էջ 46:
[6] Հայոց հին և միջնադարյան բանաստեղծության քրեստոմատիա, էջ 229:
[7] Նույնը, էջ 225:
[8] Նույնը, էջ 327:
[9] Նույնը, էջ 328:

Ամէնքս եմք ղարիպ, եղբա՛րք, հայրենի մարդ իսկի չունի,
Հաւասար գնալու եմք մենք, զի այն կեանքն է մեզ հայրենի[10],-

գրում է միջնադարյան տաղերգու Մկրտիչ Նաղաշը (14-15-րդ դարեր) «Տաղ վասն ղարիպի ասացել» քերթվածում՝ ակամա հիշեցնելով Մեսրոպ Մաշտոցի գողտրիկ շարականներից մեկը, ուր մեղքերից ու հանցանքներից երկյուղած շարականագիրը աղաչում է Տիրոջը՝ սրբագործելու, թողություն տալու իրեն՝ «անցավոր աշխարհի պանդուխտին» (Արտասուաց իմոց մի լռեր, Տէ՛ր,/ Զի պանդուխտ եմ ես յանցաւոր երկրի)[11]:

Միջնադարի մարդու անճարակությունը, մահվան արթնության և նրանից չզատվող վախի նյութը շարունակում են մնալ գեղարվեստական մտածողության մշտարծարծ խնդիրներից՝ դառնալով փիլիսոփայական կողմնորոշում: Ուշ միջնադարում հայ տաղերգուները շարունակում էին վարդի և բլբուլի այլաբանական պատկերներին զուգահեռ խոսել մահվան անխուսափելիության, մարդուն «դարանակալած» Գաբրիելի անակնկալ այցելության մասին:

Գրիգորիս Աղթամարցին (15-16-րդ դարեր) զարնան, ուրախության արբշիռ երգերի մեջ վարդի և սոխակի սիրավառ հանդիպումին զուգահեռ հանձնառու է լինում նկարագրելու մահվան հրեշտակի գալուստը:

Ահա օր մահուան կուգայ,
Գիտ բըժիշկ եւ ճար քեզ արա,
Յէգուց հրաւիրակըն գայ
Եւ ասէ՝ Աստի զընա[12]:

Ապրելու խորհուրդը պայմանավորվում է հոգևոր ներաճուն ազդակներով. ապրել, նշանակում է՝ կառուցել, տնկել, շենացնել, որոնել ու գտնել: Միջնադարյան տաղերգուի համար նորաշեն տունն ու այգին խորհրդանշում են կյանքը, ապրելու այլաբանությունը: Կյանքի համայնապատկերի նկարագրական և այդ նույն լայնալիր պատկերի գեղարվեստական հնարանքը տպավորում է դրվագային վիճակների հաջորդականությամբ:

Քար եմ բերեր սարերոյս
Փուշ եմ կըրեր ձորերոյս,
Պատ եմ բոլորեր այգոյս,
Ջուր եմ բերեր լեռներոյս,
Աղբիւր եմ շիներ այգոյս,
Ծաղիկ եմ տնկեր այգոյս,
Դեռ չեմ զհոտն առեր ծաղկոյս
Կ՚ասեն, թ՚Արեկ, ել այգոյս.-
Այս իմ նորատունկ այգոյս:[13]

Ամեն առավոտ և լույս այգի եկող մահվան հրեշտակին չհանձնվող մարդը ապրելու խորհուրդն իմաստավորում է արարումով, ստեղծումով, կառուցելու և շենացնելու համառությամբ: Սակայն մահվան անխուսափելիությունը անհաղթահարելի է, և ուժահատ, զղջահար բանաստեղծը ձեռնատուր է լինում.

Առին զհոգիս ի մարմնոյս,
Հանեցին զիս յիմ այգոյս,
Մահ է, որ ելնեմ այգոյս,
Այս իմ նորաշէն այգոյս:[14]

Իմանալին ու անիմանալին միախառնած տաղերգուն հասկանում է, որ կյանքի և մահվան կազմակերպ ընթացքը շարունակվելու է նաև իր մահից հետո: Ու երբ միջնադարյան մեկ այլ տաղասաց՝ Հովասափ Սեբաստացին ևս 16-րդ դարում իմաստասիրական որոնումներով կհասնի մահվան մատույցներին, կտեսնենք, որ կյանքի և մահվան ընկալչության մեջ շարունակվում են արթմնի, սթափ, զուսպ հոգեխոսությունները՝ «…Մէկըն երթայ, մէկըն գայ, / Իր բանըն պաթալ չի մնայ»: Այսպես է «աշխարհիս սահմանն»՝ ով ծնվում է, դեպի մահն է գնում, ուստի «մահը մտաց մի՛ հաներ»,- շտապում է հորդորել տաղերգուն՝ միաժամանակ խորհուրդ տալով գիտակցել, թե « Ուստ եկին և ու՞ր կու գնան»:

Ահա սա է հաճախադեպ, ոչ անականկալ իրատես դիտարկումը, որը հանդիպում ենք նաև միջնադարյան տաղերգության վերջին ներկայացուցչի՝ Սայաթ-Նովայի (17-րդ դար) խորհուրդ-խրատների մեջ: «Աշխարհըս միզ մընալու չէ՝ իմաստնասիրաց խաբարով»- մտահոգ խորհրդածությունը դառնում է ճշմարիտ կեցության ծանրության կենտրոնը, «փանջարա» դարձած աշխարհին «մտիկ տվող» ու անցնող «մարթու» ընկալումների սահմանագիծը: Սակայն ազնվորեն նկատենք, որ մահվան գեղարվեստական փնտրտուք-

[10] Նույնը, էջ 338:
[11] Հայ գրականության քրեստոմատիա, Եր., 1992, էջ19:
[12] Նույնը, էջ 426:
[13] Նույնը, էջ 428:
[14] Նույն տեղում:

ները նախորդներից հետո լավագույնս արտացոլվեցին արևմտահայ և սփյուռքահայ գրական անդաստաններում: Նոր գրականության արևմտահայ թևի ուղեծրում ազգային միջնադարյան ավանդույթների և կլասիցիզմից հետո համաշխարհային գրականության, հատկապես ֆրանսիական ռոմանտիկական ավազանի միախառնության հետաքրքիր վերակազմումն ենք գտնում Պետրոս Դուրյանի (19-րդ դար) քնարերգության մեջ:

Նարեկացիական պոռթկումների լեզվով, հոգեբանական հակադրական կառուցիկ պատկերներով Պ. Դուրյանը, «անտեսելով ցաւի առարկայացումը, նետւում է ասպարէզ՝ հաստատելու կեանքի բերկրանքը, ապրելու թովչանքն ու իրաւունքը»[15],- գրում է գրականագետ Սուրեն Դանիելյանն ու հայտարարում. «Մահուան խորհուրդը եւ մարդու իմացական բեկումը այդ խորհրդին, յանուն մաքառումի ու կամքի տիրակալութեան, փիլիսոփայական խտացումի չերկրորդուած վկայութիւն է, գերերկրային կեցութիւն բանաստեղծական կալուածքում, որը դառնում է ստեղծագործական նոր համամարդկային նիւթի առաջին նուաճումը հայ գրականութեան մէջ»[16]: Մենք կավելացնենք, որ այդ նվաճումի անմիջական ազդեցությունները հետագայում տարածվեցին ու վերակառուցվեցին Միսաք Մեծարենցի, Վահան Թեքեյանի ստեղծագործություններում՝ յուրովի ու ինքնատիպ դրսևորումներով:

Պ. Դուրյանի կողմից աշխարհի ողբերգական ընկալումը, հեղինակի հետ նույնացող քնարական հերոսի ներանձնական տրտմությունը ծնում են մշտնջենական հարցադրումներ, որոնք մտատանջել են նաև միջնադարյան հայ տաղերգուներին՝ սկսած Գրիգոր Նարեկացուց: Մարտահրավերի պես Աստծուն նետված «ինչու»-ները դառնում են «կյանքի ու մահվան» դասական նյութի նորոգված, առավել հանդուգն փորձեր: Մարդու, կյանքի, աշխարհի նկատմամբ բանաստեղծի անսահման սերը դրսևորվում է զարնան, փթթող վարդի մշտարծարծ պատկերներով՝ միջնադարյան տաղերգուների հանգույն, հայտնի այլաբանության նորովի կենսավորմամբ: Այստեղ կատարենք մի մասնավորում. 1860-ական թվականների վերջին և 1870 թվականին գրված Պ. Դուրյանի քերթվածներում մահվան ծանրաբեռ, փիլիսոփայական ներկայությունը գրեթե բացառված է, սակայն աստիճանաբար մահվան և տրտմության տարրերը գերճնշում են լուսավոր ու կենսախինդ տրամադրություններին՝ առաջ բերելով պայքար ոչ թե սոսկ ապրելու, սեփական կյանքը շարունակելու արդար իրավունքը խլելու դեմ, այլ գեղեցիկի, մարդու, սիրո, հայրենիքի վերամբարձ, բարձրագույն խորհուրդների առաջ ունենալիք պարտավորությունների կիսավարտության համար:

Այդ ներանձնական բարձրագույն խորհուրդներից մեկը՝ հայրենիքին, ժողովրդին ծառայության պատրաստակամությունը, թերևս ամենամեծ մղումն է պայքարի ելած բանաստեղծի համար:

Հեք մարդկութեան մէկ ոստը զոս՝
Հայրենիք մը ունիմ թշուառ,
Չ՚օգնած անոր՝ մեռնիլ աննշան
Ո՜հ, ա՜յս է սոսկ ցա՜ւ ինձ համար:[17]

Մտահոգությունների այս երակը զնում և մերձենում է Պ. Դուրյանի նախորդի՝ հայ նոր գրականության հիմնադիր Խաչատուր Աբովյանի խորհրդածությունների նյութին: «Ազգասեր մարդու և իր մեռնելու վախտի» ճշգրտումը իր կողքին է պահում կյանքի և մահվան հակադրաբևեռ հարցը՝ փիլիսոփայական մտահղացքով՝ միաժամանակ արտահայտելով աշխարհիկ կյանքից անբաժան հայրենիքի առավելական, գերակա դերի նկատմամբ գրողի շահագրգռությունները:

Էս ճամփեն մեկ օր պետք է մենք գնանք,
Մահով էն կենքին հասնինք, դինջանանք:
Բայց մեռնել ես որ շուտ ուզում չէի,
Պետք զամ ազգիս՝ ախ՝ ասում էի:
…Իմ էն քաշած շունչն էլ մահ էր աչքիս,
Երբ չէի կարում պետքը գալ ազգիս:[18]

Երկու գրողների կողմից հայրենիքին նախընտրություն տալը ինքնաբուխ է, ավելին, մահվան ներկայությունը ընդունելի է նրանց համար, որովհետև հայրենիքի բարձրագույն իմաստը վեր է անհատի հոգեցունց, ճշմար-

[15] Սուրէն Դանիէլեան, Արեւմտահայ գրականութիւն. Տիտանի՞կ թէ՞ շարունակականութիւն, Եր., 2014, էջ28:
[16] Նոյն տեղում:

[17] Պետրոս Դուրյան, Երկեր, Եր., 1981, էջ 63:
[18] Խաչատուր Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու 8 հատորով, Առաջին հատոր, Եր., 1948, էջ 197:

տագոչ աղաղակներից, անգամ եթե այն հնչում է արդար իրավունքով:

Մարդը՝ տառապանքների սկիզբը, ծնված օրից բռնում է պարտության ճանապարհը: Պոռթկումները, Ֆրիկի պես ընդվզումը, բարձրամռունչ անեծքներն ու նախատինքը՝ ուղղված «ոխերիմ Աստծուն», ավելի են սրում բանաստեղծի մոլեգին սերը կյանքի նկատմամբ և վերահաստատում աստվածահայտնության անիմանալի սահմանը: «Տրտունջք»-ի մեջ մահվան հետ նախնական հաշտեցումը վերջնական է դառնում «Իմ ցավը» քերթվածում՝ մեկ և սրբազնագույն ուխտի՝ հայրենիքին օգնելու հանձնառությամբ: Այնուամենայնիվ, «Տրտունջք»-ում կառուցողական յուրահատկությունը՝ մի կողմից՝ ապրելու տենչը, մյուս կողմից՝ անհաշտությունը ճակատագրի հետ, ընդգծում են բանաստեղծի հանճարեղությունը՝ Պարույր Սևակի հետևյալ բնորոշմամբ. «Նրա քնարերգությունը հեծկլտոց լինելով, միաժամանակ մի Օվսաննա է, մահվան տվայտանք և կյանքի փառաբանում, կսկծի մրրկում և սիրո հափրանք»[19]:

Մահվան հարատև իմացականությունը բանաստեղծին պահում է հեղհեղուկ վիճակների մեջ՝ մերթ պոռթկուն-տարերային, մերթ հանդարտ-հաշտվողական, լամարթինյան «հովտի» անընդմեջ փնտրտուքով՝ որպես ինքնափախուստի հանգրվան: Երկու բանաստեղծների մեկուսացած հոգիների զուգահեռը արտացոլվում է Պ. Դուրյանի մոտ՝ լճակի, իսկ Լամարթինի մոտ՝ հովտի պատկերային համակարգերի մեջ: Երկուսն էլ «շիրմատան նեղ արահետին մեն-մենակ են» և երկուսի համար էլ անասելի հուսահատությունը խեղդվում է բնության գրկի մեջ:

Սակայն այստեղ բնությունն է, պատկե՛ր խոսուն,
Նետվի՛ր գիրկը, սիրում է քեզ, կանչում անվերջ[20],-

հորդորում է Ալֆոնս դը Լամարթինը:

Մելամաղձոտ լճակդ իմ
Քեզ հետ ըլլանք մտեհմ,-

առաջարկում է Պ. Դուրյանը, և երկուսն էլ դառնում են հրաժեշտ տվող, մեռնող այն քնարական հերոսը, որը լավ գիտի հավերժության զենը: Կյանք փնտրող և մահ գտնող արևմտահայ բանաստեղծը գծում է երկու «մարդերի» սահմանագիծ՝ սովորական մահկանացու և բանաստեղծ, որոնցից վերջինը երբեք չի հուսահատվում «…Բնա՛ւ, բանաստեղծ մը մահուանէ չը սոսկար. այն ատէն իրաւունք ունէի ցաւելու, երբ ամէնքն անմահ ըլլային, եւ ես միայն մահկանացու:

Այսպէս համոզուէ՛»[21] ,- գրում է Պ. Դուրյանն իր մտերիմ ընկեր Պ.Հ. Ճանֆեսճյանին: Ահա այս գիտակցությամբ է Դուրյան-բանաստեղծը գնում մահվանն ընդառաջ՝ հավերժության բացարձակ իմացությունն ապացուցելու համար:

Իմացության այս ճանապարհը ընթացք բերեց բանաստեղծական այնպիսի մեծությունների համար, ինչպիսիք էին Միսաք Մեծարենցը, Վահան Թեքեյանը, Մատթեոս Զարիֆյանը: Նրանցից հայ գրականության «հիվանդ ու հանճարեղ պատանին» (բնութագրումը Եղիշե Չարենցինն է.- Վ. Դ.)՝ իր նախորդի՝ Պ. Դուրյանի չափ թույլ ու տկար, պայքարում էր կյանքի դանդաղ ու սպանիչ ընթացքի դեմ ոչ թե աստծուն ձեռնոց նետելով, աստվածամարտությամբ կամ աստծուն հորջորջանքներ ուղղելով, այլ խոր բնապաշտական շեշտերով, հազար թելերով բնությանը կապկպվելով, ընդգծելով, որ մահվան և տրտմության գաղափարները չեն կարող գերազանցել լուսավոր հատկանիշներին, ինչը հրնթացս ցույց է տալիս նաև Մ. Մեծարենցի՝ դասական ռոմանտիզմից հեռու լինելու և սիմվոլիստական հանդերձանքով իր արվեստը ներկայացնելու գեղարվեստական սկզբունքը:

Կյանքի հակոտնյա մահվան ուրվականը, մահվան սարսուռի ուղղագիծ նկարագրությունները հեռու էին Մ. Մեծարենցի քնարերգության պատկերային իմաստների հարաշարժ ընթացքից: Բնապատկերների մատուցումը և բնության դրվագների առարկայացումը միտված էին սրելու բանաստեղծի անսահման կենսասիրութունը ոչ թե որպես հիվանդության նախապայման, այլ որպես գեղագիտական հարցադրում: Դուրյանական «Աստվածը» Մ. Մեծարենցի մոտ «ոսկեծայր շառափներով բարի արևն» է, որի բոցեղեն ցանցերի մեջ, որպես ապրելու, չմահանալու

[19] Պարույր Սևակ, Երկերի ժողովածու 6 հատորով, հ. 6, Եր., 1974, էջ 161:

[20] Ֆրանսիական պոեզիա, Եր., 1984, էջ 191:

[21] Պետրոս Դուրյան, Երկեր, էջ 48:

միակ առհավատչյա, անձնատուր «պլլվել» է ցանկանում բանաստեղծը: Բնության, արևի ամենափրկության հույսը հնչեցնում է աղերսանք-աղոթքը և բացառում ըմբոստության երգը: «Տրտունջք»-ի չափ ծրագրային «Արևին» քերթվածում հասունանում է ապրելու կրքի էներգիան, կուտակվում և պարպվում բնության «դաբիրների» վրա՝ նորոգելու, վերստեղծելու սրբազան խոստմամբ:

Պ. Դուրյանը «Տրտունջք»-ում մինչև վերջ խուսափում է արևին ապավինելուց: Եթե Մ. Մեծարենցը թախանձում է արևին՝ խանդաբորբ ու կաթոգին փարվելու իր հոգուն, ապա Պ. Դուրյանը աղերսում է աստղերին՝ իր հոգու մեջ ընկնելու, կայծ ու կրակ տալու: Մտքի և պատկերի ենթակայական ընկալումը հաշվի առնելով՝ գրականագետ Ս. Դանիելյանը Պ. Դուրյանի կողմից արևից խուսանավելը բացատրում է առարկայական հետևյալ արտահայտությամբ.

Գարունն ոչ մէկ վարդ ճակտիս դալկահար,
Ոչ երկնի շողերն ժպիտ մ՛ինձ չեն տար:[22]

Այսինքն՝ Պ. Դուրյանն արևից ակնկալիքներ չունի ի տարբերություն իր հաջորդ գրչեղբոր, որը թևատարած սպասում է կրակի, ջերմության, լույսի կայծերի:

Եթե Պ. Դուրյանի մոտ ցասումն ու ընդվզումը պայմանավորված են ապրելու մեջ կրած պարտությամբ, ապա Մ. Մեծարենցը ո՛չ ընդվզում է, ո՛չ էլ խոնարհվում: Նրա մոտ չկա «պարտված հերոս», այլ մահվան գավթում կանգնած ու կյանքի, մարդու հավերժական փիլիսոփայության բևեռները շոշափող «անփորձ պատանի»:

Աիաբեկիչ կնճիռներուն մէջ կեանքին
Լալայառաչ, սուր հծծիւններ ինձ ըսին.
«Ամէն յոյսեր մեծ պարապին կը հանգին,
Ունայնութիւն մը կը պրկէ կեանքը սին:
Ամէն ծաղիկ խամրում մ՛ունի իրեն մօտ,
Ու ամէն կեանք՝ մութ ստուեր մը իր ետին.
Ծաղիկներու բուրումին պէս խնկահոտ
Ամէն յոյսեր դեռ չըծլած կ՛անհետին»[23]:

Ճշմարտության իմացության ճանապարհը Մ. Մեծարենցի մոտ ձեռք է բերում անանձնական ուրախությամբ ինքնաբաշխվելու, ինքնատրվելու, որպես սիրո վաղվա հունդ «մարդերի» մեջ սերմնավորվելու քրիստոնեական խորհուրդ: Նա գրում է «Արդի մարդու Հայր մերը», որը ոչ թե հնչում է միջնադարցու աղոթքի պես՝ «լուսոյն օթաղն», «աստծու սենյակը» մտնելու ապահով հույսով, այլ դառնում է սիմվոլիստական հայեցողությամբ՝ ապրելու յուրատեսակ նախասիրություն, կեցության մեծարենցյան ձև:

Սիմվոլիստական պատկերների համակարգում կյանքի և մահվան գեղարվեստական խորհրդածությունները կարևոր տեղ են գրավում: Ժխտելով կամ գրկաբաց ընդունելով մահը՝ սիմվոլիստ բանաստեղծներն արտահայտում էին ապրած օրերի խորհուրդը, իսկ ապրելիքի մեջ՝ ներքին խաղաղության, ներդաշնության ձգտումը:

Սփյուռքահայ գրականության «խորախոհ բանաստեղծը» (բնութագրումը Վազգեն Շուշանյանինն է.- Վ. Դ.)՝ Վահան Թեքեյանը, անակնկալ հոգեհարազատություն զգալով իրեն ֆրանսիական սիմվոլիստական երգի ավազանում, անթաքույց հետաքրքրություն է ցուցաբերում մահվան թեմայի հանդեպ:

1944թ. փետրվարի 26-ին Կահիրեից իր մտերիմ բարեկամ Ֆիմի Օհաննեսյանին ուղարկած նամակում խոստովանում է. «…Մահէն չվախնալով յանդերձ, պիտի ուզէի, եթէ կարելի ըլլար, վերապրիլ կեանքս նոյն կամ քիչ մը տարբեր…[24]»: Սա մահվանը դեմառդեմ դուրս գալու հանդգնություն էր, ավելի շուտ՝ անմահացումի հետաքրքիր պահանջ, վերստին ապրելու փափագ՝ նոր որակով ու բովանդակությամբ, որի գեղարվեստական հետագիծը մենք տեսնում ենք իր աշակերտի՝ սփյուռքահայ էպիկ բանաստեղծ Նիկողոս Սարաֆյանի պոեզիայում՝ հետևյալ ձևակերպմամբ՝ «մեռնիլ առանց մահի»՝ նորանալու, թարմանալու խորհրդանշումով:

«Ես՝ պարտուած մը կեանքէն»- Վ. Թեքեյանի կողմից ավելի վաղ ձևակերպված նշանաբանը հետագայում հաղթանակներ է փնտրում սիրո ոստայնի մեջ:

Տէ՛ր, ի վերջո, երբ նվաղի լոյսը կեանքիս
Վերջին շնորհ պիտի ուզեմ...[25]

Խորհրդավոր պատկերը՝ այն օրերից հիշատակված «անուղղա» աչքերով և նույն ժպի-

---

[22] Պետրոս Դուրյան, Երկեր, էջ 53:
[23] Միսաք Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 35:
[24] Թէքէեան Վահան, Նամականի, Լոս Անջելես, 1983, էջ 259:
[25] Վահան Թեքեյան, Հատընտիր, Եր., 1970, էջ 33:

տով, թող ջերմացնի իր ամառվա իրիկունը: Սա՛ է բանաստեղծի ցանկությունը: Ցավոք, ամառվա հրայրքին կարոտ բանաստեղծը կյանքի աշունին ընդառաջ է գնում սիրո անհագ ծարավով: «Ամառն անցա՜վ» - զղջումը ցավ է պատճառում բանաստեղծին ճիշտ այնպես, ինչպես իրեն այնքան մոտ ու սրտակից ֆրանսիացուն՝ Շառլ Բոդլերին.

Ամառ էր երեկ. հիմայ աշուն է արդէն.
Խորհրդաւոր այս աղմուկն ալ ազդ մը չէ՞
մեկնելու[26],-

կարդում ենք թեքեյանական անզուգական թարգմանությամբ:

Անհանգիստ, «սպասման հիվանդ» է նաև Էմիլ Վերհառնը: «Նոյեմբեր է իմ հոգում»[27],- մի տեսակ ինքնահաշտեցմամբ գրում է բելգիացի բանաստեղծը՝ ետդարձի ճամփան կորցրած, ինչին նույնքան իմաստնացած արձագանքում է սփյուռքահայ բանաստեղծը.

Կարծես վերջին աշնանս իրիկունն ըլլար,
Ուր տենչերով ալ խաղաղուած հաւիտեան՝
Սպասէի մահուան, վայրկեան առ վայրկեան:[28]

Մահը սրբացնելու և փիլիսոփայական կշռի բերելու սիմվոլիստական առանձնահատկությունները դրսևորվեցին Վ. Թեքեյանի քերթվածներում, մասնավորապես «Մահուան տաղեր», «Խաւարի տաղեր» շարքերում:

Սիմվոլիստական գրականության զինանոցին հարազատ, «հավերժական հերոսուհի» մահը շարունակում է մնալ որպես գլխավոր նյութ՝ ապահովելով գեղարվեստական մտածողության ինքնատիպ, չերկրորդված մակարդակ: Ստեֆան Մալարմեն, օրինակ, մահը համարում էր բալասան խոնջացած բանաստեղծի համար, իսկ Շ. Բոդլերը մի ողջ «Մահ» խորագրով բանաստեղծական ենթաշարքում քննելով կյանքի և մահվան հարցերը, մահվան երազով տարված՝ այն ընկալում է որպես խորհրդավոր, առեղծվածային հաճույք, անդորրություն՝ կյանքի տանջանքներից հետո:

Մահն է, որ մեզ կը սփոփէ, աւա՜ղ, եւ մեզ կ՚
ապրեցնէ,
Ան նպատակն է կեանքին ու միմիակ Յոյսն է
ան,
Որ դիւթաջուր մը ինչպէս կ՚ոգեւորէ, կ՚
արբեցնէ
Եւ սիրտ կուտայ քալելու մինչեւ իրիկունը
օրուան:[29]

Շ. Բոդլերը «Արվեստագետի մահը» քերթվածում մահը դիտում է իբրև արշալույս, իբրև Արև, որին պատրաստ է սլանալու Արվեստագետի հոգին:

Մի հույս ունեն լոկ…
Որ մահն ինչպես նոր արև իր լույսերը կ՚հեղի:[30]

Ահա այս քնարական մտորումները ընտանի ու հարազատ են դառնում նաև սփյուռքահայ բանաստեղծի համար: Կրելով բոդլերյան քերթության ուղիղ ներգործությունը՝ Վ. Թեքեյանը գրում է «Մահ եւ արեւ» քերթվածը:

Մահն եղած է ինձ այնչափ ընտանի,
Որչափ աչքերուս արեւը վաղուան…
Մահ, արեւ, այնչափ խառնուած միմեանց
Կ՚երեւին ինծի, որ մերթ կը խորհիմ՝
Միգուցէ արեւն ըլլայ մահ մ՚անանց
Եւ մահն ալ՝ արեւ մ՚անդրր, քան շիրիմ…[31]

Վ. Թեքեյանի նախընտրությունը երկու մահերի միջև է. կա՛մ հաճույքի գրկում, սիրո ոստայնում ընդունած մահաիրավեր, կա՛մ կռվի դաշտում, վրիժաբորբ ու հրաչվի մարտակովում սպասող մահ: Բանաստեղծի ցանկությունն անակնկալ է.

…Այս երկու մահերուն կը փափագիմ փոխն ի
փոխ,
Անոնք ինծի կը ժպտին եւ կը ժպտիմ ես
անոնց,
Անոնց մէջտեղ իմ հոգիս կարծես կեցած է
շատոնց…[32]

Բանաստեղծի կյանքը եղել է պարտեզ, որը ոտնակոխ են արել «դիպվածն» ու «ճակատագիրը», և հիմա, երբ արվեստագետը մահվան տեսիլի ուղղորդմամբ քայլերը դարձնում է դեպի մահվան հարթակը, ցանկությունը դառնում է ելքի սեփական նախընտրությունը.

Գոնէ թոյլ տուր, աստուա՜ծ իմ, որ ելքն անոր
ես ընտրեմ:[33]

Մահվան անհամբեր, սրտաբաց սպասումները սիմվոլիստների մոտ արտառոց չէին: Շոպենհաուերյան հանդարտությամբ է հնչում Վ. Թեքեյանի խոստովանությունը. «...Ես մահ-

[26] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 279:
[27] Эмил Верхарн, Стихи, 1961, Ленинград, стр. 44:
[28] Վահան Թեքեյան, Հատընտիր, Եր., 1970, էջ 18:

[29] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 320:
[30] Նույնը, էջ 136:
[31] Վահան Թէքէեան, Գաղտնի պարտէզ, Պէյրութ-Երեւան, 2003, էջ 67:
[32] Նույնը:
[33] Նույնը:

ուան կը նայիմ հիմայ անհոզ, անտարբեր»[34], թեև ավելի ջերմ կարող են թվալ ռուս սիմվոլիստ Ֆյոդոր Սոլոգուբի խոսքերն՝ ուղղված իր «հեռու, խորհրդավոր ընկերոջը»՝ մահին: Ֆ. Սոլոգուբի չափ «մահասեր» է նաև Վալերի Բրյուսովը, որը հնչյակներից մեկում բացականչում է.

Смерт! Обморок не выразимо-сладкий.[35]

Եվ վերջապես պակաս հետաքրքիր չէ մահվան փիլիսոփայության բլոկյան ընկալումը.

Все чаще вижу смерть – и улыбаюсь
Улыбкой рассудительноы,[36]

որտեղ մահվան խորհրդավոր ժպիտը ազդարարում է այս կյանքի ավարտը ու նոր իմաստնության սկիզբը՝ հիշեցնելով Շ. Բոդլերի «Օրվա վերջ»-ում մրմնջացող քնարական հերոսի խոսքերը.

Վերջապես: Վերջ այս կյանքին,
Մահվան տենչով աղեցուն
Իմ սիրտը և իմ հոգին
Կվայելեն հանգիստ քուն.
Պատի՛ր ինձ քո պատանքում,
Օ՜, մթություն ցրտագին:[37]

Բոլոր արվեստագետները որոնում են իրենց գեղագիտական իդեալը: Անընդմեջ փնտրտուքները երբեմն ապարդյուն են ու անպտուղ: Վ. Թեքեյանի ձևակերպմամբ՝ «ուկեթել աստղերը» բոդլերյան «կուռքի» նույնական սիմվոլիկան են՝ որպես իդեալի հնարավոր մարմնավորում, որին ձգտում ու փնտրում են, իսկ երբ չեն հասնում կամ չեն գտնում, նրանց Կապիտոլը դառնում է Մահը[38]՝ որպես իդեալի փնտրտուքի խորհրդանշական ավարտ: Արվեստագետին այլ բան չի մնում, քան բարեկամանալ Մահի հետ, պատրաստ լինել գնալու մահվան հետևից, ինչպես զավակը՝ ծնողի.

Մահ գեղեցիկ, Մահ վսեմ,
Կը սպասէի քեզի ես
Ու հետդ ահա կը քալեմ՝
Խելօք ու լուռ զաւկիդ պէս[39],-

գրում է Վ. Թեքեյանը:

Քանի դեռ մահը հեռու է, նրա մասին մարդիկ խոսում են թեթևացած ու շարունակում նույնքան թեթև ընդունել «մահահրավերները», սակայն մահվան մեծացող հասակը և մերձեցումը այդ հասակին պարուրում են բանաստեղծին լուրջ և ուժեղ մտածումներով: Մահվան հավերժությունը պատրաստվում է «առնել» բանաստեղծի անցավոր կյանքը, ու մահվան անունը որոճացող բանաստեղծը կամացկամաց գնում է դեպի մթողող գուբը, որով դարեր են անցել, և որը սպասում է դարերի:

Կյանքի և մահվան խորհրդի թեքեյանական դրսևորումները արձագանքվում են արևելահայ գրականության բարձրագույն գագաթներից մեկի՝ Վահան Տերյանի պոեզիայում: Նրա համար մահը մի դեպքում «դաժան» է , մի այլ պահի՝ «քույր», մի դեպքում «թույն», բայց և մյուս ակնթարթին «թախիծ», «ցուրտ համբույր», «այրող բոց» և այդ հակադրություններ մեջ մահը մնում է բանաստեղծի համար անվախճան ու անհագուրդ սիրո աղբյուր:

Փռված եմ ահա քո գեղեցկության,
Քո անքննելի կարողության դեմ...
-Հայտնվի՛ր անհուն փայլով ու փառքով,
Ժպիտդ փռի՛ր իմ երկրի մթում...[40]

Նրբանկատ ու սուր է մահվան տերյանական խորհրդի այն մեկնությունը, որ տալիս է լիբանանահայ բանաստեղծ Մուշեղ Իշխանը. «Մահը իր աչքին կը ներկայանայ իբրեւ ամենաբոյժ եւ ամենակալ հանգստարան, իբրեւ գերագոյն լռութիւն, որուն մետաքսէ թեւերը պիտի փռուին իր վէրքերուն վրայ եւ անհունօրէն պիտի օրօրեն իր մեծ նինջը»[41]:

Կյանքի և մահավան գեղարվեստական հարցադրումները հետաքրքիր նշանառությամբ բացվեցին արևմտահայ գրականության վերջին ներկայացուցչի՝ Մատթեոս Զարիֆյանի բանաստեղծություններում: Զինադադարից հետո ընթերցողի սեղանին դրված երկու վտիտ ժողովածուները՝ «Տրտմութեան եւ խաղաղութեան երգեր» (1921), «Կեանքի եւ մահուան երգեր» (1922), բացում էին Պ Դուրյանի, Մ. Մեծարենցի, Վ. Տերյանի բախտակից պոե-

[34] Նույնը:
[35] Брюсов Валерий, Избранные сочинения, Москва, 1980, стр. 115:
[36] Блок Александр, Собр. соч в 7 – и томах, т. 1 Москва, 1973, стр. 68.
[37] Շառլ Բոդլեր, Չարի ծաղիկներ, էջ 137:
[38] Կապիտոլը բլուր է Հռոմում, որի գագաթին կառուցված է Յուպիտերի տաճարը: Բառն ունի գործի, ճանապարհի ավարտի փոխաբերական իմաստ:
[39] Վահան Թեքեյան, Հատընտիր, էջ 62:
[40] Վահան Տերյան, Բանաստեղծությունների լիակատար ժողովածու, Եր., 1985, էջ183:
[41] «Հասկ»/Հայագիտական տարեգիրք, Նոր շրջան, Անթիլիաս - Լիբանան, Ա տարի, 1980, էջ 45:

տի՝ կյանքի և մահվան խոր փիլիսոփայության փնտրտուքների աշխարհը: «Մահուան այդ տժգոյն խոսեցողներու մէկ անդամը»[42] (բնութագրումը Արշակ Չոպանյանինն է.- Վ. Դ) լինելով՝ Մ. Զարիֆյանը իր բանաստեղծական աշխարհի մեջ կրում էր ֆրանսիական սիմվոլիստական գրականության քնարապաշտ ազդեցությունը, թեև ինքնուրույն պատկերներն ու հուզական ինքնեկ շեշտերը ակնբախ էին ու անթաքույց:

Մ. Զարիֆյանը բաց է միջավայրի առաջ, խառնվածքով հեռու ինքնասույզ մելամաղձից: Մահվան շուրջ անդադար խորհրդածությունները չեն մղում նրան ինքնամեկուսացման կամ դուրյանական դառնաղի հիասթափության: Տրտմությունից դեպի խաղաղություն ձգտող բանաստեղծի հոգին կենսասիրության գիտակցությամբ անտեսում է մահվան սարսուռները՝ սեփական հաղթանակը ամրագրելով մահվանն ուղղված անզիջ հեգնանքով: «Անսահաման ծիծաղ մ՚ ունիմ քեզի դէմ»[43],- հանդուգն նետում է բանաստեղծը: Նա լավ գիտի, որ մահը չի կարող կասեցնել մարդկային մտքի սուրանքը՝

Եւ այս վարդով, այս գարունով
Կը հեգնեմ Ան, որ կուգայ.
Ան որ կուգայ՝ հողին քունով
Քընացընել Յաւն յսկայ…[44]

Մահին դիմագրավելու այս յուրահատկությունը հիշեցնում է սփյուռքահայ արձակագիր Վազգեն Շուշանյանին, որը մահվան դեմ տարվող հաղթանակը գտնում է կյանքի գեղեցկության և հրճվանքի մեջ: «Մեռնելու հաճոյքը,- կ՚ ըսեմ տրտում, ամէն օր մեռնելու հաճոյքը գաղափարի ու յաղթանակի համար, ամէն օր, հանապազօր կռուի ընթացքին»[45]: «Մեռնելու հաճույքը», որքան էլ պարադոքս է ու զարմանալի, օգնում է արվեստագետին նոր գաղափարների, նոր հաղթանակների համար հանապազ մղվող կռվով իմաստավորելու կյանքը, զորացնելու հույսի ներապրումը[46]:

Մահը կուգայ իր արծաթէ մանգաղով.
Եկուր, քնար, դէմ զանք անոր նոր տաղով[47],-

արարման պատրաստակամությամբ հորդորում է Մ. Զարիֆյանի քնարական հերոսը:

Տառապանքի և մահվան ճակատագրական անհույս փնտրտուքները Մ. Զարիֆյանի աշխարհում պսակվում են խաղաղության սփոփանքով: Տառապանքը սովորեցնում է բանաստեղծին ճիշտ և ճիշտ Վ. Շուշանյանի հերոսի կանխազգացումների պես: Մահվան հետ հավանական հանդիպումը կյանքի պահած «ապերախտություն է»: «Կ՚ ըսեն թէ մահը մէկ է... Մահը մէկ չէ, ու փառաւոր վախճաններ կան, որ երբեք իմս պիտի չըլլան: Եղկելիօրէն պիտի մեռնիմ՝ կրելով այս կմախքին վրայ անաւարտ ու աղարտեալ կեանքի մը բեռը»[48],- գիշերային տվայտանքներին է տրվում Վ. Շուշանյանի հերոսը:

Հաճույքները ապրեցնում են մարդուն, իսկ սիրո հաճույքը՝ առավել ևս: Սիրային մտերմությունը զորեղացնող է, և նույնիսկ ճամփան, «որ զիս մահուան պիտի տանի, կըլլայ այնպէս ընտանի»[49],- խոստովանում է երազի, կյանքի և մահվան երգիչը՝ Մ. Զարիֆյանը: Երազները կարևոր են մարդու համար: Երազալի «մարդու օրհասը շքեղ է»,-բոլորի համար անակնկալ եզրակացնում է Մ. Զարիֆյանը: Լավ է, երբ մարդու հոգին ճախրանք ունի, վերելքի ուղղագնա ճանապարհ՝ որի հանգրվանը Անհունն է: Այդ Անհունը մենք սովոր ենք չափել թումանյանական կշռաքարով, որի ծանրությունը համամարդկային խոհերին բարձրից նայողի ամենատեսությունն է, այնինչ Մ. Զարիֆյանը նախընտրում է Սիրո առջև խոնարհաբար ծնրադրումը՝ քաոսից ու անդունդից դեպի աստղերի Անհունը բռնած ուղղաթռիչ վերելքի նպատակամղմամբ: Սիրո ոստայնը իր մեջ է առնում բանաստեղծի հոգին, պարուրում հեթանոսական վայելքի ազատությամբ ու հանդգնությամբ: Հեշտանքի գինին պարպելուց հետո սանձարձակ համարձակությամբ քերթողը ծաղրում է «այս կեանքին սրբութիւնները դժխեմ»: Ազատությունն ու

---

42 Արշակ Չոպանյան, Երկեր, Եր., 1988, էջ 679:

43 Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, Եր., 1991, էջ 686:

44 Նույնը, էջ 671:

45 Վազգէն Շուշանեան, Երկիր յիշատակաց, Եր., 1966, էջ 208:

46 Սփյուռքահայ հանճարեղ գրող Կոստան Զարյանն իր «Միացյալ Նահանգներ» գրքում հետևյալ ձևակերպումն է անում. «Եվ մահը ուրիշ բան չէ, եթե ոչ նախածընունդ»՝ կարծեք հավելվելով Վ. Շուշանյանի՝ «մահվան հաճույքի» հայտնի ձևակերպմանը՝ որպես հաղթանակի, գաղափարի, գործի ծնունդի նախապայման: Կոստան Զարյան, Միացյալ Նահանգներ, Եր., 2002, էջ 242:

47 Արշակ Չոպանյան, Երկեր, էջ 676:

48 Վազգէն Շուշանեան, Ընտրանի, Եր., 2010, էջ 386:

49 Ցեղին սիրտը, Արևմտահայ բանաստեղծություն, էջ 685:

վայելքը դառնում են հորդահոս, բայց ոչ ինքնանպատակ: Ապրելու հեթանոս բովանդակությունը առաջին բնագծի վրա է պահում մահվան՝ պայմանականություններից դուրս ներկայությունը:.

Լեցու՛ր, լեցու՛ր, որ խմեմ,
ՄԱՀՆ է ահա աչքիս դէմ[50],-

գրում է Մ. Զարիֆյանը:

Բանաստեղծի չդադարող կենսասիրությունը անթաքույց է ու զարմացնող: «Տէ՛ր Աստուած, արդեօք ուշ չէ՞» - կրծող կասկածանքը չի թուլացնում կյանքը՝ որպես հոյակապ հրաշալիք ընկալելու քերթողի անհատնելի կարողությունը:

Հակադրվելով սիմվոլիստներին հարազատ մահվան առաջնայնության գեղարվեստական սկզբունքին՝ Մ. Զարիֆյանը ծառանում է մահվան դեմ, փարվում կյանքին՝ «իր կմախքացած բազուկների ողջ յուսահատութեամբը» պաղատելով նրան չլքել իրեն:

Մ. Զարիֆյանի «հայտնաբերած» գեղարվեստական կարգախոսը՝ «կյանքի և մահվան երգեր», ներհատուկ եղավ սփյուռքահայ բանաստեղծության ամենից տեսլապաշտ և երազալի պոետին՝ Մուշեղ Իշխանին: Կյանքի և մահվան խորհրդածությունները ծրագրային նշանառությամբ բացվեցին հատկապես «Տառապանք» (1968), «Արեւամար» (1986) ժողովածուներում, որոնցից մասնավորապես վերջինի խորագիրն արդեն հուշում էր մահվան անբացառելի ներկայությունը:

Կյանքը երազ դարձրած և երազը կյանքի պես ապրող ռոմանտիկ Մ. Իշխանը, փորձելով նորովի բացահայտել տառապանքը, չի թաքցնում իր անհաշտությունը իրական կյանքի հետ և միաժամանակ փարվածությունը երազին ու ցնորքին:

Մարդն իր ծնունդով յուրաքանչյուր օր արշավում է դեպի մահը՝ ձեռքում պահած մահվան տոմսակը՝ հիշեցնելով շոպենհաուերյան այն շողարձակող միտքը, թե մարդն իր կյանքի ընթացքում ամեն պահ սպասում է մահվան և զնում նրան ընդառաջ: Կյանքը դառնում է մի յուրատեսակ հերթափոխ՝

Նախ յուղարկաւոր, ապա՝ ուղեւոր
Մարդիկ փոխն ի փոխ, մարդիկ գլխիկոր
Կը քալեն մահուան…

Ու կեանքը երբէք չ՚ըներ յուսախաբ
Ան, որ յարաշարժ կամ կիսամըրափ
Կը սպասէ մահուան…[51]

Սակայն այս կյանքում «սարսափելին մահը չէ», այլ մահվան զուգադրությամբ կյանքում ֆիզիկապես ապրողի բութ, բացակա գոյությունը: Նույնն է ճամփան հինգ դար առաջ, հինգ դար հետո, երեկ, այսօր, սակայն տաղտուկը նույնաձև օրերի հերթափոխի մեջ չէ, այլ կյանքի ալիքի բացակայության: Մարդու կենսազուրկ գոյությունը ձանձրացնում է:

Կ՚ըսեն շատ կարճ է կեանքը,
Շուտ կ՚կասի սրտին զարկը,
Բայց արեւուն տակ ծիրանի
Երիտասարդ ու ծերունի
Ահա կեցած շարան-շարան
Կ՚ձանձրանան...[52]

Մ. Իշխանից շատ առաջ արևմտահայ բանաստեղծ Ռուբեն Սևակը ևս փորձում էր ճշգրտել մարդ-մահկանացուի կեցության ուղենիշը, ինչը ընդգծում է երկու քերթողների բանաստեղծական հոգեհարազատությունը, պատկերային և ոճային մերձավորությունը:

Ահա՛ Մարդերդ: Ահա՛ Մարդերդ ալ,
Աստվա՛ծ,
Տխուր հյուրերն այս հրաշագեղ աշխարհին,
Թափառական, վաղորդայնե՛ն ընկճված,
Ճղճիմ, թշվառ, հողին կառչած, ախտագի՛ն:

Ճակատագրին մտրակին տակ խելահե՛ղ,
Անոնք կուլան ու կը վազեն մտացի՛ր,
-Իրենց ճակտին վրա Մահվան գիրն ահեղ-
Անոնք զոր Դուն պատկերիդ վրա ձևեցիր:[53]

Մահվան գաղափարը մղում է մարդուն հաշվեփակի, հաշվեհարդարի: «Կյանքս ըրած կայարան» գերխիտ պատկերային կառույցը զարմացնում է իր դիպուկությամբ: Շուրջը մարդիկ են, աղմուկ, կապած ծրար, պայուսակ, իսկ քնարական հերոսը սպասում է երջանկության և բախտի բացառիկ ճեպընթացին:

Սպասում չունեցող մարդը, որ վաղուց հուղարկավորել է սեփական հավատն ու սերը, դառնում է ստվերի պես մոլոր ու թափառիկ: Քայլերի աննպատակ ու ինքնանպատակ ընթացքը «ոչ մէկ տեղ կը տանին»,- ազդա-

[50] Նույնը, էջ 692:

[51] Մուշեղ Իշխան, Արեւամար, Պէյրութ, 1986, էջ 139:
[52] Նույնը:
[53] Ցեղին սիրտը, էջ 561:

բարում է Մ. Իշխանը: Մնում է քարշ տալ օրերի անիմաստ բեռը սեփական տկար ուսերի վրա՝ որպես անպատասխանատու կեցություն և ապարդյուն գոյություն:

Ալ չես գիտեր՝ որն է վատ,
Ո՞րն է իրաւ, ո՞րը սուտ,
Օրերու բեռն անիմաստ
Այդպէս շալակած ուսերուդ:[54]

Բանաստեղծի կողմից կյանքի և հավերժության հարցերի նորովի քնությունը հիացնում է մեզ: Սահամանափակ դիպախաղի հմուտ կիրառությամբ մեր առջև հաջորդիվ գալիս են նույն հերոսի երկու երեսները՝ մեկը՝ անցյալի փորձառությամբ, «մրգահասի լիությամբ» ծանրաբեռ ավագ ես-ը, մյուսը՝ անփորձ պատանին՝ ներկայով ապրող, հիացող ու զարմացող, որպես մյուս ես-ի շարունակություն: Սերունդները հաջորդում են իրար, մեծ Թումանյանի բանաձևմամբ՝ «Հերթով գալիս, անց ենք կենում էս անցավոր աշխարհից»[55]: Կարևորը ապրելուց հետո հետազիծ թողնելն է՝ թումանյանական այն ոսկե պատգամի համաձայն, թե՝ «Մահը մերն է, մենք մահինը,/ Մարդու գործն է միշտ անմահ»[56]՝ չմոռանալով, որ ամեն ինչ կատարվում է պատմության անաչառ հայացքի տակ:

Երբ սիրավառ ու հիացիկ կը նայիս դուն
Գարնան շքեղ ծաղիկներուն ու ծառերուն,
Յիշէ՛, որ նախ քեզմէ առաջ ե՛ս նայեցայ,
Եւ աչքերուս լոյսը պայծառ հող է հիմայ:[57]

Բանաստեղծական այս տողերը իրենց նշանակությամբ և ճանաչողական խորքով համարժեք են Ավետիք Իսահակյանի «Ռավեննայում» բանաստեղծության մեջ հնչող հետևյալ խոր կենսափիլիսոփայությանը.

Հերթը հիմա քոնն է մի պահ.
Դու էլ նայիր սեգ ճակատին
Ու անցիր...[58]

Այս կյանքում ամեն մի բարձունք նայում է հավերժական վիհին, ու «տարօրինակ, տարօրինակ մարդ արարածը» շարունակում է ապրել՝ չհավատալով մահվան հնարավոր ներկայությանը:

Կը զգաս դէմքիդ մահուան քամին եւ հողմաւար,
Կ՚իյնայ անշունչ, սակայն մահուան չես հաւատայ[59],-

հեգնում է Մ. Իշխանը: Այնինչ մահը միշտ եղել է, երբ մենք դեռ չկայինք, մահն իշխել է դարեդար, գրքերը պատմել են իր մասին, մարդիկ լսել են, բայց չեն հավատացել: Մահվան անկորնչելի ներկայությունը որպես անշարժ շիրմաքար, որպես կմախք, գանգերի ցուրտ ծիծաղ, մարդկանց շուրջը պար է բռնել, սակայն այն միշտ թվացել է սուտ ու անիրական: Ու երբ մահն իր «զոհին» սկսել է փնտրել այնտեղ, ուր քնարական հերոսը տաք ու թվացյալ ապահով բույնն է հյուսել, այլևս աներկբա է եղել, «թէ իսկապէս մահը կայ» :

Հաճախ է բանաստեղծը զարմանալի ձևակերպումներ տալիս մահվան սպասումի վեբաբերյալ: Մենք բոլորս այս կյանք գալիս ենք «անցվորի» անգիտությամբ, ապրելու հերթափոխը անցնում է սերնդից սերունդ և օրվա անցուդարձի մեջ ինքնամոռաց՝ չենք գիտակցում մեր բռնած ուղու հանգրվանը: Մ. Իշխանը սթափեցնում է մեզ.

Նախ՝ հուղարկավոր, ապա՝ ուղևոր
Մարդիկ փոխնիփոխ, մարդիկ՝ գլխիկոր
Կը քալեն մահվան:

Սակայն պետք չէ կարծել, թե Մ. Իշխանը հոռետես բանաստեղծ է: Կյանքի և մահվան հակամարտ դրսևորումը, նորովի բացահայտելով անուղղա ռոմանտիկ հեղինակի անհաշտությունը կյանքին, միաժամանակ ցույց է տալիս աշխարհի ցավով հիվանդ բանաստեղծի կապվածությունը նույն աշխարհի հնքին:

Այսպիսով, զարականության տեսաբանների կողմից «հավերժական թեմա» բանաձևումը իր սահմանների մեջ է առնում կյանքն ու մահը: Գրականության մեջ մահվան գերակա ներկայությունը, մահվան չափումի խորությունը մնում են տիրական ու աննվաճ: Առեղծվածային ծնունդի և նույնքան առեղծվածային մահվան փնտրտուքները թվում է, թե հասցնում են մեզ իմացականության սահմաններին, սակայն կյանքի ստեղծագործական ընկալման տրամաբանությունը, նրա նկատմամբ խորքային մոտեցման արդյունքները կրկին մնում են կիսատ ու շարունակելի:

---

[54] Մուշեղ Իշխան, Երկեր, Եր., 1990, էջ 220:
[55] Հովհաննես Թումանյան, Ընտիր երկեր, հ. 1, Եր., 1985, էջ 287:
[56] Նույնը, էջ 288:
[57] Նույնը, էջ 214:
[58] Ավետիք Իսահակյան, Երկ. ժող. 6 հատորով, հ. 1, Եր., 1973, էջ 328:
[59] Նույնը:

Теоретические предпосылки социологического исследования

Григорьян Э.Р.
Кафедра социологии и социальной работы Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна (Армения, Ереван)
ernestgrig@hotmail.com

Ключевые слова: теоретические предпосылки, социологическое исследование, социальная гармония, социальная энергия, аттрактор

Սոցիոլոգիական ուսումնասիրության տեսական նախադրյալները

Գրիգորյան Է.Ռ.
Խ. Աբովյանի անվ. Հայկական պետական մանկավարժական համալսարանի սոցիոլոգիայի և սոցիալական աշխատանքի ամբիոն (Հայաստան,Երևան),
ernestgrig@hotmail.com

Ամփոփում: Լուրջ սոցիոլոգիական տեսության բացակայությունը զրկում է էմպիրիկ հետազոտության մշակման ու իրականացման ուղղորդման հնարավորությունից, որի եզրափակիչ հատվածը՝ կապված արդյունքների մեկնաբանության հետ, վերա է ածվում բացարձակ կամայականության: Միևնույն ժամանակ, Երկրի վրա ընթացող գործընթացները կարգավորող բնական ընդհանուր օրինաչափությունները կոշտ խոչնդոտներ են դնում սոցիոլոգիական երևակայության թռիչքի առջև՝ ապագայում «դրախտային» կյանքի խոստումներով: «Սոցիալական ներդաշնակության մաթեմատիկայի» ձևաչափով վերջին տարիներին իրականացված մշակումները վկայում են այդ սոցիալական գործընթացների դետերմինացվածության մասին ձևաչափում գտնված ալգոթիփմերի ու տատանողական ուրվագծերի հետ: Ուստի, ինչպիսին էլ լինի սոցիոլոգիական ուսումնասիրության ոլորտը, այն անպայմանորեն պետք է հաշվի առնի այդ մոդելները և հիմնվի դրանց վրա՝ որպես իր սեփական տեսական նախադրյալների:
Վճռորոշ բառեր՝ տեսական նախադրյալներ, սոցիոլոգիական ուսումնասիրություն, սոցիալական ներդաշնակություն, սոցիալական էներգիա, ատտրակտոր

Theoretical Background of the Sociological Research

Grigoryan E.R.
Department of Sociology and Social Work of the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (Armenia, Yerevan)
ernestgrig@hotmail.com

Abstract: The absence of a serious sociological theory deprives the helm and sails of the development and conduct of empirical research, whose final part, associated with the interpretation of the results, almost no different of a pure voluntarism. At the same time, the general natural laws that regulate all processes on Earth put severe obstacles to the flight of sociological imagination with its promises of "paradise" life in the future. Developments of recent years, performed in the format of "Mathematics of social harmony", indicate the hard determination of social processes by algorithms and oscillatory contours, found in this format. Therefore, whatever the field of sociological research it be, it should take into account these models and rely on them as its theoretical background.
Keywords: theoretical background, sociological research, social harmony, social energy, attractor

Социологические исследования исходят от презумпции частичного незнания потребностей и реакций общества, которые и надо выявить. Между тем развиваемый мною подход предполагает, что в исследованиях приоритетными являются теоретические и даже априорные соображения, отражающие важные показатели силы, устойчивости и сопротивляемости общества различным деструктивным процессам. Они лежат в основе той конструкции общества, которая должна неизбежно поддерживаться, если общество еще живо. Как естественно возникающая конструкция, она имеет неотъемлемые характеристики и необходимо присущие ей компоненты. Этот подход к исследованию чаще присущ инженерной деятельности, когда исходя из за-

мысла конструкции изготавливают деталь или прибор с требуемыми характеристиками. Если же социолог исследует общество или его часть, не зная замысла этого общества, то он искусственно его суживает до масштабов отдельного агрегата, с позиций которого ведется исследование.

Теоретическими показателями, с которыми должно сообразоваться любое общество, являются его гармоничные отношения с окружающими его обществами, с природой и внутренними институтами. К сожалению, мировой социальный организм настолько истерзан многочисленными отклонениями, что принимать его нормы в качестве образцов следует крайне осмотрительно. В целом, обобщенный показатель силы отдельного общества, коль скоро оно еще существует, должен превосходить по величине силы, совокупно действующие на его разрыв. Это предполагает, что в каждом фрагменте общества инкорпорируемый социальный капитал значит больше, чем индивидуальные социальные капиталы составляющих этот фрагмент частей. Это означает, что скорее разорвется связь между родственниками или друзьями, нежели будет проигнорирована принадлежность к более широкой социальной группе, например, производственной или гражданской. Точно так же социальный капитал, аккумулированный в рамках всего общества, значит больше, чем социальный капитал какого-либо из его фрагментов. Соответственно этому капиталу выстраиваются отвечающие требуемой крепости общества социальные нормы, которые прививаются детям, прокламируются в общественных процессах и институционализируются в государственных и образовательных институтах. Конечно, в зависимости от международной конъюнктуры, нормы испытывают незначительные колебания, но в целом этот каркас норм обеспечивает автономное функционирование общества. Эти социальные нормы, продуцируемые особо выделенными и соответствующими институтами, интегрируют многочисленные социально-правовые нормы, касающиеся остальных различных институтов общества, его международных подразделений, а также нормы всех остальных, бытующих в данном обществе видов деятельности. Конечно, конфликты между нормами неизбежны, и они составляют проблемное поле данного общества. Которое, если не рассасывается путем решения проблем, начинает представлять лакомый кусочек для враждебных сил.

